«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆԿՐԹՈՒԹՅԱՆՈՐԱԿԻԱՊԱՀՈՎՄԱՆԱԶԳԱՅԻՆԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2020

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ ՀԱԱՀ կամ համալսարան) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ՀԱԱՀ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, տեղացի և միջազգային փորձագետների առջև դրված էր երկու խնդիր.

1) իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն զեկույցը պարունակում է ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԵԲԿՏ ինտեգրվելու տեսանկյունից:

Բովանդակություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ....12

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....18

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆԽՄԲԻԿԱԶՄԸ....18

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆԸՆԹԱՑՔԸ....18

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....22

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....22

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ....24

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ....27

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ....31

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ....37

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ....42

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ....46

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....50

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ....57

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ....62

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ....68

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....72

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....73

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....73

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....75

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....81

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ....82

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....83

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ՀԱԱՀ-ն համաձայն 2018թ. դեկտեմբերի 25-ին ընդունած առաքելության ձգտում է.

- պատրաստել ագրոտեխնոլոգիական ուղղվածությամբ մասնագետներ՝ ունակ իրենց մասնագիտական հմտություններով և ոլորտի շահակիցների հետ համագործակցությամբ զարգացնելու երկրի գյուղատնտեսական գործունեությունը,
- խթանել Համալսարանի գիտական ներուժը՝ առաջարկելով առաջընթացի լավագույն լուծումներ,
- ներդնել խելացի տեխնոլոգիաներ՝ օգտագործելով և ցուցադրելով գիտելիքահենք տնտեսության օգուտները:

ՀԱԱՀ-ը 2015 թվականին անցել է հավատարմագրման գործընթաց ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով, որի արդյունքում հաստատությանը շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

2018 թվականից սկսած համալսարանը գտնվում է ինտենսիվ բարեփոխումների և անցումային ժամանակաշրջանում, այդ իսկ պատճառով բուհն առաջնորդվում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի բարեփոխման և զարգացման ծրագրով»: ՀԱԱՀ-ում կա մշակված անցումային մեկ տարվա համար գործողությունների պլանը և 2020-2024 թվականների ռազմավարական ծրագիր, որում համալսարանը կարևորում է իր գործունեությամբ նպաստել ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ այս անցումային ժամանակաշրջանում համալսարանը պարբերաբար վերլուծություններ իրականացնի և առաջնորդվի հստակ պլանով:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՀԱԱՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունըհամապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը: Փորձագիտական խումբը դրական է համարում շահակիցների մասնակցությունը ռազմավարական պլանավորման գործընթացում, մասնավորապես ՀԱԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների, որոնք հանդիսանում են ագրարային ոլորտի, պետական մարմինների, բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ակտիվ ներկայացուցիչներ:

[1]Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների իքնակենսագրականները

Փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում, որ ներքին շահակիցներն առավել ակտիվ ներգրավվածությունը ռազմավարական խնդիրների պլանավորման և լուծման գործընթացում:

Փորձագիտական խումբը նշում է, որ դեռ մշակման փուլում են ռազմավարական ծրագրի գնահատման համար գործունեության առանցքային ցուցանիշները (ԳԱՑ-երը), որոնց վերջնական ներդրումից հետո ավելի տեսանելի կլինի բուհի առաջընթացը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել են կառավարման համակարգի որոշակի բարելավումներ օպտիմալացման, արդյունավետության բարձրացման տեսքով, և նոր ռազմավարական ծրագրում 2020-2024 թվականներին նախատեսվում է ունենալ նոր կառավարման մշակույթ, համալսարանի ռազմավարական նպատակներին համապատասխան մարդկային ռեսուրսներ,արդյունավետ գործող ու թափանցիկ կառավարման համակարգ:

ՀԱԱՀ-ի հինգ ֆակուլտետներում առկա և հեռակա համակարգերում իրականացվում են 44 բակալավրի, 37 մագիստրոսական և 9 ասպիրանտական կրթական ծրագրեր:Համալսարանի ինքնավերլուծության մեջ ներկայացված բակալավրի և մագիստրատուրայի 3 ՄԿԾ-երը մասամբ համահունչ են առկա ՌԾ-ին, որը գործում է մինչև 2020 թվականը, սակայն համահունչ չեն առաջարկվող 2020-2024 թթ. ռազմավարական ծրագրին, քանի որ 2019/20 ուսումնական տարում փոփոխվել են ուսումնական պլանները, առանց մասնագիտական կրթական ծրագրերի մշակման: ՄՈՒՀ-ի ներկայացրած մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտահեն բաղադրիչը թույլէ և, ՄՈՒՀ-ի որդեգրած առաքելությունը և տեսլականը՝ դառնալ հետազոտական գերազանցության կենտրոն, չեն արտահայտվում ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի առկայությամբ և համապատասխանաբար դրա գնահատմամբ: ՄԿԾ-երում առկա հմտությունների գնահատումը դեռևս հստակ չի իրականացվում, ներկայում շեշտադրվում է գիտելիքի ստուգումը: Փորձագիտական խումբը նշում է, որ մասնագիտական կրթական ծրագրերի կազմման համար ամբիոններում չկան համապատասխան որակավորված կամ վերապատրաստված ՊԴ անձնակազմ, որը խոչընդոտում է ՄԿԾ-ների համահունչ զարգացումը: Բուհն իրականացրել է ՄԿԾ-ների բենչմարքինգ օտարերկրյա որոշ բուհերի հետ, այնուամենայնիվ ՀԱԱՀ-ն չունի բենչմարքինիգի իրականացման հստակ մշակված քաղաքականություն և մեթոդաբանություն, իսկ բենչմարքինգի արդյունքների կիրառման օրինակները սակավաթիվ են:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀԱԱՀ-ը քայլեր է ձեռնարկել ակադեմիական ազնվության պահպանման համար, մասնավորապես գրագողության դեմ պայքարում ավարտական աշխատանքների էլեկտրոնային տարբերակների միասնական շտեմարանի ստեղծումը՝ աշխատանքների արտագրության, կրկնօրինակման փորձերը կանխելու նպատակով:

Փորձագիտական խումբը նշում է, որ թեև բուհում առկա են կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացը սահմանող փաստաթղթեր, այդուհանդերձ նախորդ հավատարմագրումից հետո ՀԱԱՀ-ում կրթական ծրագրերի կանոնակարգված և համալիր մշտադիտարկում չի իրականցվել:

2020-2021 ուստարվա ՀԱԱՀ-ի ուսանողների ընդունելության քաղաքականությունը փոփոխության է ենթարկվել կառավարության որոշմամբ, և ընդունելությունն իրականացվելու է միասնական քննությունների արդյունքների հիման վրա, իսկ մինչ այդ որոշումը համալսարան հիմնականում ընդունվել են դպրոցներում միջին կամ միջինից ցածր սովորող ուսանողներ:

Արդյունքում աճել է ուսանողների թվաքանակը, սակայն մյուս կողմից ուսանողների մոտ սկզբնական գիտելիքների պակասը ազդեցություն է ունեցել կրթության որակի վրա: Նման մոտեցման փոփոխությունը կհանգեցնի որակապես նոր մոտեցման ներդրման, իսկ բուհի կողմից դիմորդներին առաջարկվող նաղապատրաստական դասընթացները կապահովեն մեծաթիվ դիմորդների ներգրավման:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՀԱԱՀ աշխատակազմը մշտապես տրամադրում է ուսանողությանը աջակցություն կրթական ու սոցիալական հարցերում և փորձում է ուսանողներին վերաբերվող բոլոր խնդիրներին տալ համապատասխան լուծումներ, սակայն համալսարանի ուսանողական խորհրդի գործունեությունը միտված չէ համապատասխան խնդիրների վերհանմանը և ուսանողների իրավունքների պաշտպանությանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ ՀԱԱՀ-ը կարևորում է բարձր մասնագիտական որակներ ունեցող դասախոսներով ապահովվածության անհրաժեշտությունը, և համալսարանում առկա են պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության, մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և տարբեր ընթացակարգեր: Սակայն 2018 թվականի փոփոխություններից հետո մի քանի օպտիմալացումների արդյունքում պրոֆեսորադասախոսական անձնակազմի նոր մրցույթներ չեն իրականացվել: ՄՈՒՀ-ում առկա են բարձր որակավորում ունեցող անձակազմ, միևնույն ժամանակ որոշ մասնագիտությունների գծով սերնդափոխության սահուն իրականացման վտանգ կա, քանի որ նեղ մասնագիտական առարկաների գծով մասնագետները շատ չեն: Համալսարանում պարբերաբար անցկացվում են դասախոսների վերապատրաստումներ և որակավորման բարձրացման միջոցառումներ, ինչպես նաև միջազգային ծրագրերի շրջանակներում կատարվում են դասախոսների վերապատրաստումներ: Փորձագիտական խումբը կարևորում է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին ուղղված աշխատանքների հստակ պլանավորումը, որը բուհում իրականացվում է տարերայնորեն:

Փորձագիտական խումբը նշում է, որ համալսարանի և հին,և նոր ռազմավարական ծրագրերում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հետազոտությունը, սակայն ՀԱԱՀ-ում առկա չեն կարճաժամկետ և երկարաժամկետ հետազոտական առաջնահերթությունների ծրագրեր: Չնայած նրան, որ ՀԱԱՀ-ն ջանքեր է գործադրում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ, այնուամենայնիվառկա նյութատեխնիկական բազան չի համապատասխանում ժամանակակից հետազոտությունների պահաջներին, չի ծառայում նորագույն տեխնոլոգիական գիտելիքներով, կարողություններով և ունակություններով կադրերի պատրաստմանը: Արդյունքում համալսարանի գործունեությունը չի նպաստում միջազգային համագործակցության լիարժեք իրականացմանը հետազոտության ոլորտում: ՀԱԱՀ-ում բացակայում է նաև հետազոտության և զարգացման ոլորտում իրականացված աշխատանքների վերլուծությունը, ըստ որի սահմանված կլինեն քայլերի հերթականությունը մասնագիտական ոլորտում: Խիստ կարևոր է հստակ մեխանզիմների ներդրումը՝ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի կապի ապահովման նպատակով, որը կապահովի ուսանողների շրջանում վերլուծական և հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ներկայում ՀԱԱՀ-ն ջանքեր է գործադրում ենթակառուցվածքների և ռեսուրսների զարգացման ուղղությամբ: 2018-2019 ուստարվանից, ՀԱԱՀ-ում ղեկավարության փոփոխությամբ, բուհում կատարվել է առկա ենթակառուցվածքների և ռեսուրսների գնահատում, որի արդյունքում ենթադրվում է նրանց ռացիոնալ օգտագործման և

նորացման ուղիների պլանավորում և իրականացում: Սակայն, մասնագիտական լսարանները, լաբորատորիաները տեխնիկական միջոցներով վերահագեցման անհրաժեշտություն ունեն, կրթական վերջնարդյունքներն ապահովելու համար: Համալսարանի ֆինանսական միջոցները սահմանափակ են, ռեսուրսային բազայի հարստացումը հիմնականում կատարվում է միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում[2]:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ՀԱԱՀ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, որը բնութագրվում է ներքնից վերև պարբերական հաշվետվողականությամբ, ամփոփվում է ռեկտորի տարեկան հաշվետվությամբ, սակայն այս գործընթացը ֆակուլտետներում, ամբիոններում, լաբորատորիաներում հիմնականում սահմանափակվում է քանակական տվյալների ներկայացմամբ, բացակայում են համալսարանի ռազմավարական նպատակների, կրթական ծրագրերի կարիքների որակական վերլուծությունները, վերհանված թերությունների վերացմանն ուղղված քայլերի առաջարկները: Նախատեսվում է ներքին հաշվետվողականության նոր համակարգի ներդնումը համալսարանում, որը ենթադրում է ստորաբաժանումների ամենամյա ինքնավերլուծություն, գործունեության պլանավորում, իրականացում, մշտադիտարկում և բարելավում՝ հիմքում ունենալով գործողությունների գնահատման առանցքային ցուցանիշները:

Ողջունելի են բուհի ջանքերն ուղղված հասարակության հետ կայուն հետադարձ կապ ապահովելու մեխանիզմների ներդրմանը. սոցիալական տարբեր ցանցերում ՀԱԱՀ-ի տեսանելիության բարձրացմանը, որը նպաստում է բուհի վարկանիշի բարձրացմանը և հետադարձ կապի ապահովմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն իրողությունը, որ ՀԱԱՀ-ը պատշաճ ուշադրության է արժանացրել նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում արտաքին կապերի և միջազգայնացման վերաբերյալ կատարված խորհրդատվությանը և նկատելիորեն բարելավել է արտաքին կապերի ու միջազգայնացման գործընթացը: ՀԱԱՀ-ի միջազգայնացման գործընթացները համակարգող կառույցը՝ միջազգային կապերի դեպարտամենտը, կայացած, հստակ գործառույթներ ունեցող ստորաբաժանում է, որն իր գործունեության մեջ կիրառում է որակի ապահովման գործիքակազմը, իրականացնում է ինքնավերլուծություն, պարբերաբար հանդես է գալիս հաշվետվություններով, սակայն միջազգային կապերի դեպարտամենտը դեռ անելիքներ ունի միջազգային հետազոտական նախագծերում ՀԱԱՀ-ի մասնակցության և արտաքին կապերի ամրապնդման առումով:

Փորձագիտական խումբը կարևորում է ՀԱԱՀ-ի դասախոսների անգլերենի իմացության զարգացմանն ուղղված արդյունավետ ջանքերը և գոհացուցիչ համարում կարճ ժամանակում արձանագրած արդյունքները, միևնույն ժամանակ շարունակում է մտահոգիչ մնալ ուսանողների շրջանում օտար լեզուների տիրապետման խիստ ցածր մակարդակը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀԱԱՀ-ի ջանքերն ուղղված որակի ներքին ապահովման համակարգի ներդրմանը, շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: ՈԳԱ նոր կենտրոնը իր գործունությունը ծավալելու համար ունի ազատության մեծ շրջանակ, որը հնարավորություն է տվել այդ կառույցին կարճ ժամանակահատվածում բազմաբավալ աշխատանքներ կատարել: Կենտրոնի ներսում առանձնացնելով երկու բաժիններ՝ Որակի ապահովման և Կրթական բարեփոխումների, հնարավորություն է ստեղծվել առավել մանրամասն և հետևողական լինել որակի ապահովման գործընթացների կազմակերպման մեջ:

[2] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:

Համալսարանում որակի մշակույթը դեռևս կայացման փուլում է, ՀԱԱՀ որակի ապահովման մի շարք գործընթացներ գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում,սակայն փորձագիտական խումբը գնահատելի է համարում, որ որակի ապահովման համար պատասխանատու աշխատակազմը բավականին մոտիվացված է և քաջատեղյակ է բուհի խնդիրներին, ինչն էլ կնպաստի գործընթացների որակի շարունակական լավացմանը, բացահայտված խնդիրների լուծմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. ՀԱԱՀ-ի առաքելության, ռազմավարական նպատակների և խնդիրների համապատասխանությունը գյուղատնտեսական ոլորտի ազգային առաջնահերթություններին և ՄԱԿ-ի զարգացման նպատակներին:
2. Կառավարմանհամակարգում արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածությունը և որաշումների կայացման մասնակցությունը,
3. ՀԱԱՀ-ի կառավարման և վարչարարության հստակ քաղաքականության իրականացումը:
4. Ուսանողակենտրոն ուսուցման մշակույթի ակտիվ ներդնումը:
5. Դուալ կրթության նախադրյալների ստեղծումն ու իրականացումը:
6. Դասախոսների արտադրամասերում վերապատրաստումների պրակտիկայի ներդրումը:
7. Անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներգրավումը:
8. Միջազգային ծրագրերում ՀԱԱՀ-ի անձնակազմի ներգրավվածությունը, արտաքին կապերի պարբերաբար ընդլայնումը:
9. Համալսարանի ՈԱԳ բաժնի աշխատակիցների բարձր մոտիվացիայի առկայությունը որակի մշակույթի ձևավորման և զարգացման գործում:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Դիմորդների շեմային գիտելիքների ցածր մակարդակը:
2. Ոչ հստակ սահմանված վերջնարդյունքներով, ինքնավերլուծության չենթարկված ՄԿԾ-ներ:
3. Քանակական և որակական տվյալների հավաքագրման, դրանց հիման վրա հաշվետվությունների և վերլուծությունների մեթոդաբանության բացակայությունը:
4. Ագրարային ոլորտի զարգացման համար երկարաժամկետ և կարճաժամկետ գիտահետազոտական ծրագրերի և առաջնահերթությունների բացակայություն:
5. Գիտահետազոտական և ուսումնական գործընթացների թույլ կապը, գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության պակասը:
6. ժամանակակից կրթության պահանջներին չհամապատասխանող ենթակառուցվածքները, ռեսուրսները և ուսումնական լաբորատորիաները:
7. Հատուկ կարիք ունեցող ուսանողների համար պայմանների բացակայությունը:
8. Ներքին շահակիցների մոտ նախաձեռնությունների և իրենց վերաբերվող որոշումների կայացման մասնակցության պակասը:
9. Անգլերենի ցածր մակարդակը ուսանողների և դասախոսների շրջանում:
10. Դասախոսների մասնագիտական զարգացման հստակ քաղաքականության բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Պարբերաբար վերլուծել առաքելության և նպատակների իրականացման արդյունքները՝ ներդնելով քանակական և որակական ցուցիչների համապարփակ համակարգ:
2. ՀԱԱՀ-ի ռազմավարական պլանավորման և իրականացման գործընթացներում առավել ակտիվ ներգրավել ներքին շահակիցներին:
3. Մշակել և ներդնել ՀԱԱՀ-ի բոլոր ոլորտներնանդրադարձող ԳԱՑ-երը, թափանցիկ դարձնելով համալսարանի գործունեությունը և առաջընթացը:

Կառավարումն ու վարչարարությունը

4. Հստակեցնել ՀԱԱՀ-ի կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումները:
5. Կառավարման և վարչարարության ոլորտում ներդնել ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը հստակ որակական և քանակական ցուցիչներով:
6. Խթանել ներքին շահակիցների ակտիվ մասնակցությունը ՀԱԱՀ-ի տարբեր ոլորտներում որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև ապահովել հետադարձ կապ որոշումների թափանցիկության ապահովման նպատակով:
7. Հստակեցնել համալսարանի կառավարման, ստորաբաժանումների վերաբերյալ կանոնակարգերնու ընթացակարգերը,դարձնելով դրանք կիրառական:
8. Հստակեցնել տարբեր ստորաբաժանումների գործառույթները՝ մշակելով պաշտոնների անձնագրեր:

Մասնագիտության կրթական ծրագրերը

9. Հստակ պլանավորել ՄԿԾ-ների արմատական բարեփոխումները՝ ներգրավելով արտաքին և ներքին շահակիցների, ինչպես նաև ապահովել ներքին շահակիցների կարողությունների զարգացումը ՄԿԾ-ների բարելավումներ իրականացնելու ուղղությամբ:
10. Բարելավել վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականությունը՝ ապահովելով հետազոտական բաղադրիչի ներդրումը և պրակտիկ կրթության իրականացումը:
11. Բարելավել բազմաբաղադրիչ գնահատման համակարգը՝ շեշտադրելով պրակտիկ հմտությունների ստուգումը ինչպես միջանկյալ, այնպես էլ ամփոփիչ քննություններում:
12. Մշակել և իրագործել բենչմարքինգի իրականացման հստակ և պլանավորված քաղաքականություն՝ նպաստելով դասախոսական և ուսանողական կազմի շարժունությանը:
13. Մշակել և իրագործել ՄԿԾ-ների մշտադիտարկման հստակ և կայուն մեխանիզմներ՝ հիմքում դնելով ՊԻԳԲ շրջափուլի սկզբունքները:
14. ՄԿԾ-ների բարելավումների համար կիրառել ՀԱԱՀ-ում առկա լավ փորձի օրինակները՝ նպաստելով մրցունակ ՄԿԾ-ների գործարկմանը:

Ուսանողներ

15. Ստեղծել ուսանողների կարիքների գնահատման և վերհանման համապարփակ մեխանիզմ՝ ներգրավելով ՈՒԽ-ին այս գործընթացում:
16. Ուսանողների առաջընթացի ապահովման նպատակով հաճախակի բացակայող և հեռակա համակարգում սովորող ուսանողների համար ակտիվացնել լրացուցիչ պարապումքների և

խորհրդատվությունների համակարգված իրականացման պրակտիկան հստակ ժամանակացույցով:

17. Ուսումնական գործընթացում կապակցել հետազոտական և պրակտիկ հետազոտական բաղադրիչները, ինչպես նաև կապ հաստատել ֆերմերների հետ հետազոտություններ իրականցնելու նպատակով:
18. Ակտիվացնել ՈՒԳԸ դերկատարությունը, հաստատել համապատասխան խրախուսանքներ հետազոտություններ իրականացնելու նպատակով:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

19. Վերանայել դասախոսական կազմի մրցութային հավաքագրման և ընտրության քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ դրանք համապատասխանեցնելով սահմանված ռազմավարական նպատակներին:
20. Հստակ պլանավորել և իրագործել դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացման միջոցառումները՝ համապատասխան որակական և քանակական ցուցիչներով:
21. Պարբերաբար իրականացնել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի գնահատումներ՝ բազմազանեցնելով գնահատման ձևերը:
22. Մշակել և իրագործել հստակ պլան ապահովելու դասախոսկան կազմի երիտասարդացումն ու կայունությունը:
23. Օգտագործել ՀԱԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի հնարավորություններն ՀՀ կառավարության և գյուղոլորտի շահակիցների կապերի միջոցով վարչական և գիտամանկավարժական արհեստավարժ կադրեր բուհ բերելու գործում:

Հետազոտությունը և զարգացումը

24. Հստակ պլանավորել և իրականացնել ՀԱԱՀ-ի հետազոտական ոլորտի զարգացման քաղաքականություն և ընթացակարգեր:
25. Հստակեցնել ՀԱԱՀ-ի գիտահետազոտական ոլորտի հետաքրքրություններն ու հավակնությունները՝ներգրավելով արտաքին և ներքին շահակիցներին և ապահովելով լայն զանգվածների տեղեկացվածությունը:
26. Սահմանել և իրականացնել դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավումը խրախուսելու հստակ պլանավորված մեխանիզմներ և պարբերաբար վերլուծել դրանց արդյունավետությունը:
27. Պլանավորել և իրականացնել միջազգային հետազոտությունների իրականացման խրախուսման աշխատանքներ, ինչպես նաև ակտիվացնել կիրառական հետազոտությունների իրականացումը բուհում:
28. Մշակել հստակ մեխանիզմներ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխակամացման համար, ինպես նաև ապահովել ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ներդրումը և վերլուծական կարողությունների ձևավորումը:
29. Ժամանակակից և կիրառական հետազոտությունների համար տրամադրել ֆինանսական միջոցներ:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

30. Գիտակրթական ստորաբաժանումների (ֆակուլտետ, ամբիոն) մակարդակով կարճաժամկետ ու միջնաժամկետ պլանավորման գործընթացները զուգորդել ըստ ստորաբաժանումների բյուջետային պլանավորումներով:

31. Բուհի ներքին էլեկտրոնային ebսh կառավարման համակարգում մշակել և տեղադրել ինտերֆեյս ուսանողների համար՝ ուսանողների և դեկանատների ու վարչական այլ աշխատակազմերի միջև անմիջապես շփումները նվազեցնելու և վարչական աշխատակազմի բեռնվածությունը քչացնելու համար:
32. Իրականացնել ռեսուրսային կարիքների գնահատումներ, կապելով կրթության ու հետազոտության խնդիրները:
33. Պարբերաբար իրականացնել ռեսուրսային բազայի հարստացման աշխատանքներ՝հստակ պլանավորված աշխատանքների միջոցով:
34. Ժամանակակակից մասնագիտական գրականության ձեռքբերման նպատակով՝ ապահովել ֆինանսական միջոցներ:

Հասարակական պատասխանատվությունը

35. Մշակել և իրագործել արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրման և կարիքների վերհանման գործուն մեխանիզմներ՝ ապահովելով հասարկության հետ հետադարձ կապը:
36. Բուհում մշակվող հաշվետվությունները դարձնել վերլուծական և ըստ ռազմավարական նպատակների իրագործման արդյունքների:
37. Մշակել և իրագործել հասարկայունության հետ կապերի ամրապնդման հստակ քաղաքականություն՝ նպաստելով բուհի հեղինակության և թափանցիկության բարձրացմանը:
38. Շարունակաբար կատարելագործել բուհի կայքէջը՝ նպաստելով հաշվետվողականության բարձրացմանը:
    Համալսարանի կայքէջում տեղադրել մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը համապատասխան վերջնարդյունքներով:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

39. ՀԱԱՀ-ի գործունեության գերակա ուղղությունների հայեցակարգային, ռազմավարական փաստաթղթերը վերանայելիս ու վերաձևակերպելիս պահպանել բուհի զարգացման 2020-2024 թթ. ռազմավարական ծրագրի տրամաբանությունը՝ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման նպատակադրումները ներհյուսելով զարգացման ենթակա ոլորտի (կրթություն, հետազոտություն, ռեսուրսներ և այլն) խնդիրների պլանավորումներին:
40. Խրախուսել միջազգային կապերի դեպարտամենտում ազգարային տարբեր ոլորտների մասնագետների ընդգրկումը:
41. Ուժեղացնել փոխանակման, շարժունության ծրագրերի արդյունքում կուտակվող փորձը փոխանցելու քաղաքականություն:
42. Արտաքին կապերի ամրապնդման նպատակով ակտիվացնել տեղական բուհերի և կազմակերպությունների հետ համագործակցությունը:
43. Ստեղծել կապեր արտասահմանյան բուհերում աշխատող կամ սովորող շրջանավարտների հետ:
44. Ակտիվացնել անգլերեն լեզվի ուսուցման հնարավորությունները դասախոսների և ուսանողների համար:

Որակի ներքին ապահովման համակարգը

45. Ֆակուլտետային մակարդակում նշանակել որակի ապահովման գործընթացների պատասխանատուներ՝ապահովելով որակի մշակույթի տարածում:
46. Որակի ապահովման աշխատանքներն իրականացնելիս՝պարբերաբար համագործակցել բուհի առաջատար մասնագետների հետ՝ոլորտի խնդիրների արտացոլման նպատակով:

47. Ապահովել արտաքին շահակիցների ակտիվ ներգրավումը որակի ապահովման գործընթացներին:
48. Հստակեցնել հարցումների վերլուծությունների մեթոդաբանությունը, ինչպես նաև պարբերաբար վերլուծել որակի ապահովման գործիքների և մեխանիզմների արդյունավետությունը:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

1. **ՀԱԱՀ-ը հայկական իրականության մի մասն է:**

Ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների կառավարման համատեքստն, օրինակ, սկզբունքորեն տարբերվում է եվրոպական (արևմտյան) համալսարաններից: Հայաստանի Կառավարության կողմից տրամադրվող հասանելի ռեսուրսները և ուսանողների ներդրումը, հայկական համալսարաններում լրացուցիչ եկամուտ ապահովելու մշակույթի բացակայության հետ մեկտեղ հանգեցնում են ընդհանուր առմամբ անբավարար ենթակառուցվածքային համակարգի և ՊԴ կազմի համար ցածր աշխատավարձի:

ՀԱԱՀ-ը ոչ վաղ անցյալում նախապատվություն է տվել առավելագույն թվով աշխատակիցների, արդյունքում՝ աշխատավարձի համար հատկացվող գումարը բաշխվել է թվով չափազանց շատ աշխատակիցների շրջանում: Սա ենթադրում է ցածր աշխատավարձ յուրաքանչյուր աշխատակցի համար:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ՀԱԱՀ-ը կարող է գործել զգալիորեն ավելի քիչ աշխատակիցներով՝ միաժամանակ պահպանելով արդյունավետությունը և նույնիսկ բարձրացնելով աշխատունակությունը:

Սա կարող է նշանակել աշխատավարձի զգալի բարձրացում ամբողջ աշխատակազմի համար:

Յուրաքանչյուր կազմակերպություն ունի կյանքի ցիկլ՝ ներառյալ համալսարանները:

Եվրոպական համալսարանների մեծամասնությունը հարյուրավոր տարիների պատմություն ունի, ուստի՝ իրենց կառավարման համակարգը տարիների ընթացքում բարեփոխումների է ենթարկվել և հետևաբար այդ համալսարանները գտնվում են կայուն փուլում: Եվրոպական առավել երիտասարդ համալսարանները բավական կարճ ժամկետներում հաջողել են զարգացնել նույն կայունությունը:

Հայաստանի շատ համալսարաններ (դեռևս) չեն ավարտել այս գործընթացը և դեռևս տարբերակման փուլի մշակման մեջ չեն:

Վերջերս ՀԱԱՀ հոգաբարձուների խորհուրդը ընտրել է նոր ռեկտոր: Կարելի է նկատել, որ մոտ մեկ տարուց ի վեր բոլոր հիմնական պաշտոնները ստանձնել են նոր ղեկավարները: Այժմ ոչ բոլոր հաստիքներում, իհարկե, սակայն արդյունքները տեսանելի են ինչպես անձնակազմին և ուսանողներին, այնպես էլ՝ մասնագիտական ոլորտում, և չնայած դրանք հիմնականում առայժմ չեն համապատասխանում եվրոպական չափանիշներին, սակայն ներգրավվածության, բարի կամքի և տեսլականի տեսանկյունից ՀԱԱՀ-ը կարող է համարվել «ճիշտ ուղու վրա»:

Ընդհանուր գնահատում իրականացնելու երրորդ դժվարությունը վերաբերում է **ՀԱԱՀ-ում առկա տարբերությունների լայն շրջանակին**: Սա տեսանելի է ոչ միայն ենթակառուցվածքների

որակական տարբերությունների, այլև՝ կրթության որակի և, իհարկե, հետազոտական որակի տարբերությունների տեսանկյունից:

Լրացուցիչ դժվարություն է առաջացնում, կարծես, դրական փորձի սահմանափակ ազդեցությունը այլ բաժինների վրա: Ռեկտորը պետք է գտնի մոտեցում՝ ապահովելու գիտակցված և ուղղորդված անցում դրական փորձից (ICare կենտրոն, Գինու Ակադեմիա, Վանաձորի մասնաճյուղ) դեպի համեմատաբար քիչ զարգացած միավորներ: Այս համատեքստում մարզային մասնաճյուղերը ևս կարող են ծառայել որպես դրական փորձ:

Ուստի՝ առայժմ ՀԱԱՀ-ը «ուսանող» կազմակերպության տպավորություն չի գործում:

Դիտարկումներ.

Հետազոտության զբաղեցրած դիրքը համալսարանում:

ՀԱԱՀ-ում հետազոտությունը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին: Բացառությամբ մասնավոր դեպքերի, հետազոտությունը համալսարանի գերակա գործունեության մաս չէ: Խորհուրդ է տրվում առաջիկայում անհապաղ մշակել հետազոտության քաղաքականություն և տրամադրել անհրաժեշտ ռեսուրսներ և պարգևատրումներ հետազոտության համար, այնպես էլ՝ համալսարանի ուսումնական գործընթացում կիրառել հետազոտական մեթոդները և հետազոտությունների արդյունքները:

Հետազոտության նմանատիպ մոտեցման մեջ կարելի է առանձնացնել 4 ոլորտ.

- Հետազոտական աշխատանքների ներքին որակի գնահատում:
- Ուսումնասիրություն, թե որքանո՞վ են ուսանողները ներգրավված համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքներում և որքանո՞վ են ներդրվում հետազոտական մեթոդները և հետազոտության արդյունքները բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների ուսումնական գործընթացում:
- Ուսումնասիրություն, թե որքանո՞վ է կրթական ծրագիրը հիմնված հետազոտական հարցերի վրա մասնավորապես և հետազոտական մեթոդների և հետազոտության արդյունքների վրա՝ առհասարակ (ներառյալ, իհարկե, բուհից դուրս իրականացվող հետազոտությունները):
- Ուսումնասիրություն, թե որքանո՞վ համալսարանը, միջնակարգ դպրոցների հետ խորհրդակցելով, կազմում հետազոտական ուսումնական ուղեգիծ և հետևողականորեն ներդնում այն իր բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերում:

Առաքելություն և նպատակներ

ՀԱԱՀ առաքելությունը, արժեքները, տեսլականը և միջազգային ձգտումները լավ են մշակված, որոնք հստակ ներկայացված են համապատասխան գործողություններով և ՊԻԳԲ ցիկլով: Յուրահատուկ ընտրություն է կատարվել՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների ցանկից նախապատվություն տալով 9-ին:

Առաջարկում է պարբերաբար վերանայել առաքելությունն ու նպատակները հոգաբարձուների խորհրդի մակարդակում՝ ներքևից վերև ազդեցության սկզբունքով: Յուրաքանչյուր ամբիոն պետք է իր դերակատարությունն ունենա այդ գործընթացում: Այդ նպատակով արտաքին կապեր ունեցող ամբիոններին խորհուրդ է տրվում ստեղծել վերլուծական խումբ արտաքին շահակիցների հետ՝ որակի ապահովման համակարգը խթանելու նպատակով:

Կառավարում և վարչարարություն

ՊԻԲԳ ցիկլը իրականացվում է կայուն կառուցվածքով:

ՀԱԱՀ-ն վերջերս սկսվել է ստուգման փուլից (ՊԻԳԲ): Առաջին գործողությունները (ՊԻԳԲ) վերաբերում են կառավարման շրջանակում իրականացված բացառապես խորքային փոփոխություններին՝ ստորակարգությամբ բոլոր մակարդակներում: Այս եղանակով խորհուրդը ձգտում է ներդնել ՊԻԳԲ ցիկլը ստուգման և գործողությունների իրականացման փուլերի միջոցով:

Հավանական է թվում, որ համալսարանի նոր կառավարման ոչ բոլոր անդամներն են օժտված բարձր սպասելիքներն արդարացնելու համար անհրաժեշտ հմտություններով, փորձով, ռեսուրսներով և գործին նվիրումով:

Ռեկտորը դեռևս բարդ խնդրի է բախվում՝ որպես հիմնական պատասխանատու անձ:

Կատարողականի ուսումնասիրությունները և գնահատողական հարցազրույցները նույնպես խիստ անհրաժեշտ են:

Հոգաբարձուների խորհրդում ուսանողների, անձնակազմի և արտաքին շահակիցների երաշխավորված ներկայությունը ուժեղ կողմ է, որն, անշուշտ, համապատասխանում է եվրոպական չափանիշին:

Սակայն թվում է, թե որոշակի անվստահություն կա ուսանողական պատվիրակության և ուսանողական լայն զանգվածի միջև: Զրույցներից կարելի է եզրակացնել, որ դա կարող է պայմանավորված լինել նաև ուսանողական պատվիրակության որոշ անդամների քաղաքական կապերով:

Մասնագիտության կրթական ծրագրեր

ՀԱԱՀ-ում կրթական ծրագրերը ենթարկվում են փոփոխության՝ առաջնահերթությունը տալով դասավանդողի՝ գիտելիքների փոխանցմանը ուսանողին: Power point շնորհանդեսների հաճախակի օգտագործումը դրա վառ արտացոլումն է:

Հարկ է շեշտադրել, որ ՀԱԱՀ-ն նախաձեռնել է շեշտադրումը փոխել բովանդակային ուղղվածությունից դեպի ուսանողակենտրոն ուղղվածություն ունեցող ծրագրերի և դասախոսակենտրոնուղղվածությունից դեպի ուսումնակենտրոն ծրագրեր, որոնց միջոցով շեշտը դրվում է աշխատանքին և հետազոտությանը բնորոշ խնդիրների լուծման վրա, որտեղ գիտելիքը փոխանցվում է գործառնորեն:

Ավելին՝ առավել մեծ և կենտրոնացած շեշտադրում կարելի է անել աշխատանքին և հետազոտությանը բնորոշ մոտեցումների վրա:

Հարկ է նշել, որ ամբիոնները կարող են առաջամարտիկների դեր ստանձնել այս հարցում:

Ուսանողներ

Բակալավրիատի ծրագրում ուսման տևողությունը կտրուկ կրճատելը լավ որոշում է: Սա էապես խթանում է ժողովրդավարացման հնարավորությանը:

Պրակտիկայի պարտադիր ներդրումը նույնպես դրական տեղաշարժ է:

Ընդունելության միասնական քննությունները որոշ հարցեր են առաջացնում: Օրինակ՝ ընդունելության քննությունների կանխատեսելի վալիդությունը դեռևս չի ուսումնասիրվել:

Ցանկալի կլիներ տեսնել կամընտրական առարկաների համակարգ, որն առկա չէր: Առկա չեն ուսանողների ուղղորդման աշխատանքներ՝ նախապատրաստելու նրանց ապագա կարիերային:

Մտահոգիչ է հատկապես հեռակա բաժնի ծրագրերին նախապատվություն տված ուսանողների քանակը:

ՀԱԱՀ-ն կարող է շատ ավելին ներդրում անել հեռակա բաժնում՝ էականորեն բարձրացնելով հաջողության հնարավորությունները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

ՀԱԱՀ-ը պարբերաբար օգտագործում է իր եզակիությունը որպես ուժեղ կողմ: Այնուամենայնիվ, այն նաև ունի իր թերությունները. հաշվի առնելով, այն հանգամանքը, որ ուսումնական գործընթացում պաշտոնական լեզուն հայերենն է, իր հիմնական գործունեության համար ՀԱԱՀ-ը ստիպված է դասախոսներ ներգրավել շատ սահմանափակ քանակից:

Խաչաձև փոխանակման գաղափարը և դրա առավելությունները ընդհանուր առմամբ քաջ հայտնի են գյուղատնտեսության մեջ:

Բարեբախտաբար ՀԱԱՀ-ը առավելապես բաց է միջազգային շփումների համար:

Ինչպես վերը նշվեց, մասնագիտական աճի տեսանկյունից առաջնահերթություն է հետազոտական կարողությունների և դասընթացներում հետազոտական մեթոդների և հետազոտության արդյունքների ներդրման կարողության շեշտադրումը:

Ինչ վերաբերում է աշխատավարձի նորմավորմանը, ապա վերջերս կատարվել է առաջին փոփոխությունը, և նախատեսվում է հետագա փոփոխություն 2020 թվականի սկզբին:

Դրան կարող է նպաստել նաև աշխատուժի վերակազմավորումը:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

Ինչպես արդեն նշվեց, ՀԱԱՀ-ն ունի մի շարք լավ ենթակառուցվածքներ, իհարկե, մեծամասամբ մարզային մասնաճյուղերում, բայց նաև Երևանում:

Այս ենթակառուցվածքները մեծապես համալրվել են միջազգային ծրագրերում ներգրավվածությամբ և անձնական կապերի հիման վրա:

ՀԱԱՀ մյուս բաժինները ունեն չափազանց անբավարար ենթակառուցվածքներ՝ հաճախ նախաձեռնության բացակայության պատճառով:

Ներկայիս ռեկտորը ակտիվորեն փորձում է առաջ գնալ, բայց նաև ստիպված կլինի իրականացնել ամբիոնների, դեկանների և պրոռեկտորների պատասխանատվությունների բաշխում, որպեսզի ակտիվորեն փնտրի արտաքին (ներառյալ միջազգային) դրամական հոսքեր: Սա հնարավոր է իրականացնել նպատակային հետազոտությունների և հասարակությանը մատուցած ծառայությունների միջոցով:

Հասարակական պատասխանատվություն

ՀԱԱՀ-ը մակրոտնտեսական մակարդակում գտնվում է բարդ դիրքում:

ՀԱԱՀ-ն ինքնավերլուծության մեջ նշում է, որ երկրում համապատասխան աշխատատեղերի պակաս կա, և որ գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական մասնագիտությունների համար նպատակային աշխատատեղեր չեն ապահովվում:

Հոգաբարձուների խորհուրդը ստիպված կլինի դիմել ՀՀ կառավարությանը և այլ շահակիցներին՝ մասնագետների հետագա հոսքը դեպի Երևան վերառաղորդելու նպատակով:

Գինեգործությունը և գյուղատնտեսական վերլուծությունը լավ ոլորտներ են, սակայն էկոլոգիայի հետ զուգորդված դասական գյուղատնտեսական փորձը ևս արժանի է լիարժեք ուշադրության Հայաստանի նման երկրի համար:

Միկրոտնտեսական մակարդակում հոգաբարձուների խորհուրդը հանդես է գալիս որպես հայ համայնքի ներկայացուցիչ: Վերջին շրջանում հոգաբարձուների խորհուրդը ստանձնել է մի զգայուն ոլորտի պատասխանատվություն. ամբողջովին փոխարինել ՀԱԱՀ ղեկավարությունը: Առկա է ֆինանսական թափանցիկություն:

Արտաքին կապեր և միջազգայնացում

ՀԱԱՀ-ը միջազգայնորեն շատ ակտիվ է և կապեր է ստեղծել բազմաթիվ երկրներում: Սա ակնհայտորեն համալսարանի ուժեղ կողմերից է: Հայաստանում նրա զբաղեցրած յուրահատուկ դիրքը հնարավորություն է ընձեռում համալսարանին լինել միջազգայնորեն ակտիվ:

Նույնիսկ մշակվել է կրկնակի որակավորման համակարգ:

ՊԴ կազմի և ուսանողների զգալի մի զանգված տիրապետում է ռուսաց լեզվի, և մի կարևոր հատված խոսում է նաև անգլերեն:

Լեզուների կենտրոնը լավ աշխատանք է կատարում, սակայն կարող է շատ ավելի արդյունավետ օգտագործել ներկայիս տեխնոլոգիաները:

Մասնագիտական ոլորտի հետ ավելի ինտենսիվ համագործակցություն կարելի է իրականացվել տեղական մակարդակում:

Վերլուծական խմբի ստեղծումը յուրաքանչյուր թողարկող ամբիոնում, անշուշտ, կդիտարկվի որպես հավելյալ արժեք:

Որակի ներքին ապահովում

Որակի ապահովման գործընթացում ներգրավվածները բոլոր ջանքերը գործադրում են իրենց աշխատանքում, ընտրել են ճիշտ գործելաոճ և գիտեն՝ ինչ է պետք անել առաջիկայում:

Ինչ վերաբերում է մյուս գերատեսչություններին՝ այստեղ կա նաև մի նոր պատասխանատու անձ, ով արդեն իսկ լավ կապեր է հաստատել արտերկրում գյուղատնտեսական համալսարանների հետ:

Հուսով եմ, որ նոր թեստավորման կենտրոնը կարող է ինտենսիվորեն օգտագործվել ուսանողների և աշխատակիցների բավարարվածությունը չափելու նպատակով:

Առաջարկվում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների համար առանձին չափման գործիքներ մշակել:

Այսպիսով՝ անհրաժեշտ է բոլոր հարցվողներին տեղեկացնել հարցման արդյունքների և օպտիմալացման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների մասին:

....

Սովորաբար նախատեսվում է, որ հավատարմագրումը հիմնված լինի համալսարանի միայն ներկա վիճակի վերլուծության վրա:

ՀԱԱՀ-ի պարագայում դա անարդար կլիներ՝ հաշվի առնելով հոգաբարձուների խորհրդի, ռեկտորի և հիմնական գործառույթ իրականացնող նոր կառավարման անդամների վերջին շրջանի հիմնարար ջանքերը:

Փորձագիտական խումբը հույն ունի, որ ՀԱԱՀ-ին ողջամիտ ժամկետում կհաջողի իրականացնել բոլոր սահմանված նպատակնեն ու համապատասխանել եվրոպական չափանիշներին:

Դրա համար կարելի է նշել երեք կարևոր պայման.

1. Աշխատակազմի բոլոր աշխատակիցների շրջանում մշակույթի փոփոխություն՝ նախաձեռնություն ստանձնելու ռեսուրսների որոնման, ծրագրերի վերանայման, հետազոտությունների շեշտադրման և մասնագիտական աշխարհի հետ ինտենսիվ շփումների տեսանկյունից:
2. Նվիրված ղեկավարություն, որը կառավարվում է հստակ ձևաչափով և դրական փորձը փոխանցում է այլ բաժինների:

3. Հայաստանի Կառավարության հետ ինտենսիվ շփումներ՝ գյուղատնտեսական փորձը գնահատելու և Հայաստանում՝ գյուղատնտեսության ոլորտում բարձրորակ հետազոտությունների և կրթության խթանման համար:

Ամսաթիվ՝ 14.04.2020

_____

Հերմինե Գրիգորյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆԽՄԲԻԿԱԶՄԸ

1. **Հերմինե Գրիգորյան՝** Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետականհամալսարանի Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկայի» ամբիոնի դոցենտ,
2. **Ռոմեին Հուլպիա՝** փիլիս.և մանկավ. գիտ. դոկտոր, Որակի ապահովման բելգիական VLHORA և VLHUR, ինչպես նաև նիդեռլանդական NVAO կազմակերպությունների փորձագետ, Բելգիա, անդամ,
3. **Մենուա Սողոմոնյան՝** ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ, պատմական գիտ. թեկնածու,
4. **Կարեն Թոչունյան՝** Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրեն, կենսաբանության ԳՀ ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող,Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, Կենսաբանական գիտությունների դոկտոր,
5. **Գայանե Քոսակյան՝** Երևանի պետական բժշկական համալսարան, ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանողուհի

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ավագ մասնագետ Վարդուհի Գյուլազյանը:

Թարգմանությունը կատարել է ԵՊԼՀ Թարգմանության ամբիոնի դասախոս Վարդանուշ Բաղդասարյանը:

Փորձագիտական խմբի անդամները, թարգմանիչը, համակարգողը ստորագրել են գաղտնիության և շահերի բախման բացառման հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՀԱԱՀ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի և ՀԱԱՀ-ի միջև կնքվել է երկկողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերենով և անգլերենով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

ՀԱԱՀ-ի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով ՀԱԱՀ ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստականփուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ՀԱԱՀ-ի հետ:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ՈԱԱԿ-ի վերապատրաստման պատասխանատուների կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. Հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ:
2. Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով:
3. Փորձագիտական այց դերային խաղերի միջոցով:
4. Փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերապատրաստումների ընթացքում քննարկվել են որակի ապահովման չափանիշները և ոլորտի առանձնահատկությունները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խումբը դիտարկել է գործնական պարապմունքներ և քննություններ: Այսպես, փորձագիտական խումբը իրականացրել է դասալսումներ Ագրոնոմիական ֆակուլտետի 2-րդ կուրսում, ինչպես նաև Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ 1-ին և 4-րդ կուրսերում: Փորձագիտական խումբը այցելել է «Ոսկեհատի» ՈՒՓՏ գինու գիտաուսումնական կենտրոն և «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն, որտեղ ուսանողները իրականացնում են լաբարատոր աշխատանքներ:

Ինչպես նաև փորձագիտական խումբը հետևյալ լաբարատորիաները և հետազոտական կենտրոնները.

- Պեստիցիդների և բույսերի պաշտպանության հետազոտական կենտրոն
- Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն

- Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիա.
- Աննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ
- Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիաների բաժին
- Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների բաժին
- Բուսական ծագման մթերքի և հումքի վերամշակման տեխնոլոգիաների բաժին

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[3]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախնական այց

2019 թվականի նոյեմբերի 29-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ՀԱԱՀ: ՄՈՒՀ-ի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ. դեկտեմբերի 9-ից 13-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ՀԱԱՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:
Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը, թարգմանիչը և արձանագրողը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ՀԱԱՀ ռեկտորի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[4], ռեսուրսների դիտարկում[5] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ

[3]Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույցը
[4]Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ
[5]Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի ներկայացուցիչները և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Միջազգային փորձագետը պատրաստել է գործընկերային գնահատման վերաբերյալ առանձին կարծիք, որը ներառվել է զեկույցի տեքստում: Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 24.01.2020-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ՀԱԱՀ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 12.02.2020-ին: Բուհն իր դիտարկումները ներկայացրել է հայերեն, որը տրամադրվել է տեղացի փորձագետներին, ինչպես նաև քննարկվել է միջազգային փորձագետի հետ: 2020 թվականի մարտի 30-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի հանդիպում, որի ժամանակ քննարկվել է բուհի պատասխանը: Հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում ՀՀ-ում գործող արտակարգ դրությունը, հանդիպումը տեղի է ունեցել նախատեսված ժամկետից ուշ, առցանց հարթակում:

Հաշվի առնելով բուհի դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 13.04.2020-ին:

14.04.2020

_____

Վարդուհի Գյուլազյան, փորձագիտական խմբի համակարգող

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հանրապետության խոշոր բուհերից մեկն է և ագրարային ոլորտի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը: Որպես Հայկական գյուղատնտեսական ակադեմիա՝ կազմավորվել է 1994թ. Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների միավորման արդյունքում, որոնք հիմնադրման օրվանից (1930թ.) բացառիկ դեր են խաղացել ինչպես հանրապետության ագրարային ոլորտի զարգացման, այնպես էլ նախկին Խորհրդային Միության հանրապետությունների համար որակյալ մասնագետների պատրաստման ու բազմաբնույթ գիտական հետազոտությունների իրականացման գործում:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 1994թ. հուլիսի 7-ի որոշման համաձայն՝ Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների բազայի վրա կազմավորվեց Հայկական գյուղատնտեսական ակադեմիան, որը հետագայում Կառավարության 2005թ. սեպտեմբերի 15-ի թիվ 1597 որոշմամբ վերանվանվեց Հայաստանի պետական ագրարային համալսարան: 2012թ.-ի հուլիսի 14-ի թիվ 872 որոշմամբ վերանվանվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարան:

Ելնելով երկրի ագրոպարենային ոլորտի առջև ծառացած այսօրվա կոնկրետ խնդիրների լուծման անհրաժեշտությունից, Համալսարանը 2018 թվականից թևակոխել է բարեփոխումների ակտիվ ժամանակաշրջան: Մասնավորապես 2018 թվականի կառավարության ծրագրով գյուղատնտեսությունն որպես տնտեսական զարգացման առաջնահերթություն սահմանելը, ՀՀ Կառավարության կառուցվածքային փոփոխությունները, (առանձին գյուղատնտեսության նախարարության չունենալը), էապես փոխեցին ՀԱԱՀ դերակատարումը գյուղատնտեսության ոլորտում, որի արդյունքում անհրաժեշտություն առաջացավ որդեգրել նոր առաքելություն, նոր նպատակներ, որոնք համահունչ կլինեն ՀՀ կառավարության վարած նոր ագրարային քաղաքականությանը և ռազմավարությանը: Այս պահին համալսարանը գտնվում է ինտենսիվ էվոլուցիայի փուլում, նոր առաքելությանը համահունչ համալսարանում արմատական փոփոխության են ենթարկվում թե' կրթական ծրագրերը և թե' անհրաժեշտ ռեսուրսային բազան՝ դրանք դարձնելով գյուղատնտեսության և կրթության ոլորտի արդի պահանջներին համապատասխան:

Կրթություն.

Ագրարային համալսարանը բարձրագույն կրթությամբ կադրեր է պատրաստում 80 կրթական ծրագրերով՝ ուսուցման եռաստիճան համակարգով, ինչը հնարավորություն է տալիս ինտեգրվելու միջազգային կրթական համակարգին:

Հաստատությունը իր առջև նպատակ է սահմանել ունենալ միջազգային և տեղեկան աշխատաշուկայում պահանջարկված ու հավատարմագրված կրթական ծրագրեր, ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզվով: Միջազգային հեղինակավոր բուհերի հետ իրականացնել նոր համատեղ երկարաժամկետ և կարճաժամկետ կրթական ծրագրեր՝ շնորհելով կրկնակի կամ միասնական դիպլոմներ, հավաստագրեր: Տարեց տարի ապահովել շարժունության մասնակցած ուսանողների և ՊԴ կազմի աճ և օտարերկրյա ուսանողների թվաքանակի զգալի աճ:

Հետազոտություն.

ՀԱԱՀ-ն նախատեսում է Հետազոտական գերազանցության և ինովացիոն համակարգի զարգացմամբ նպաստել ժամանակակից ագրոպարենային ոլորտում գիտական և հետազոտական արդյուքների ստացմանը և ներդրմանը, ագրոպարենային ոլորտի գիտության միջազգայնացում. գիտության ոլորտում նորարարական լուծումների արտահանում, ակտիվ մասնակցություն միջազգային գիտական ծրագրերին:

Միջազգայնացում.

ՀԱԱՀ-ն նպատակ ունի ակտիվորեն շարունակել և ընդլայնել միջազգային համագործակցությունը, մշակել և ներդնել նոր համատեղ կրթական ծրագրեր՝ կրկնակի դիպլոմների փոխճանաչմամբ, համալսարանը դարձնել արտերկրից ժամանած ագրարային ոլորտի ուսանողների ուսուցման տարածաշրջանային կենտրոն, խթանել և տարեցտարի ավելացնել ուսանողների և աշխատակիցների միջազգային շարժունությունը՝ ՀԱԱՀ-ից արտերկիր և հակառակը, ինչպես նաև էապես խթանել ուսանողների և աշխատակիցների՝ միջազգային ծրագրերին և գիտաժողովներին մասնակցելու կարողությունները

Որակի ապահովում.

ՀԱԱՀ-ն նախատեսում է ունենալ կայացած որակի ներքին ապահովման համակարգ, Համալսարանի յուրաքանչյուր շահակցի, այդ թվում և ուսանողին, դարձնելով որակի մշակույթի կրող և որակի ապահովման գործընթացի մասնակից՝ համակարգի գործառնության մեթոդաբանության մշակման փուլից մինչև կատարում, իմաստավորում, բարելավում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներումփաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն)*

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՀԱԱՀ-ի առաքելությունը ամրագրված է բուհի 2018-2022թթ. ռազմավարական ծրագրում: Համաձայն որի բուհիառաքելությունը սահմանվում է հետևյալ կերպ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանը նպատակ ունի համակենտրոնացնել կրթական ու գիտական, կադրային և նյութական ներուժը, ապահովել որակյալ կրթություն ու հիմնարար գիտական հետազոտություններ, և պատրաստել ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ու դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող մասնագետներ ու գիտաշխատողներ:

Համաձայն ինքնավերլուծության, ՀԱԱՀ-ն իր կրթական գործունեությունը կառուցում է՝ առաջնորդվելով կրթության որակավորումների ազգային շրջանակի 6-8-րդ մակարդակներում, սահմանված անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների լրակազմով:

2018 թվականին մեկնարկած բարեփոխումների համատեքստում ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի կողմից համալսարանը սահմանել է իր նոր առաքելությունը՝

- պատրաստել ագրոտեխնոլոգիական ուղղվածությամբ մասնագետներ՝ ունակ իրենց մասնագիտական հմտություններով և ոլորտի շահակիցների հետ համագործակցությամբ զարգացնելու երկրի գյուղատնտեսական գործունեությունը,
- խթանել Համալսարանի գիտական ներուժը՝ առաջարկելով առաջընթացի լավագույն լուծումներ,
- ներդնել խելացի տեխնոլոգիաներ՝ օգտագործելով և ցուցադրելով գիտելիքահենք տնտեսության օգուտները:

Համալսարանի տեսլականն է՝ «դառնալ հետազոտություններով և նորարարություններով առաջնորդվող ագրո-տեխնոլոգիական ուսումնագիտական գերազանցության կենտրոն՝ խթանելով գյուղատնտեսական կրթության, գիտության և արտադրության ներդաշնակ փոխհամագործակցությունը»:

Ըստ ինքնավերլուծության Համալսարանն իր բարեփոխումների, նոր առաքելության, նպատակների և խնդիրների իրականացումը համակարգելու, տեսանելի և չափելի դարձնելու նպատակով մշակել է ՀԱԱՀ 2020-2024 ռազմավարական ծրագիր: ՀԱԱՀ-ն իր նոր ՌԾ-ի նախագիծը մշակելիս կարևորել է իր գործունեությամբ ձգտել նպաստել ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

Վերջին մեկ տարում գնահատվել են ՀԱԱՀ-ի հիմնական խնդիրները, կատարվել են մասնագիտական կրթական ծրագրերի խոշորացում, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի օպտիմալացում, բակալավրիատի համար առկա համակարգում քառամյա, իսկ հեռակա համակարգում 4,5 տարվա կրթական ծրագրերի ներդնում: Հարկ է շեշտադրել, որ ՀԱԱՀ-ն այժմ գտնվում է անցումային ժամանակաշրջանում:

ՀԱԱՀ-ի համար կարևոր նպատակներից է համալսարանի հեղինակության վերականգնումը, առաքելության հստակեցումը ագրարային ոլորտում:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում ենթերքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ըստ ինքնավերլուծության, ՀԱԱՀ-ն իր ներքին շահակիցներին է համարում ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմին և գիտնականներին: Իսկ արտաքին շահակիցների թվին են դասվում՝ դիմորդները, շրջանավարտները, գործատուները, ոլորտի համար պատասխանատու պետական մարմինները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և միջազգային գործընկերները:

Ըստ ինքնավերլուծության, 2018թ.-ին ամբողջությամբ փոխվել է ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի կազմը, որի մեջ ներգրավված են ոլորտի փորձառու ներկայացուցիչներ. պետական օղակի ներկայիս և նախկին պաշտոնավարներ, քաղաքացիական հասարակության առաջատարներ, ինչպես նաև ՀԱԱՀ-ի անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչները, ովքեր որպես շահակիցներ, գործելով Հոգաբարձուների Խորհդի կազմում, ներկայացնում են իրենց պահանջները և ակնկալիքները համալսարանի գործունեությունից:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ իրականացվում են SWOT վերլուծություն դեկանների, ամբիոնների վարիչների, դասախոսների և ուսանողների հետ, որը թույլ է տալիս բացահայտել նրանց տեսանկյունից բուհի ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները: Ռազմավարության մշակման համար իրականացվել են նաև տարբեր քննարկումներ բուհի ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Ներքին շահակիցների հետ հաղորդակցման արդյունքում նախաձեռնվել են դասախոսների համատարած վերապատրաստման, ռեսուրսների համալրման, ուսումնական պլանների փոփոխության աշխատանքներ: Իրականացվել է նաև ֆերմերների հետ սերտորեն համագործակցության քաղաքականություն:

Այնուամենայնիվ, հարկ է շեշտադրել, որ ներքին շահակիցները հակված են կենտրոնանալ խնդիրների վրա, և ավելի քիչ տեսնել արտաքին հնարավորությունները:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Համաձայն ինքնավերլուծության Համալսարանում ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների գնահատման հիմնական մեխանիզմներն են եղել՝ ՀԱԱՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունները, ՀԱԱՀ գիտական խորհրդի, ֆակուլտետային գիտական խորհուրդների որոշումները, ամբիոնային, համալսարանի շահակիցների կարիքների գնահատման հաշվետվությունները:

Ըստ ինքնավերլուծության և հանդիպումների արդյունքների, ներկայումս մշակման փուլում է գտնվում ԳԱՑ-երի համապարփակ փաթեթը, որը գեներացվելու է ցուցիչներով հավաքագրվող տվյալների հիման վրա: Լայնորեն կիրառվելու են հետազոտության քանակական և որակական մեթոդները, շեշտադրվելու է ուսուցմանը միտված մոնիթորինգի և գնահատման գործիքների կիրառությունը, այսինքն ՀԱԱՀ յուրաքանչյուր շահակից իր գործունեության ընթացքում գնահատելու է բուհի ներքին և արտաքին գործընթացները, ենթակառուցվածքները, սեփական բավարարվածությունը:

ՀԱԱՀ-ում առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար դեռ նոր է ներդրվում որակի ապահովման համակարգը և այդ գործընթացների համար ՊԻԳԲ շրջափուլը փակված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը նշում է, որ գնահատման ժամանակ դիտարկվել են ՀԱԱՀ-ի ինչպես 2018-2022թթ. այնպես էլ 2020-2024թթ. ռազմավարական ծրագրերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայում բուհը գտնվում է արմատական բարեփոխումների փուլում և անցումային ժամանակաշրջանում: Հարկ է շեշտադրել, որ անցումային ժամանակաշրջանում իրականացված աշխատանքները հիմք են հանդիսացել բուհում առկա խնդիրների վերհանմանը և առաջիկայում մրցունակ կրթության համար նախադրյալների ստեղծմանը, ինչը փորձագիտական խումբը դրական է համարում:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՀԱԱՀ-ի 2020-2024 ռազմավարական ծրագրի իրականացման համար բարեփոխումների փուլում արված քայլերը՝ ռեսուրսների գնահատումը առաջին փուլը, մասնագիտությունների խոշորացումը, օպտիմալացումը, ուսումնական պլանների վերանայումը, ՊԴ կազմի վերապատրաստումները, ուղղված են բուհի նոր առաքելության հիմնական կետերի իրագործմանը: Համալսարանը գտնվում է անցումային փուլում, և այդ փուլի համար զարգացման պլանի կարևորագույն գործընթացների ծավալման ժամանակաշրջանն է, իսկ դրված հիմնասյուները կնպաստեն որդեգրած առաքելության և նպատակների իրագործմանը:

ՀԱԱՀ- ում փոխվում է կրթական մշակույթը նոր արժեհամակարգի տեսքով, որը համահունչ է առաջիկայում սահմանված առաքելությանը և կնպաստի արտաքին և ներքին շահակիցների ակտիվ ներգրավմանը առաքելության և նպատակների իրականացման գործում: ՀԱԱՀ-ում առկա է զարգացման հաջողված մոդել «Ագրոբիզնեսի և տնտեսագիտության» ֆակուլտետի օրինակով, որում իրականացվող ուսումնառության ու դասավանդման նորագույն փորձը հիմք և լավ օրինակ կարող է հանդիսանալ բուհի բարեփոխումների գործընթացում և կարող է փոխառվել այլ ֆակուլտետներում:

Դրական է, որ ՀԱԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամներից շատերն ագրարային ոլորտի մասնագետներ են և գործուն մասնակցություն ունեն բուհի ռազմավարական ծրագրերի մշակման մեջ, սակայն ներքին շահակիցների առավել լայն զանգվածի ակտիվ ներգրավվածությունը ռազմավարական խնդիրների լուծման գործընթացում կնպաստի համալսարանում բարեփոխումների և առաջընթացի համար թիմ ձևավորելուն:

Հարկ է նշել, որ դեռ մշակված չեն ՀԱԱՀ-ի ռազմավարական նպատակների իրականացման որակի գնահատման գործունեության առանցքային ցուցիչները, որոնց միջոցով ավելի տեսանելի կլինի բուհի առաջընթացը և կնպաստի ռազմավարական նպատակների իրականացման ժամանակ առկա խնդիրների դուրսբերմանը և տարբեր գործընթացների որակի շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԱԱՀ-ի ծավալած գործունեությունը 2018 թվականից սկսած միտված է արմատական փոփոխությունների արդյունքում ռազմավարական նպատակների և առաքելության իրականացմանը և համալսարանը հստակ գիտակցում է իր առաքելության իրականացման հետ կապված խնդիրների առաջնահերթությունները, արտաքին շահակիցները ակտիվորեն ներգրավված են առաքելության և նպատակների իրականացմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտություն կա որակի գնահատման գործունեության առանցքային ցուցիչների արագ մշակման և ներդնման, ինչպես նաև ներքին շահակիցների ակտիվ մասնակցության ապահովմանը ՀԱԱՀ-ի ռազմավարական նպատակների հստակեցման գործընթացում:

Եզրակացություն*:* Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան. և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀԱԱՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության, ՀԱԱՀ կանոնադրության, ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագրի, ՀԱԱՀ կառավարման և վարչարարության քաղաքականության, ՀԱԱՀ էթիկայի կանոնագրքի, համալսարանի կառավարման տարբեր մակարդակների կառավարման համար սահմանված կանոնակարգերի և այլ նորմատիվային փաստաթղթերի համապատասխան ինքնակառավարման հիմքի վրա՝ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: 2018-2022թթ ռազմավարական ծրագրի գերնպատակներից մեկն է համարվում համալսարանի կառավարման համակարգի կատարելագործումը և կառավարման արդյունավետության և թափանցիկության ապահովումը:

2018 և 2019 թվականներին ՀԱԱՀ-ում իրականացվել է օպտիմալացում, որից հետո բուհը ձեռնամուխ է եղել կառուցվածքային բարեփոխումների, որոնք միտված են կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, գիտական ստորաբաժանումների և հետազոտական կենտրոնների կառուցվածքային օպտիմալացմանը, համալսարանի մի քանի ամբիոնների միավորմանը և անվանափոխությանը: Սահմանված նպատակաների իրագործման համար երկու անգամ իրականացվել է օպտիմալացում, կատարվել են մարդկային ռեսուրսների համալրման աշխատանքներ: Ըստ բուհի ղեկավար կազմի, օպտիմալացումը կրելու է շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով բոլոր ստորաբաժանումներում բարձրացնել աշխատավարձերը և աշխատանքի արդյունավետությունը: Հարկ է շեշտադրել, որ ՀԱԱՀ բոլոր ստորաբաժանումներում կատարվել են համալրումներ, ամբիոնների վարիչների համար հայտարարվել են մրցույթներ և իրականացվել են փոփոխություններ: Պլանավորված է մեկնարկել ՀԱԱՀ-ում առկա բոլոր պաշտոնների անձնագրերի մշակումը: Նպատակ է դրված նաև ոլորտի լավագույն մասնագետներին ներգրավել բուհի դասավանդման և վարչական գործունեության մեջ:

Նյութական ռեսուրսների առումով, բուհում նույնպես նախաձեռնվել են բարելավումներ ինչպես արտաքին, այնպես էլ բուհի ֆինանսական միջոցներով: Նպատակ կա ամբողջապես վերազինելու առկա լաբորատորիաները և ստեղծելու անասնաբուժական կրթագիտական սիմուլիացիոն կենտրոն: Արդեն կան պայմանավորվածություններ տարբեր միջազգային կազմակերպությունների հետ ֆինանսական աջակցության տրամադրելու հետ կապված:

ՀԱԱՀ-ն նախաձեռնել է ֆոնդահայթաթման իրականացումը ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացում ապահովելու նպատակով:

ՀԱԱՀ-ի Հոգաբարձուների Խորհրդի նախագահը ակտիվ մասնակցություն ունի համալսարանում ընթացող գործընթացներին շաբաթական մի քանի անգամ վարչական կազմի

հետ հանդիպումների տեսքով, ինչպես նաև Հոգաբարձուների Խորհրդի նիստերը հաճախ են հրավիրվում կապված համալսարանի համար կարևոր հարցերի քննարկման համար: Այդ նիստերին մասնակցում են նաև համալսարանի պրոռեկտորները: Հարկ է նշել, որ համալսարանի գիտական խորհրդի նիստերը ևս մեծ հաճախականությամբ են կայանում:

2.2 ՄՈՒՀ_ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Ըստ ինքնավերլուծության ՀԱԱՀ-ում Հոգաբարձուների խորհրդի ձևավորման ներկա ձևաչափը, ձևավորված 25% հիմնադրի, 25% լիազորված մարմնի ներկայացուցիչներից, ինչպես նաև 25% համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և 25% ուսանողության ներկայացուցիչներից, ապահովում է և ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը իրենց առնչվող որոշումների կայացմանը: Համալսարանի գիտական խորհուրդը, որը հանդիսանում է համալսարանի ուսումնամեթոդական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին, իր կազմում նույնպես ընդգրկում է և ուսանողների և դասախոսների: Մասնակցություն ապահովելու նույն սկզբունքներով ձևավորվում են նաև ֆակուլտետային խորհուրդները: Դասախոսներն ու ուսանողները հնարավորություն ունեն հարցաշարերի միջոցով բարձրացնելու իրենց խնդիրները:

Չնայած դասախոսների և ուսանողների ֆորմալ ընդգրկվածությանը ՀԱԱՀ տարբեր կառավարման օղակներում, դեռևս քիչ են ուսանողների և դասախոսների կողմից բարձրացվող խնդիրները կառավարման տարբեր օղակներում, չկա ներքին շահակիցների կողմից իրենց վերաբերյալ որոշումների կայացման գործում ակտիվ մասնակցության մշակույթը, ինչպես նաև առկա չէ որոշումների ընդունումից հետո հետադարձ կապի մեխանիզմները:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Ինքնավերլուծությունից պարզ է դառնում, որ համալսարանում պլանավորումներն իրականացվել են 5 տարի ժամկետով: Ճիշտ է 2018-2022թթ ռազմավարական ծրագրի գործողությունների պլան-ժամանակացույցում գործողությունների իրականացման հստակ ժամկետներ են սահմանված, սակայն, առանձին փաստաթղթի տեսքով, գործողությունների կարճաժամկետ և միջնաժամկետ պլան ժամանակացույցեր առկա չեն, ինչը փաստում է այն մասին, որ համալսարանում կարճաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական պլանավորում չի իրականացվել: Առանձնացվել են ընդամենը գործողությունների պլանից այն կետերը, որոնք պլանավորվել է իրականացնել այդ օրացուցային տարում:

Ըստ ինքնավերլուծության նոր ռազմավարական ծրագրում (2020-2024թթ) նշված է գործունեության առանցքային ցուցանիշները (ԳԱՑ-երը), իսկ գործողությունների պլան ժամանակացույցում նախատեսվում է ստեղծել դրանց չափման քանակական և որակական ցուցիչները, որոնք հնարավորություն կտան չափելի դարձնել ակնկալվող արդյունքները:

5-ամյա պլանավորումը երկարաժամկետ համարելը հիմնավորվում է այն հանգամանքով, որ համալսարանը գտնվում է անցումային փուլում, աշխատաշուկայի և ՀՀ գյուղատնտեսության զարգացման տեմպերը և ուղղությունները նույնպես արագ են փոփոխվում, արդյունքում՝ ավելի երկարաժամկետ պլանավորման իրականացումը ոչ իրատեսական կարող է լինել:

Ըստ համալսարանի ղեկավար կազմի, առկա է պլանավորումների միջանկյալ վերլուծության անհրաժեշտություն:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Ըստ ինքնավերլուծության արտաքին գործոնների ուսումնասիրությունն իրականացվում է տարբեր մեթոդներով և համալսարանի տարբեր կառույցների միջոցով: Վերլուծելով վերջին տարիներին համալսարանի գործունեությունը՝ արտաքին գործոնների ազդեցության համատեքստում, կարելի է ենթադրել, որ բոլոր կարևոր գործընթացներում մեծ դեր է ունեցել արտաքին գործոնների ազդեցության հաշվառումը: Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները ուղղակիորեն արտահայտված են նաև համալսարանի նոր 2020-2024 ռազմավարական ծրագրում: Մասնավորապես, ռազմավարական ծրագրում նշված են ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացմանը որոշակիորեն նպաստող, փոքրածավալ, հստակ ցուցիչներ ներառող գործողություններ: Ռազմավարական պլանում ամրագրված են նաև գյուղատնտեսության ոլորտում ազգային առաջնահերթությունները:

ՀԱԱՀ-ում ստեղծվել է Մարկետինգի բաժին, որն օգնում է բուհին ունենալ իր գործունեության վերաբերյալ հավաստի տվյալներ որոշումների կայացման համար, ինչպես նաև փորձում է կատարել դրանց արդյունավետության վերաբերյալ վերլուծություններ:

Պետք է նշել նաև, որ կատարվել է աշխատաշուկայի վերլուծություն, ըստ որի կրճատվել են զուտ տնտեսագիտական ուղղվածությամբ մասնագիտությունները բուհում:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Ըստ ինքնավերլուծության Համալսարանի գործընթացներում որակի կառավարման սկզբունքի էլեմենտներ սկսվել են ներդրվել 2012 թվականից՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրման մասնակցության ընթացքում, որը դրական է ազդել բուհում որակի ապահովման քաղաքականության, մեթոդաբանության և մեխանիզմներ ներդնելու առումով:

Գործընթացի կատարելագործմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ համալսարանն ընդգրկված է եղել GOVERN միջազգային դրամաշնորհային ծրագրին: Ծրագրի շրջանակներում մշակվել են մի շարք փաստաթղթեր կառավարման համակարգը բարելավելու նպատակով:

Սակայն համալսարանում եզակի են այն դեպքերը, որոնց համար որակի կառավարման սկզբունքի բոլոր փուլերը ավարտված են /օրինակ միջազգային բաժնում/: Հիմնականում կառավարման մակարդակով կատարվել են գնահատման և բարելավման փուլերը, որոնք գուցե թե ճիշտ են անցումային ժամանակաշրջանում, բայց հետագայում պետք է սկսել պլանավորումից: Անհրաժեշտություն կա բոլոր ստորաբաժինների ընթացակարգերում ներդնել որակի կառավարման սկզբունքը:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ՀԱԱՀ-ում առկա են մի շարք փաստաթղթեր, որոնք կարգավորում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծություն իրականացնելու և կիրառումը գնահատող մեխանիզմները:

Այս ուսումնական տարում, աշխատաշուկայի որոշակի վերլուծություններից ելնելով, փոփոխվել է առկա ուսուցման համակարգի բակալավրիատի ուսումնական պլանները և ավելացվել է մեկ աշխատանքային կիսամյակ:

Իրականացվում են նաև հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում կրթական ծրագրերի և բուհի այլ ոլորտների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով: Արտաքին շահակիցների շրջանում հարցումներ չեն իրականացվում:

Հարկ է նշել, որ առկա գործիքների արդյունավետությունը գնահատող քայլեր չեն իրականացվել, քանի որ այս գործընթացը գտնվում է դեռևս պլանավորման և իրականացման փուլում:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Համաձայն ինքնավերլուծության ՀԱԱՀ-ն կարևորում է իր կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումը, ինֆորմացիայի հասանելիությունը և օբյեկտիվությունը:

ՀԱԱՀ-ն որպես ինֆորմացիայի տրամադրման միջոց օգտագործել է պաշտոնական կայքէջը, որում առկա է համալսարանի գործունեությունը կարգավորող բոլոր փաստաթղթերը, համալսարանական գործունեության վերաբերյալ հիմնական հաշվետվությունները, համալսարանի ռազմավարական ծրագրերը: Ինչպես նաև ինֆորմացիայի տարածման նպատակով ակտիվորեն կիրառվում են սոցիալական ցանցերը: Բուհի կողմից շնորհվող որակավորումների որակի մասին ներկայում հրապարակվում են նաև շրջանավարտների հաջողության պատմությունները:

Սակայն հրապարակված տեղեկատվության արդյունավետությունը գնահատող մեխանիզմների բացակայությունը թույլ չի տալիս փաստել իրականացվող գործընթացի արդյունավետությունը:

Ինչպես նաև համալսարանի կայքէջում տեղադրված չեն մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ՀԱԱՀ-ը 2018թ-ից սկսած կատարել է կառուցվածքային փոփոխություններ, ուղղված կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, որոնց արդյունքում տեղի է ունեցել գիտական ստորաբաժանումների և հետազոտական կենտրոնների կառուցվածքային օպտիմալացում, համալսարանի մի քանի ամբիոնների միավորում, որոնք կնպաստեն ռազմավարական նպատակների իրագործմանը և ռազմավարական նպատակներին համահունչ կառավարման համակարգի առկայությանը: Միևնույն ժամանակ անցումային ժամանակաշրջանում կառավարման համակարգի անընդհատ վերլուծությունների իրականացումը կնպաստի առաջիկայում մրցունակ և ներկա պահանջներից բխող համակարգի ստեղծմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում բուհի ջանքերը մարդկային ռեսուրսների համալրման քաղաքականության որդեգրումը, որտեղ կարևորվում է ոլորտի պրակտիկ մասնագետների ներգրավումը, ինչպես նաև կարևոր է բուհի կողմից իրականացված քայլերը նյութական ռեսուրսների համալրման և ֆինանսական միջոցների բազմազանեցման քաղաքականությունը և ֆինանսական կայուն ֆոնդերի ստեղծման ուղիները: Այս ամենը կնպաստի մրցունակ կադրերի համալրմանը ուսումնական գործընթացում, ֆինանսական կայունությանը և ՀԱԱՀ-ի հեղինակության բարձրացմանը:

Որոշումների կայացմանը ակտիվ մասնակցություն ունի համալսարանի հոգաբարձուների խորհուրդը, գիտական խորհուրդը, ինչը նպաստում է արտաքին գործոնների հաշվի առնումը

բուհի զարգացման գործում, իսկ ներքին շահակիցների իրենց առնչվող որոշումների կայացման մասնակցության խթանումը կնպաստի բուհում առկա խնդիրների վերհանմանը և ներքին շահակիցների մոտիվացիայի բարձրացմանը:

ՀԱԱՀ-ում առկա է երկարաժամկետ պլանավորման ռազմավարական ծրագիր, սակայն բացակայում են միջնաժամկետ պլանները: Բուհում միջնաժամկետ պլանավորումը, մասնավորապես անցումային ժամանակաշրջանի համար արդյունավետ կլինի և կնպաստի երկարաժամկետ ծրագրի ճշգրտման հնարավորությանը և անընդհատ բարելավմանը:

Կառավարման և վարչարարության համակարգում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը դեռևս ներդրված չէ, ինչը կարող է վտանգել հետագա բարեփոխումների ընթացքը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՀԱԱՀ-ում իր գործունեության վրա ազդող գործոնների լայնածավալ գնահատումը, որը կապահովի առկա խնդիրների բացահայտումը, ինչպես նաև կնպաստի մասնագիտական կրթական ծրագրերի արմատական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԱԱՀ-ն վերջին տարիների արմատական բարելավումների է ենթարկել կառավարման համակարգը, իրականացրել է մարդկային և նյութական ռեսուրսների համալրումներ, ֆինանսական հոսքերի բազմազանեցում, պարբերաբար իրականացնում է արտաքին գործոնների վերլուծություններ, արտաքին շահակիցները ակտիվորեն սկսել են ներգրավել բուհի կառավարման և բարեփոխումների գործընթացում, ունի իր առաքելությունը և ռազմավարական նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ կառավարման համակարգ, մարդկային ներուժ, որոշումների կայացումը հիմնված է համալսարանի էթիկայի կանոնագրքի վրա, փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանը բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀԱԱՀ-ի առաքելությունն է «Պատրաստել ագրոտեխնոլոգիական ուղղվածությամբ մասնագետներ՝ ունակ իրենց մասնագիտական հմտություններով և ոլորտի շահակիցների հետ համագործակցությամբ զարգացնելու երկրի գյուղատնտեսական գործունեությունը, խթանել համալսարանի գիտական ներուժը՝ առաջարկելով առաջընթացի լավագույն լուծումներ, ներդնել խելացի տեխնոլոգիաներ՝ օգտագործելով և ցուցադրելով գիտելիքահենք տնտեսության օգուտները»: Ավելին, ՄՈՒՀ-ը պատրաստվում է մինչև 2024թ. դառնալ ագրոտեխնոլոգիական գերազանցության կենտրոն, որի համար հետազոտությունները դառնալու են հիմնական այն առաջ տանող ուժերից մեկը, որով ՄՈՒՀ-ը պետք է հասնի իր առջև դրված ռազմավարական նպատակին:

Նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը մշակել էր բարելավման պլան, որտեղ ՄԿԾ-ի մասով մեծամասամբ արդեն նախանշված փոփոխությունները կատարվել են: Նախորդ

հավատամագրման ժամանակ արդեն գնահատվել էր փոփոխությունները, և 2016թ. նոր կամ բարելավված ՄԿԾ-ով ուսուցումը մեկնարկել էր համապատասխան ուսումնական պլաններով:

Պետք է նշել, որ ՄՈՒՀ-ը 2018թ. օպտիմալացումից հետո 5 ֆակուլտետներում իրականացնում է 44 բակալավրի, 37 մագիստրոսի և 9 ասպիրանտուրայի կրթական ծրագրեր: Օպտիմալացումից հետո ՄՈՒՀ-ում առկա են 26 ամբիոններ, որոնք ինչպես սպասարկող են, այնպես էլ թողարկող: ՀԱԱՀ-ում առկա կրթական ծրագրերը կազմվել են ելնելով ՈԱՇ-ի պահանջներից: Հաշվի են առնվել TEMPUS ARMENQA ծրագրի շրջանակներում մշակված ոլորտային որակավորումների շրջանակը: Պետք է փաստել, որ ներկայացված բակալավրի և մագիստրատուրայի 3 ՄԿԾ-երը հիմանականում համահունչ են առկա ՌԾ-ին, որը գործում է մինչև 2020 թվականը: Հարկ է նշել, որ բուհը նախաձեռնել է կրթական ծրագրերի փոփոխություններ՝ համապատասխանեցնելու ՀԱԱՀ 2020-2024թթ. ՌԾ-ին, քանի որ 2019/20 ուսումնական տարում փոփոխվել են ուսումնական պլանները առանց փոփոխելու և համապատասխանեցնելու ՄԿԾ-ներին:

4 տարի 8 ամիս տևողությամբ բակալավրի ծրագիրը փոփոխվել է և դարձել է 4 տարի տևողությամբ՝ 240 ընդհանուր կրեդիտներով: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ նոր ուսումնական պլաններում նախատեսվում է նաև վերջին 4-րդ տարում աշխատանքային կիսամյակ, որի շնորհիվ ուսանողները կարող են մասնագիտական և պրակտիկ գիտելիքներ ձեռք բերել: ՄԿԾ մասնագրերը կազմվել են համապատասխան ձևաթերթով, սակայն ներկայացված ՄԿԾ-ներում, ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրոսական, կրկնվում են նպատակները: Բացի այդ, այցի ընթացքում պարզվեց, որ շատ առարկաներ իրենց բովանդակությամբ կրկնվում են մագիստրատուրայում. այս փաստը հաստատվեց տարբեր հանդիպումների ժամանակ:

Մագիստրոսական կրթությունը հիմնականում հետազոտահեն է, սակայն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ի ներկայացրած կրթական ծրագրերում հետազոտահեն բաղադրիչը թույլ է[6]: Տարբեր ավարտական աշխատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ շատ ուսանողների մոտ բացակայում է վերլուծական կարողությունները:

ՄՈՒՀ-ի որդեգրած առաքելությունը և տեսլականը՝ դառնալ հետազոտական գերազանցության կենտրոն չեն արտահայտվում ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի առկայությամբ և համապատասխանաբար դրա գնահատմամբ:

Վերլուծություններից պարզ դարձավ, որ ծրագրերի կրթական վերջնարդյունքերը շատ դեպքերում անհասկանալի են և չեն համապատասխանում բովանդակությանը կամ առարկայական վերջնարդյունքներին:

ՄԿԾ-երի համեմատվել են տարբեր համալսարանների ՄԿԾ-երի հետ: Սակայն պարզ չէր, թե համեմատության հետևանքով կոնկրետ, որ ծրագրերում ինչ փոփոխություն է կատարվել: Այցից պարզ դարձավ, որ Ավստրիական զարգացման գործակալության դրամաշնորհով BOKU-ի համալսարանի աջակցությամբ մշակվել է նոր կրթական ծրագիր, որը դեռևս քննարկման փուլում է:

ՀԱԱՀ-ը 2019-2020 ուստարվանից սկսած դադարեցնում է այն կրթական ծրագրերը, որոնք չեն համապատասխանում գյուղատնտեսության ոլորտին: Նախկինում, փաստորեն, ֆինանսա-տնտեսագիտական մասնագիտությունների կրթական ծրագրերով (հաշվապահական հաշվառում, ֆինանսներ, կառավարում և այլն) ավելի շատ ուսանողներ էին ընդունվում, քան բուն

[6] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:

գյուղատնտեսական ոլորտի ծրագրերով: Այժմ տնտեսագիտական մասնագիտությունների կրթական ծրագրերից պահպանվել են միայն գյուղատնտեսության հետ առնչություն ունեցողները՝ ագրոտնտեսագիտությունը և ագրոբիզնեսը:

Պետք է նշել, որ որոշ արտադրության ոլորտի մասնագիտական կարիքներն աստիճանաբար սկսվում են արտացոլվել կրթական ծրագրերում՝ դասախոսներին կարճաժամկետ արտադրություններ գործուղելու արդյունքում:

ՀԱԱՀ-ի նոր ուսումնական պլանների կազմման ժամանակ հաշվի են առնվել գործատուների կարծիքները, ներդրվել է ուսումնառության DUAL համակարգը. մի ամբողջ կիսամյակ տրամադրվում է ակտիվ պրակտիկաներին, որի արդյունքում ուսանողները գործնական ավելի շատ հմտություններ ձեռք կբերեն:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Ըստ ինքնավերլուծության արդյունավետության չափման կարևոր ցուցիչ է համարվում դասավանդում-ուսումնառություն-գնահատում համակարգերի միասնականության ապահովումը, որի իրականացման համարհամալսարանում մշակվել է համապատասխան քաղաքականություն և ընթացակարգ:

Համալսարանը ձգտում է ամբողջությամբ բացառել դասախոսություններթելադրելու ավանդույթը՝ կիրառելով ավելի ինտերակտիվ մեթոդներ՝ քննարկումներ, դեպքերի ուսումնասիրություններ և այլն:

ՀԱԱՀ դասախոսները, ՄԿԾ-երում ակնկալվող վերջնարդյունքներից ելնելով, ընտրում են ուսումնառության մեթոդներ և դրան համապատասխան գնահատման ձևեր: Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության համար մշակվել է քաղաքականություն և ընթացակարգեր:

Հարկ է սակայն նշել, որ ներկայացված ՄԿԾ-ներում[7] բացակայում են կամընտրական դասընթացները, որը կարևոր նախադրյալ է ուսանողակենտրոն ուսուցման համար: Բացի այդ, տարբեր ՄԿԾ-երում հիմնականում ընտրված դասավանդման մեթոդները նմանատիպ են, չնայած վերջնարդյունքները ՄԿԾ-երում տարբեր են: ՄՈՒՀ-ը սկսել է կիրառել MOODLE հարթակը, որի շնորհիվ փորձում են նվազեցնել դասախոսությունների թելադրությունները, սակայն ներկայում այն ծառայում է որպես շտեմարան նյութերի և դասախոսությունների պահպանման համար:

Ներկայացված կրթական ծրագրերի մասնագրերում մեծամասամբ ցույց տրված չէ կապը դասընթացի հայտարարված նպատակների և վերջնարդյունքների, հայտարարված դասավանդման և ուսումնառության մեթոդների միջև:

Այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների թվաքանակի քիչ լինելու դեպքում չի խրախուսում ինտերակտիվ մեթոդների կիրառումը, ինչպես նաև, որ պրակտիկ հմտությունների պակասը լրացնելու համար Համաշխարհային բանկի համաֆինանսավորմամբ կստեղծվի կենտրոններ, որոնց միջոցով կընդլայնվի տարբեր գործնական մեթոդների կիրառումը ուսումնառության ընթացքում: Ավելին, Ճապոնիայի կառավարության դրամաշնորհով կառուցվում է նոր խելացի ջերմատուն:

[7] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների վրա:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Ըստ ինքնավերլուծության ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների գնահատման քաղաքականություն ըստ ուսումնառության արդյունքների: Տարբեր ՄԿԾ-երում ուսանողը գնահատվում է կախված առարկայի մասնագիտական յուրահատկություններից: Գնահատման համակարգը բազմաբաղադրիչ է և իր մեջ ներառում է ուսանողների հաճախումները, գործնական կամ լաբորատոր, սեմինար պարապմունքներին ակտիվության աստիճանը, միջանկյալ և եզրափակիչ քննությունների միավորներով: Գնահատման քաղաքականությունը թույլ է տալիս յուրաքանչյուր ամբիոնի, ելնելով իր յուրահակություններից, սահմանել իր բազմաբաղադրիչ գնահատման միավորների սահմանները: Այցի ընթացքում պարզվեց, որ տարբեր ՄԿԾ թողարկող ամբիոններում ըստ իրենց յուրահատկության ակտիվությունը, հաճախելիությունը և այլ գործոններ տարբեր էին գնահատվում: Սակայն այդ բազմաբաղադրիչ գնահատման համակարգի մեջ բացակայում էր հետազոտական բաղադրիչի, ուսանողների կողմից տարբեր հմտությունների, ինչպես նաև վերջնարդյունքահեն գնահատումը:

ՀԱԱՀ-ում մեկնարկել են թեսթավորման կենտրոնի վերանորոգման և վերազինման աշխատանքները, որը որոշ ամբիոններին թույլ կտա իրականացնել իրենց գնահատումը այս համակագի միջոցով: Այցից պարզ դարձավ, որ այժմ ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների գնահատման համակարգի բարելավման քաղաքականություն:Ընդհանուր առմամբ ՄՈՒՀ-ը ավարտող ուսանողների վերջին մի քանի տարիների միջին գնահատականը եղել է 3.6:

ՄՈՒՀ-ում առկա է գրագողության դեմ պայքարի քաղաքականություն: Ակադեմիական ազնվության բարձրացման համար 2019 թ ռեկտորի հրամանով ձևավորվել է հատուկ հանձնաժողով, որը ուսումնասիրել է վերջին 2 տարիներին ավարտական աշխատանքները և գիտական խորհրդում ներկայացրել այդ ուսումնասիրության արդյունքները: ՄՈՒՀ-ում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկում են նաև գործատուներ որպես արտաքին շահակիցներ:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ որոշակի դասընթացներ անց են կացվում տարբեր արտադրական ձեռնարկություններում, սակայն դրանց գնահատման համակարգը հստակ չէր:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ՄՈՒՀ-ում սկսել են իրականացնել տարբեր ՄԿԾ-երի բենչմարքինգ: Մասնավորապես «Գինեգործության և խմորման տեխնոլոգիա» մասնագիտության համար ընտրվել է Գերմանիայի Գայզենհայմ համալսարանը ինչպես նաև Վրաստանի Ագրարային համալսարանը: Բենչմարքինգի արդյունքում 2019/20 ուսումնական տարվանից արդեն ուժի մեջ են մտել բենչմարքինգի արդյունքում տեղ գտած փոփոխությունները. մասնավորապես կրճատվել են առարկաների քանակը, կատարվել են որոշակի առարկաների ներմուծում և այլն: Բացի այդ «Անասնաբուժություն» մասնագիտության համար նույնպես իրականացվել է բենչմարքինգ, սակայն արդյունքները դեռևս չեն կիրառվել: Կնքվել են պայմանագրեր գործընկեր տարբեր համալսարանների հետ, որոնք կաջակցեն համալսարանին բենչմարքինգի իրականացման համար: Պետք է նշել, որ դասախոսների շարժունությունը դեպի արտերկիր գերազանցում է ներհոսքին: Վերջին տարիներին գրեթե բացակայում է ուսանողների ներհոսքը: Շարժունության հիմնական աղբյուր են հանդիսացել միջազգային դրամաշնորհները:

Ողջունելի է ՀԱԱՀ-ի այն մտադրությունը, որ ուսպլանում նախատեսվում է «պատուհան կիսամյակ»՝ ուսումնական բեռնվածությունից զերծ կիսամյակ, որի ժամանակ ուսանողը կարող է ուսումնառել արտասահմանյան գործընկեր բուհում՝ առանց ունենալու առարկայական տարբերությունների հետ կապված խնդիրներ ու լրացուցիչ պարտավորություններ: Կրթական ծրագրերի բենչմարքինգ իրականացնելու և արդյունքները տեղայնացնելու հարցում լավ փորձառություն է ինչպես Ագրոբիզնեսի դպրոցի ծրագրերը, այնպես էլ «Օրգանական գյուղատնտեսություն» մագիստրոսական ծրագիրը:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Ըստ ինքնավերլուծության ՀԱԱՀ-ում ծրագրերի մշտադիտարկման, գնահատման և վերանայման նպատակով մշակվել են «Կրթական ծրագրերի որակի գնահատման քաղաքականությունը»,«Կրթական ծրագրերի որակի գնահատման ընթացակարգը»և«Կրթության որակի կոմպլեքսի կարգը»:

2016թ.-ին Բոլոնիայի գործընթացի, ՀՀ ԿԳՆ-ի, ինչպես նաև ՀՀ ագրոպարենային համակարգի պահանջներին համապատասխան ՀԱԱՀ-ում ուսումնասիրվել, քննարկվել և վերանայվել են բոլոր ՄԿԾ-ները: Այդուհանդերձ, այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդ վերանայումները ֆորմալ-փաստաթղթային բնույթ են կրել՝ առանց հիմքում ունենալու ագրարային ոլորտի զարգացման միտումների, աշխատաշուկայի պահանջների, ազգային առաջնահերթությունների ուսումնասիրությունը: Կրթական ծրագրերի դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ վերանայվել և ՈՈՇ նկարագրիչների համապատասխան վերաձևակերպվել են կրթական ծրագրերի վերջնարդյունքները, սակայն դա չի հանգեցրել համապատասխան փոփոխության ծրագրերի կառուցվածքի ու բովանդակության մեջ. այսինքն դասընթացների քանակն ու բովանդակությունը, դասավանդման, ուսումնառության ու գնահատման ձևերն ու մեթոդները վերջնարդյունքահեն փոփոխության չեն ենթարկվել:

Իրական փոփոխությունները մեկնարկել են 2018-2019 ուստարվանից. պահպանելով կրթական ծրագրերի անվանումները՝ ամբողջովին փոխվել են ուսումնական պլանները: Չորսամյա բակալավրիատի անցումը ենթադրում է մոտեցումների բավականին արմատական փոփոխություն: Հիմնական նորամուծությունը կրթության դուալ համակարգն է մեկ աշխատանքային կամ պրակտիկայի (փորձուսուցման) կիսամյակի ներդրմամբ:

Փաստաթղթերի վերլուծության ու փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ թեև բուհում առկա են կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացը սահմանող փաստաթղթեր, այդուհանդերձ նախորդ հավատարմագրումից հետո ՀԱԱՀ-ում կրթական ծրագրերի կանոնակարգված և համալիր մշտադիտարկում չի անցկացվել, փոխարենը տարերայնորեն կազմակերպվել են գործատուների մոտեցումներն ու պահանջները վերհանող քննարկումներ, որոնք առավել հաճախակի բնույթ են ստացել վերջին մեկ տարվա ընթացքում: Գործատուների մասնակցությունը կրթական ծրագրերի ընդհանուր բարելավումներին տեղի է ունենում հետևյալ ձևաչափերով.

- մասնակցություն ամփոփիչ ատեստավորման գործընթացներին,
- դասավանդման մեջ ներգրավվածության աճ, բաց դասերի կազմակերպում,
- որոշ կրթական ծրագրերի առանձին դասընթացների ծրագրերի քննարկում («Ագրարային արտադրության էկոնոմիկա» դասընթացի օրինակով):

Բարելավման ազդեցությունը, մասնավորապես, դրսևորվում է ծրագրերի պրակտիկ հատվածն ուժեղացնելով («Գինու քիմիա» պրակտիկ առարկայի ներմուծումը որպես օրինակ), սակայն այս գործընթացն օրինաչափ և համատարած չէ: Քիչ են նաև գործատուների կողմից ավարտական աշխատանքների ղեկավարման դեպքերը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՀԱԱՀ ջանքերն ուղղված կրթական ծրագրերի բարելավմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ առկա է անհրաժեշտություն կրթական ծրագրերը ՀԱԱՀ-ի որդեգրած առաքելությանը և նպատակներին համապատասխանեցնելու տեսանկյունից: ՀԱԱՀ-ի որդեգրած նպատակները ենթադրում են մրցունակ, հետազոտահեն ու պրակտիկ հմտություններ ապահովող կրթական ծրագրերի առկայություն: Ներկայում այս հատկությունները բացակայում են առկա մասնագիտությունների կրթական ծրագրերում, ինչը խոչընդոտում է սահմանված նպատակների իրագործումը:

Չնայած փոփոխության են ենթարկվել և նոր ուսումնական տարվանից ներդրվել են նոր ուսումնական պլանները, որոնք հնարավորություն են ընձեռում ուսանողներին մեկ կիսամյակ գործատուի մոտ ուսանելու, այնուամենայնիվ ըստ ուսումնական պլանների կրթական ծրագրերի մասնագրերի մշակման անհրաժեշտություն կա, որոնք կնպաստեն վերջնարդյունքահեն կրթության ապահովմանը: Կարևոր է նաև նշել, որ ներկայում սովորող ուսանողների համար նույնպես անհրաժեշտություն կա ապահովելու պրակտիկ և աշխատաշուկային համապատասխան կրթություն, ինչը բուհը իրականացնում է դասախոսներին հնավարություն տալով անցնել դասընթացներ տարբեր արտադրամասերում: Այս մոտեցման շարունակականութունը կնպաստի աշխատաշուկային համապատասխան կրթության իրականացմանը:

Դրական է, որ բուհը, բացառելով թելադրությունների մեթոդը, որդեգրել է ինտերակտիվ դասավանդման մեթոդների կիրառումը, սակայն դիտարկելով ՀԱԱՀ-ի կրթական ծրագրերի հայտարարված վերջնարդյունքները՝ ակնհայտ է դառնում, որ նման վերջնարդյունքներ հնարավոր է ձեռք բերել հետազոտահեն կրթություն կազմակերպելու արդյունքում: Մինչդեռ, ոչ միայն դասընթացների ծրագրերում նկարագրված դասավանդման ու գնահատման մեթոդները չէին վկայում կրթության ու հետազոտության կապակցման մասին, այլև այդ կապակցման գաղափարն ինքնին հաճախ անհասկանալի էր շահակիցների մոտ: ՄԿԾ-ներում առկա վերջնարդյունքներին համապատասխան չեն ընտրվում դասավանդման և ուսումնառության մեթոդները, որը խոչընդոտում է ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների ձեռքբերումը: Կամընտրական դասընթացների ներդրումը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցման նախադրյալների ստեղծմանը:

Դասավանդում-ուսումնառություն-գնահատում շղթան պարզ չի արտացոլված ՄԿԾ-ներում, մասնավորպես, հմտությունների գնահատումը արտացոլված չէր ինչպես միջանկյալ, այնպես էլ վերջնական գնահատականներում, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրականցմանը:

Դրական է, որ բուհում իրականացվում են ՄԿԾ-ների բարելավումներ, կնքվում են պայմանագրեր միջազգային մակարդակում բենչմարքինգի իրականացման համար, սակայն փորձագիտական խումբը շեշտադրում է, որ իրականացվող քայլերը առավել համակարգման և նախապես պլանավորման կարիք ունեն, որոնք կնպաստեն բարեփոխումների առավել թիրախային իրականացմանը, բոլոր շահակիցներին բարեփոխումներին ներգրավմանը, ինչպես նաև մրցունակ կադրերի պատրաստմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԱԱՀ-ում վերջնարդյունք-դասավանդում-գնահատում շղթան դեռևս ներդրման փուլում է, կրթական ծրագրերում բացակայում է հետազոտական բաղադրիչը և վերլուծական կարողություններ ձևավորող դասավանդումն ու գնահատումը, որոնք կարևոր նախադրյալ են ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար, գնահատման համակարգը չի անդրադառնում պրակտիկ հմտությունների ստուգմանը, իրականացված բենչմարքինգի արդյունքների կիրառումը համատարած բնույթ չի կրում, բացակայում է դասախոսների և ուսանողների շարժունությունը, իրականացվող բարելավումները առավել համակարգման և հստակ պլանավորման կարիք ունեն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԱԱՀ-ն չի բավարարում Չափանիշ3-ի պահանջներին:

Եզրակացություն:Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Ըստ ինքնավերլուծության ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների կատարելագործումը մշտապես գտնվել է համալսարանի ուշադրության կենտրոնում:

ՀԱԱՀ հիմնականում ընդունվում են գյուղական համայնքներից, որտեղ սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների պատճառով աշակերտները հնարավորություն չեն ունենում կրկնուսույցների մոտ պարապել, որի պատճառով էլ միասնական քննություններում «մրցունակ» չեն լինում, կառավարության որոշման համաձայն վերջին 6 տարվա ընթացքում Ագրարային համալսարան ընդունվողների համար սահմանվել են ընդունելության արտոնյալ պայմաններ տարբեր մասնագիտությունների գծով:

Երկար տարիներ բուհը ստիպված է եղել իջեցնել ընդունելության անցողիկ շեմը, ինչի պատճառով համալսարան հիմնականում ընդունվել են դպրոցներում միջին կամ միջինից ցածր սովորող ուսանողներ: Արդյունքում աճել է ուսանողների թվաքանակը, սակայն մյուս կողմից ուսանողների մոտ սկզբնական գիտելիքների պակասը ազդեցություն է ունեցել կրթության որակի վրա: Սակայն այժմ ընդունելության քաղաքականությունը փոփոխության է ենթարկվել, և ընդունելությունն իրականացվելու է միասնական քննությունների արդյունքների վրա: Փոփոխությունների հիմնական պատճառը կայանում է նրանում, որ մինչ այժմ գործող մեխանիզմները եղել են հստակ, բայց ոչ արդյունավետ: 2020 թ. սկզբից ՀԱԱՀ-ը դիմորդների համար կազմակերպում է անվճար նախապատրաստական դասընթացներ Հայոց լեզու, մաթեմատիկա, օտար լեզու, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից: Հատկանշական է, որ դասընթացները նախատեսված են իրականացնել ինչպես Ագրարային համալսարանի գլխամասում, այնպես էլ Վանաձորի, Սիսիանի և Շիրակի մասնաճյուղերում:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ բուհում գործում են ուսանողների հավաքագրման մի շարք մեխանիզմեր: Համալսարանի կողմից իրականացվում են այցեր դեպի ՀՀ մարզերի ավագ դպրոցներ, որտեղ որոշակի ճանաչողական և տեղեկատվական աշխատանքներ են

իրականացվում աշակերտների հետ, օգնելով նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում: Ինչպես նաև հետագայում կօգտագործվի ինտերնետային հարթակը,որտեղ կներկայացվեն բուհի մասին պատմող հոլովակներ:Բուհի կողմից կիրառվող ուսանողների հավաքագրման մեթոդներից է նաև ՀՀ-ում իրականցվող տոնավաճառներին մասնակցությունը, որտեղ բուհը ներկայացնում է իր առանձնահատկությունները: Սակայն կիրառելով ուսանողների հավաքագրման տվյալ մեխանիզմները, բուհը դեռևս չի մշակել արդյունավետության գնահատման ցուցիչներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ չափել ուսանողների հավաքագրման մեխանիզմերի արդյունավետությունը:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Նախորդ հավատարմագրամ արդյունքների հիման վրա և ՀԱԱՀ-ի բարելավման ծրագրի շրջանակներում 2013թ.-ին մշակվել և ներդրվել է Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականությունը, համաձայն որի «Համալսարանի նպատակն է ապահովել որակյալ կրթական միջավայր, որտեղ ուսանողը կկարողանա բացահայտել իր կրթական կարիքները, կստանա մասնագիտական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ»:

ՀԱԱՀ-ում գործում են կարիքների վեր հանման մի քանի մեխանիզմեր.

- ռեկտորի, դեկանների պարբերական հանդիպումներն ուսանողության հետ,
- պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ուսանողին խորհրդատվության տրամադրում,
- դեկանների և ուսանողական խորհրդի ներկայացուցչի կողմից ուսանողների սոցիալական և կրթական կարիքների վերհանում ռեկտորատում՝ ուսանողների կողմից ստացված արձագանքի հիման վրա:

2018-2019 ուսումնական տարում վերանայվել է դասախոսների գնահատման հարցաթերթը, մեթոդաբանությունն ու նպատակը: Այժմ հարցաթերթերն ունեն բաց հարցեր, որոնք հնարավորություն են տալիս ուսանողների կարիքները գնահատել, ու ուսանողներն ազատ են շարադրել իրենց պատկերացումները, իսկ դասախոսների ու դասընթացի գնահատման քանակական մեթոդի հաշվարկման տրամաբանությունն ուղղված է ոչ թե դասախոսներին պատժելուն, այլ նրանց թերացումների վերհանմանը, և նրանց տրվում է հնարավորություն աշխատել իրենց թերացումները հաղթահարելու ուղղությամբ:

Ուսանողների բարձրացված հարցերին ՀԱԱՀ-ն փորձում է լուծումներ տալ, օրինակ պրակտիկայի վայրի փոփոխություն, թեզի թեմաների ընտրություն և փոփոխություն և այլն:

Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ թեև ուսանողները մասնակցում են հարցումներին, սակայն հարցումների արդյունքների վերլուծության վերաբերյալ չեն իրազեկվում: Հեռակա ուսուցմամբ ուսանողների շրջանում հարցումներ չեն իրականցվում:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Համաձայն ինքնավերլուծության 2016 թ-ին մշակվել և ՀԱԱՀ կայքում հրապարակվել է ՀԱԱՀ-ի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականություն, ըստ որի իրականացվում են լրացուցիչ պարապմունքներ և տրամադրվում է խորհրդատվություն ուսանողներին:

ՀԱԱՀ-ում պարբերաբար իրականացվում են հարցումներ լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու գործընթացի

կազմակերպման արդյունավետությունն որոշելու նպատակով: Հարցումները կազմակերպվել են «Շահակիցների կարիքների գնահատման կարգի» համապատասխան ու սահմանված մեխանիզմների և գործիքների միջոցով: 2018 թ-ի հարցումների արդյունքներով առկա ուսուցման բակալավրի հարցված ուսանողների 84%-ը նշել է, որ տեղեկացված է ամբիոններում իրականացվող խորհրդատվական ծառայություններից, 48%-ը նշել է, որ ընդգրկված է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում, իսկ 45.1%-ը հայտնել է բավարարվածություն խորհրդատվական ծառայություններով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ, որոնց ընթացքում ուսանողները լրացնում են իրենց բաց թողած դասընթացները: Լրացուցիչ պարապմունքներ են իրականացվում նաև անգլերեն լեզվից: Ուսանողները հիմանակնում օգտվում են խորհրդատվական ծառայություններից քննաշրջանի ժամանակ:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Նախորդ հավատարմագրամ արդյունքների հիման վրա ուսանողների ՀԱԱՀ վարչական կազմին դիմելու գործընթացը կանոնակարգելու նպատակով մշակվել և ներդրվել է Ուսանողներին վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կարգ, որում սահմանված է վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման նպատակը և կատարվող աշխատանքների ուղղվածություններն ըստ աջակցության տեսակի:

ՀԱԱՀ-ում սահմանված են ռեկտորի կողմից ուսանողների, աշխատակիցների և այլ շահառուների ընդունելության ժամանակացույցը, որը տեղադրված է ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԱԱՀ աշխատակազմը մշտապես պատրաստ է տրամադրել աջակցություն ուսանողությանը և բոլոր խնդիրներին տալ համապատասխան լուծումներ: Ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու ՀԱԱՀ ռեկտորի և պրոռեկտորների հետ հանդիպումներին և իրենց հուզող հարցերը քննարկել նրանց հետ: Իսկ դեկանատներն ու ամբիոնները մշտապես բաց են ուսանողների հարցերի քննարկման համար:

Ըստ ինքնավերլուծության 2018 թ-ի հարցումների արդյունքներով առկա ուսուցման բակալավրի հարցված ուսանողների 85%-ը նշել է, որ տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, 44%-ն օգտվում դրանցից, իսկ 41%-ը բավարարված է այդ ծառայություններով:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների բարելավման, ինչպես նաև աշխատաշուկայի և ոլորտային ներկայացուցիչների հետ կապերի ամրապնդման և այլ նպատակներով 2018թ.-ին Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը վերափոխվել է Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի: Բաժինն ակտիվ աշխատանքներ է իրականցնում շրջանավարտների բազայի ստեղծման, թափուր աշխատեղերի մասին ուսանողների տեղեկացվածության ապահովման և աշխատանքի տոնավաճառների և տարբեր սեմինարների կազմակերպմամբ:

Թեև Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժինը իրականացնում է համապատասխան գործառույթներ, որոնք հաստատված են կանոնակարգով, այնուամենայնիվ

ուսանողության շրջանում իրենց մասնագիտություններով զբաղվածության մակարդակը մնում է ցածր:

Համաձայն ինքնավերլուծության ՀԱԱՀ-ում պարբերաբար կատարվում են հարցումներ, ուղղված կրթական ծառայությունների գործունեության գնահատմանը, որի մեջ ներառված է նաև «Կարիերայի զարգացման և շարունակական կրթության» բաժնի գործունեության գնահատումը:

Ըստ2018 թ-ի հարցումների արդյունքների առկա ուսուցման բակալավրի հարցված ուսանողների 35%-ը նշել է, որ տեղեկացված է կարիերային նպաստող ծառայությունների մասին, 10%-ն նշել է, որ օգտվում է դրանցից, իսկ 8%-ը հայտնել է բավարարվածություն իրենց տրամադրված ծառայություններով:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում

ՀԱԱՀ-ն ջանքեր է գործադրում ուսանողներին ներգրավելու հետազոտական աշխատանքներում, ներգրավելով տարբեր գիտական կենտրոնների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներում, խրախուսելով իրականացնել դասախոսների հետ համատեղ հետազոտություններ:

ՀԱԱՀ-ում գործում է ՈՒԳԸ, որտեղ ուսանողները իրենց սեփական նախաձեռնությամբ պլանավորում և հրապարակում են իրենց գիտական աշխատանքները: Այս առումով ուսանողները ստանում են համապատասխան աջակցություն բուհի դասախոսական կազմի կողմից, սակայն դեռևս հրապարակված աշխատանքների թվաքանակը բավականին ցածր է, իսկ ՈՒԳԸ աշխատանքները համակարգման կարիք ունեն սեմինաների թեմաների ընտրության և մեծաթիվ ուսանողների ներգրաման տեսանկյունից:

Հետազոտական աշխատանքների ցածր լինելը թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ ՄԿԾ-ներում գրեթե բացակայում է հետազոտական բաղադրիչը:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ըստ ինքնավերլուծության ՀԱԱՀ-ի ուսանողների իրավունքներն սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀԱԱՀ կանոնադրությամբ և այլ ներքին նորմատիվային փաստաթղթերով: ՀԱԱՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինն է Ուսանողական խորհուրդը (ՈՒԽ), որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրության, ՀԱԱՀ կանոնադրության, ՀԱԱՀ Ուսանողական խորհրդի կանոնադրությամբ: ՀԱԱՀ-ի ՈՒԽ-ն ունի 25-տոկոսանոց ներկայացվածություն կառամարման բոլոր մարմիններում՝ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ:

ՀԱԱՀ-ի ուսանողական խորհրդի ներկայացուցիչներն իրազեկում են ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, պաշտպանում են ուսանողների կրթական շահերը և իրավունքները, մասնակցում են համալսարանի կառավարմանը՝ վեր հանելով ուսանողներին հուզող հարցերը, տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ կազմակերպում են միջոցառումներ:

Բուհի կողմից նաև մշակվել է «Առաջին կուրսի ուսանողների համար ուղեցույց», որն իր մեջ ներառում է այն ամբողջ տեղեկատվությունը կապված ուսանողների պարտականությունների և իրավունքների մասին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները մեծամասամբ տեղեկացված են ՈՒԽ գործունեության վերաբերյալ: Հիմնական տեղեկատվությունը ուսանողները

ստանում են ՈՒԽ պաշտոնական կայքէջից: Սակայն, փորձագիտական խմբի դիտարկումներից պարզ դարձավ, որ ուսանողական խորհուրդը ակտիվ չէ ուսանողների տարբեր խնդիրների վերհանման հարցում :

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ըստ ինքանվերլուծության դեռևս ՀԱԱՀ-ի 2012-2017թթ. բարելավման ծրագրի շրջանակներում մշակվել և ներդրվել է Կրթական ծառայությունների որակի ապահովման և գնահատման քաղաքականությունը, համաձայն որի համալսարանում իրականացվում է ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատում:

ՀԱԱՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման գործընթացը կանոնակարգելու նպատակով 2015 թ.-ին մշակվել և ներդրվել է է Շահակիցների կարիքների գնահատման կարգը, որը ներառում է ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներն ու գործիքները:

ՀԱԱՀ-ի ուսանողները.

- մասնակցել են որակի ապահովման գործընթացներում՝ որպես ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ներկայացուցիչներ,
- ներգրավված են եղել դասավանդման որակի գնահատման գործընթացում,

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հարցումների և տարբեր հանդիպումների միջոցով ուսանողները գնահատում են կրթական ծառայությունների որակը: Ինչպես նաև պարզ դարձավ, որ հանդիպումների հարցման արդյունքները չեն քննարկվում շահակիցների հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ բուհում ուսանողների ընդունելության քաղաքականությունը փոփոխությունների է ենթարկվել, և այժմ ընդունելությունն իրականցվելու է միասնական քննությունների արդյունքների հիման վրա, որի արդյունքում կարող է ուսանողների թվի նվազում լինել ՀԱԱՀ-ում, սակայն նպաստել որակյալ դիմորդների ներգրավմանը: Դրական է նաև նախապատրաստական դասընթացների մեկնարկը դիմորդների համար, որը կնպաստի առավել թվով դիմորդների ներգրավմանը: Դիմորդների հավաքագրման իրականացվող գործընթացները նպաստում են բուհի հեղինակության և տեսանելիության բարձրացմանը:

Դրական է գնահատվում այն փաստը, որ ՀԱԱՀ-ում սահմանված են հստակ ժամեր ուսանողներին տրամադրվող խորհրդատվության նպատակով, բացի այդ դասախոսական կազմը մշտապես պատրաստ է տրամադրել խորհրդատվություն ուսանողներին, ինչպես նաև հնարավորություն է տրվում ուսանողներին լրացնել բաց թողնված դասաժամերը, որը նպաստում է ուսանողների առաջընթացին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՈՒԽ և ՈՒԳԸ-ի առկայությունը բուհում, միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա ակտիվացնել և ՈՒԽ, և ՈՒԳԸ աշխատանքները, որը կնպաստի ուսանողների կրթական կարիքների բացահայտմանը և հետազոտական աշխատանքներում նրանց ներգրավվածության բարձրացմանը:

Դրական է, որ բուհում գործում է կարիերայի կենտրոնը, որը աջակցում է ուսանողներին կապ հաստատել աշխատաշուկայի հետ: Սակայն անհրաժեշտ է որոշակի փոփոխությունների ենթարկել արդեն իսկ առկա մեխանիզմերը, քանի որ, ուսանողության շրջանում անցկացված

հարցումներից պարզ է դառնում, որ ուսանողների մեծամասնությունը չի շարունակում աշխատել իր մասնագիտությամբ: Նմանատիպ վերլուծությունների իրականացումը և շրջանավարտների բազայի անընդհատ թարմացումը կբերեն բուհ-աշխատաշուկա ամրապնդմանը և կնպաստեն շրջանավարտների հետ կապի ամրապնդմանը:

Դրական է համարվում նաև այն հանգամանքը, որ շահակիցները, այդ թվում նաև ուսանողները ունենում են իրենց մասնակցությունը բուհի որակի ապահովման հարցերում: Միևնույն ժամանակ անհրաժեշտություն կա բարելավելու հետադարձ կապի մեխանիզմները հարցումներից հետո:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ բուհում առկա է ուսանողների հավաքագրման և ընդունելության ընթացակարգ, ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն, ինչպես նաև ուսանողներին հնարավորություն է տրվում մասնակցել լրացուցիչ պարապմունքների և ստանալ համապատասխան խորհրդատվություններ, նաև հաշվի է առնվում անմիջական շահակիցների կարծիքը որակի կառավարման հարցերում, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն ընդհանուր առմամբ ապահովում է ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայր և համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին: Միաժամանակ նշելով, որ անհրաժեշտ է ակտիվացնել ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՄՈՒՀ-ում առկա են ՊԴ անձնակազմի ընտրության քաղաքականություն և տարբեր ընթացակարգեր: Erasmus+ GOVERN ծրագրի շրջանակներում մշակվել են ՊԴ անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ, ուղեցույց ՊԴ անձակազմի համար, ՀԱԱՀ կադրային քաղաքականություն և այլ: Սակայն, շատ ընթացակարգեր դեռևս հստակ չեն օգտագործվում պրակտիկայում: Այցի ընթացքում պարզվեց, որ օպտիմալացման պատճառով պրոֆեսորների և դոցենտների մրցույթները դեռևս չեն իրականացվում և հետաձգվել են: Ուսումնաօժանդակ անձնակազմի համար մրցույթներ չեն իրականացվում, այլ ընտրվում են ելնելով ՄԿԾ առանձնահատկություններից և պահանջներից, հաստատվում են ռեկտորի հրամանով: Ուսումնաօժանդակ անձնակազմի պարտականությունները ըստ տարակարգերի ամրարգրված են ՄՈՒՀ-ի ներքին կարգապահական կանոններում, որը հաստատվել է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 2016թ.-ին: 2018 թվականին նոր միայն իրականացվել է ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի ատեստավորում: ՊԴ անձակազմի ատեստավորման կանոնակարգը մշակման փուլում է: Նախատեսվող 2020-2024թթ ՌԾ-ում ՄՈՒՀ-

ը ծրագրում է վերանայել ՊԴ անձակազմի ընտրության, կատարելագործման, ինչպես նաև բարելավել աշխատանքի գնահատման կարգերը:

ՀԱԱՀ-ն ձգտում է ոլորտի պրակտիկ մասնագետներին ներգրավել դասավանդման գործընթացում:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

ՊԴ անձնակազմի ընտրության համար հիմք են ընդունվում մասնագիտական որակավորումը, աշխատանքային փորձը, գիտական կոչումն ու աստիճանը և այլն: ՄԿԾ-ներում սահմանված չէ ՄԿԾ-ների պահանջներից բխող ՊԴ անձակազմի կարողությունների և հմտությունների մասին տեղեկատվությունը, որը կարող է հիմք հանդիսանալ ընտրության համար: Նոր հաստատված ուսումնական պլաններն արդեն առկա են, բայց դրանց կազմումը և ընդունումը կատարվել է առանց նոր ՄԿԾ-երի առկայության և դրանից բխող դասախոսներին ներկայացվող պահանջներից:

Նմանատիպ պահանջներ ՊԴ անձնակազմի առջև նախատեսվում է մշակել և հետագայում ներդնել արդեն նախատեսվող 2020-2024 թթ ՌԾ-ով:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

2019-2020 ուումնական տարում նախատեսվում է կիրառել ՊԴ կազմի կրեդիտային կարգով որակավորման բարձրացման նոր ծրագիր, իսկ դասախոսների գնահատման համակարգը ամբողջական դարձնելու նպատակով՝ ՀԱԱՀ ՊԴ կազմի վարկանիշավորման համակարգի ներդրում:

ՊԴ կազմի գնահատման նպատակով բուհում նաև իրականացվում են հարցումներ ուսանողների շրջանում: Համապատասխան արդյունքները վերլուծվում են մինչև հաջորդ ուսումնական տարվա մեկնարկը: Սակայն ներկայացված չեն, թե տվյալ արդյունքները հետագայում ինչպիսի ազդեցություն են ունենում դասախոսական կազմի որակական հատկանիշների վրա:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները իրականացնում եմ փոխադարձ դասալսումներ, որին մասնակցում է նաև ամբիոնների վարիչները, իսկ դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերում: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս դասալսումներ համատարած բնույթ չեն կրում:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

ՄՈՒՀ-ում առկա է շահակիցների կարիքների գնահաման կարգը, և դրա հիման վրա 2016-2018 թթ վեր են հանվել կարիքները, ներկայացվել է հաշվետվություն: ՊԴ անձնակազմի մեծամասնությունն անցնում է օտար լեզվի, մասնավորապես անգլերենի կատարելագործման դասընթացներ Լեզվի ուսուցման կենտրոնում: ՄՈՒՀ-ը վճարում է դասախոսների վերապատրաստման համար, ինչպես նաև բացի օտար լեզվի կատարելագործումից իրականացվնում է նաև SS կենտրոնի ռեսուրսների շնորհիվ համակարգչային գիտելիքների և ծրագրերի օգտագործման հմտությունների վերապատրաստումներ: Բացի սեփական ռեսուրսներից միջազգային տարբեր ծրագրերի շնորհիվ թվով 161 դասախոսներ 2015-2018 թթ վերապատրաստվել են արտասահմանյան համալսարաններում: Մրցութային կարգով 2017 թ. 4

դասախոս և 3-ը 2019 թ. մասնակցել են «Ինչպես դառնալ գերազանց դասախոս» ամառային դպրոցին, իսկ 2019 թ. սկսելու են արդեն համալսարանում նմանատիպ վերապատարաստումներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բոլոր դասախոսները չունեն միևնույն խնդիրները և կարիքները: Դասախոսների կարիքների վերհանումը, գնահատումը և եզրակացությունը տրվում է Որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից և չի ընդգրկում նշված ամբիոնները կամ ֆակուլտետները որտեղ դասավանդում են տվյալ դասախոսները: Հիմնական վերապատրաստումները արտասահմանյան համալսարաններում իրականացվում է Erasmus+ կամ այլ միջազգային ծրագրերի միջոցով: Այցից պարզ դարձավ, որ առաջիկա տարիներին հնարավոր է նաև համալսարանի միջոցների հաշվին դասախոսների որոշակի վերապատարաստումներ արտասահմանյան համալսարաններում:

Վերջին մեկ տարվա ընթացքում կազմակերպվել են վերապատրաստումներ դասախոսների համար տարբեր արտադրամասերում, որը շարունակական բնույթ է կրելու:

5.5ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՄՈՒՀ-ում առկա է հիմնական ՊԴ անձնակազմի կայունությունն ապահովող քաղաքականություն և ընթացակարգեր: ՄՈՒՀ-ում 2018/19 ուստարվա տվյալներով աշխատում է 600 դասախոս, որոնցից 93%-ը հիմնական դասախոսներ են: Պրոֆեսորները կազմում են մոտ 8%, դոցենտները մոտ 40%: Գիտական ասիճան ունի ՊԴ անձնակազմի մոտ 65%-ը: ՊԴ անձնակազմի ձևավորումը հիմնականում կատարվել է՝ օգտվելով սեփական բազայից մոտ 60%, մնացածը համալրվել են հարակից համալսարաններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարբեր ամբիոններում և ֆակուլտետնետրում քիչ են կամ բացակայում են հրավիրյալ դասախոսները:

Միջին տարիքը բավականին բարձր է և 2018 թ իրականացվել է օպտիմալացում երկու անգամ և կրճատվել են 75-ից բարձր տարիքով դասախոսները և այդ օպիմալացման արդյունքում նաև միավորվել են որոշ առարկաներ: Բացի այդ, այցի ընթացքում պարզաբանվեց, որ կան մասնագիտական առարկաներ, որոնք դասավանդվում են մեկ դասախոսի կողմից, և մասնագետների պակասի կամ բացակայության պատճառով դեռևս փոխարինող դասախոսներ չկան: Երիտասարդ կադրերի հոսքը բավականին ցածր է, քանի որ վարձատրությունը ցածր է և մագիստրոսներն, ավարտելով համալսարանը, չեն շարունակում իրենց կրթությունը ՄՈՒՀ-ում:

2018թ դրությամբ երիտասարդ դասախոսները հիմնականում արտաքին համատեղությամբ էին և ընդհանուր առմամբ կազմել են մոտ 14%: Երիտասարդ դասախոսների ցածր ներհոսքի հիմնական խնդիրը դա ցածր վարձատրությունն է, ինչի համար համալսարանը նախատեսում է բարձրացնել աշխատավարձերը մոտ 25%-ով: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում նորից սպասվում են օպիմալացումներ, որոնց արդյունքում ինչպես կբարելավեն դասախոսների վարձատրությունը, այնպես էլ կխթանեն երիտասարդ դասախոսների ներհոսքը համալսարան, կնվազեցնեն որակյալ ՊԴ անձնակազմի արտահոսքը: Պետք է նշել, որ ագրոտեխնոլոգիական գերազանցության կենտրոնին ձգտող համալսարանում քիչ են կենսաբանական, բժշկական կամ հարակից այլ մասնագիտություններով ՊԴ անձնակազմը:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովումը և զարգացումը համարվում է համալսարանի զարգացման ռազմավարական խնդիրներից մեկը:

ՄՈՒՀ-ում մշակվել է ՊԴ անձնակազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ բազմաթիվ ընթացակարգեր պրակտիկորեն չեն կիրառվում:

Ինչպես նաև պարզ դարձավ, որ բուհը որդեգրել է միջազգային վերապատրաստումներին դասախոսների մասնակցությունը խթանելու քաղաքականությունը և եղել են դեպքեր, երբ մասնակի փոխհատուցվել է ֆինանսական ծախսերը:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

2018 թ կառուցվածքային օպտիմալացումներից հետո ՀԱԱՀ-ն հստակեցրել է վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները: Բայց դեռևս մշակված չեն պաշտոնների անձնագրեր և աշխատանքի որակի գնահատման մեխանիզմներ:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում փոփոխվել են գրեթե բոլոր վարչական և ուսումնաօժանդակ կառույցների ղեկավարները, որոնք կկարողանան իրականացնել ՄՈՒՀ-ի 2024 թ ռազմավարական նպատակները, այն է. դառնալ ագրոտեխնոլոգիական գերազանցության կենտրոն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է հաամարում, որ ՄՈՒՀ-ում առկա են ՊԴ անձնակազմի ընտրության քաղաքականություն և տարբեր ընթացակարգեր: Ավելին մշակվել են մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք կարող են նպաստել մրցունակ և որակյալ կադրերի ներգրավմանը:

ՄՈՒՀ-ում առկա չեն ՄԿԾ-ից բխող ՊԴ անձնակազմի համար սահմանված պահանջներ, սակայն նոր ՌԾ-ով նախատեսվում են որոշակի փոփոխություններ: ՄԿԾ-ներում դասախոսական կազմին ներկայացվող պահանջները կնպաստեն ՄԿԾ-ների վերջնադյունքներից բխող համապատասան կարողություններով դասախոսական անձնակազմի ներգրավմանը և մրցունակության բարձրացմանը:

ՄՈՒՀ-ում առկա են դասախոսների գնահատման ընթացակարգեր, սակայն 2018 թ փոփոխություններից հետո վերանայվելու են նշված ընթացակարգերը: Ավելին արտաքին շահակիցները գրեթե չեն ներգրավվում գնահատման գործընթացում և տեղեկատվությունը հասանելի չէ ինչպես արտաքին այնպես էլ ներքին շահակիցների համար: Կրկին ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի փոփոխություններից հետո արդեն իսկ կատարվել են դասախոսների որոշակի գնահատումներ նոր կազմված հարցաթերթիկներով, որոնք նպաստել են առաջիկայում համապատասխան մասնագիտական առաջընթացի միջոցառումների իրականացմանը: ՄՈՒՀ-ը ձեռնարկել է դասախոսների վերապատրաստման պիլոտային ծրագիր, որը հնավարություն է ընձեռել դասախոսների պրակտիկ հմտությունների ձեռքբերում և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթության իրականացում՝ անցնելով վերապատրաստումներ տարբեր արտադրամասերում: Միջազգային ծրագրերի շրջանակներում կատարվում են դասախոսների վերապատրաստումներ, որոնք կնպաստեն մրցունակության բարձրացմանը: Դասախոսական անձնակազմի մասնագիտական առջընթացի միջոցառումների հստակ պլանավորումը կնպաստեն ոլորտի պրակտիկ փորձի ներդրմանը ուսումնական գործընթացում:

ՀԱԱՀ-ն քայլեր է ձեռնարկում դասախոսական կազմի երտասարդացման ուղղությամբ՝ աստիճանաբար սահմանելով մրցունակ աշխատավարձ: Պետք է նշել, որ ներկայում երիտասարդացման գործընթացը ՄԿԾ-ի որոշակի առարկաներում ապահովված չէ, իսկ որոշ առարկաներում առկա է մասնագետների սակավություն, որը վտանգում է կայնությունը:

Նախորդ հավատարմագրման արդյունքների ելնելով՝ մշակվել են մի շարք ընթացակարգեր, սակայն այդ ընթացակարգերը և քաղաքականությունը պրակտիկորեն չեն գործում և չեն նպաստում ոլորտի կարգավորմանը: Ավելին անհրաժեշտություն կա ամբողջապես վերանայելու այդ ընթացակարգերը և համապատասխանեցնելու ներկայիս պահանջներին ու ռազմավարական նպատակներին:

ՄՈՒՀ-ում առկա են ՌԾ-ի նպատակներն իրականացնելու համար վարչակազմ, բարձր որակավորում ունեցող ՊԴ և ուսումնաօժանդակ անձնակազմ: 2018 թ փոփոխություններից հետո կատարվել են կառուցվածքային փոփոխություններ և օպտիմալացումներ, որոնք կարող են նպաստել բուհում իրականացվող լայնածավալ բարեփոխումների շարունկական իրականացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում գործում են ՊԴ և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության քաղաքականության և տարբեր ընթացակարգեր, որոնք ներկայում բավարար հիմք են հանդիսանում ոլորտի կարգավորման համար, կատարվում են դասախոսների պարբերաբար գնահատումներ ինչպես հին, այնպես էլ արդեն լրամշակած հարցաթերթիկներով, ԾՄՈՒՀ-ի կողմից կարևորվում է դասախոսական կազմի երիտասարդացումը, մասնագիտական վերապատրաստումները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը բավարարում է Չափանիշ 5-ի պահանջները: Միաժամանակ նշելով, որ առաջիկայում սահմանված նպատակներին համապատասխան դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համալրման նպատակով, հարկ է վերանայել ներկայիս քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինպես նաև հստակ պլանավորել ոլորտի զարգացումը:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Նախորդ հավատարմագրման գործընթացի խորհրդատվություններից ելնելով, ՄՈՒՀ մշակել է բարելավման գործողությունների պլան հաստատված ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից 25.06.15թ: Բարելավման պլանում նախատեսված է եղել 1) Հետազոտությունների ոլորտում համալսարանի հետքարքրությունների և հավակնությունների բացահայտման մեխանիզմների մշակում և հաստատում, 2) Հետազոտությունների իրականացումն ու զարգացումն ապահովող քաղաքականության մշակում և հաստատում: Այցի ընթացքում հաստատվեց, որ կան բազմաթիվ մշակված և ընդունված ընթացակարգեր, որոնք սակայն շատ դեպքերում չեն գործում:

2018-2022 թթ ռազմավարություն մեջ հստակ արտացոլված չեն հետազոտությունների ոլորտում ՄՈՒՀ-ի հիմնական խնդիրները և դրանց լուծման մեխանիզմները, ինչպես նաև հավակնություններն ու հետաքրքրությունները: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ին 2020-2024 թթ ռազմավարությամբ ձգտում է դառնալ հետազոտական գերազանցության կենտրոն՝ նպաստել ժամանակակից ագրոպարենային ոլորտում գիտական և հետազոտական արդյուքների ստացմանը և ներդրմանը: Այս ուղղությամբ ՀԱԱՀ-ն շեշտադրում է իր գիտահետազոտական

կենտրոնների դերը և գիտահետազոտական կենտրոններում իրականացվող հետազոտությունները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քննարկման փուլում է գտնվում նոր ՌԾ-ով նախատեսված գործողությունները, որով պլանավորվում է գիտահետազոտական ստորաբաժանումների կառուցվածքի օպտիմալացում, մարդկային կարողությունների զարգացում և այլն: ՄՈՒՀ-ը խնդիր է դնում բարելավել և զարգացնել կրթություն- գիտություն-արտադրություն կապը, և հետագայում նախատեսվում է սահմանել հետազոտական առաջնահերթություններ ըստ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ազգային առաջնահերթությունների:

ՄՈՒՀ-ի բյուջեում գիտական հեազոտությունների համար նախատեսված չեն առանձին հատկացումներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց որ ՄՈՒՀ-ը չի սահմանել գիտական առաջնահերթություններ՝ կախված աշխատաշուկայից կամ պետական պատվերից կամ այլ գործոններից ելնելով:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՀԱԱՀ-ն իր 2020-2024թթ. ՌԾ-ում ընդհանուր առմամբ սահմանել է հետազոտության ոլորտում իր երկարաժամկետ հավակնությունները: Սակայն, հաշվի առնելով, որ ռազմավարությունը դեռևս ընդունված չէ, ՄՈՒՀ-ը չի սահմանել կամ ընդունել իր համար կարճաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծարգրեր հետազոտությունների ոլորտում, որը համահունչ կլինի 2020-2024 ռազմավարական առաջնահերթություններին:

ՀԱԱՀ-ում առկա են պետական բյուջեից ֆինանսավորվող բազային և թեմատիկ ծրագրեր, սակայն դրանք արտացոլված չեն որպես կարճաժամկետ և միջնաժամկետ առաջնահերթություններ:

2019թ ՄՈՒՀ-ը սահմանել է գիտական աշխատանքների հրապարակման համար լրավճարներ: Նախատեսվում է մշակել ՄՈՒՀ-ի կողմից հետազոտական գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Համաձայն ինքնավերլուծության Համալսարանի կառուցվածքային մասն են հանդիսանում երկրի ագրոպարենային ոլորտում գիտահետազոտական աշխատանք իրականացնող կառույցների զգալի մասը:

Համալսարանի նոր ղեկավարությունը, խիստ կարևորելով հետազոտության ոլորտում կայուն զարգացումը, ռազմավարական խնդիր է դրել ագրոպարենային ոլորտի մարտահրավերներին և միտումներին համահունչ իրականացնել գիտահետազոտական գործունեության ուղղությունների և հետազոտական առաջնահերթությունների վերանայում, ինչպես նաև ոլորտի ֆինանսական կայունություն և անկախություն ապահովելու համար ձգտել իրականացնել կիրառական և ներդրումային նշանակություն ունեցող գիտական ծրագրեր: Ներկայում, մշակված չեն հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականություն համահունչ 2020-2024 ՌԾ-ի առաջնահերթությունների:

ՄՈՒՀ-ում առկա չեն այնպիսի հետազոտական աշխատանքներ, որոնք առևտրայնացվել են և կարող են նպաստել զարգացմանը: Գիտական ենթակառուցվածքները շատ հին են և մաշված, չեն

համապատասխանում ժամանակակից պահանջներին և դեռևս չեն ապահովում ՄՈՒՀ-ի զարգացումը:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Վերջին 5 տարիների ընթացքում տպագրել են տարբեր միջազգային գրախոսվող պարբերականներում հոդվածներ, որոնցից 55 համատեղ արտասահմանյան գործընկերների հետ: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ ՄՈՒՀ-ից գործուղվել են տարբեր միջազգային գիտական կոնֆերանսներին և փառատոներին մասնակցելու համար: Համալսարանը 2019թ.-ի սեպտեմբերից ներդրեց պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ, որով խրախուսվում է նաև միջազգային համագործակցությունը: Կարգի կիրառման արդյունքում 2019թ.-ի դեկտեմբերին պրոֆեսորադասախոսական անձնակազմին վճարվել է 1 233 000 ՀՀ դրամի լրավճար:[8]

Սակայն ՄՈՒՀ-ում օտար լեզվի իմացության պակասը դժվարեցնում է միջազգային համագործակցությունը, չկան գիտական հետազոտությունների ոլորտում համագործակցելու մեխանիզմներ և համապատասխան միջոցառումներ: ՄՈՒՀ-ի նոր ՌԾ-ում կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, նախատեսվում է ունենալ ԳԱՑ գնահատելու համար այդ գործունեության արդյունավետությունը:ՀԱԱՀ-ում ստեղծվել է միջազգային գիտական ծրագրերի համակարգման բաժինը: Իր գործունեության ընթացքում բաժինը կազմակերպել է մի շարք աշխատանքներ նպաստելու գիտության զարգացմանը բուհում, մասնավորապես իրականացրել է վերապատրաստումներ՝ ձգտելով աջակցել գիտական գործունեության իրականացմանը և դրա միջազգայնացմանը: Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ բաժնի արդյունավետությունը կարելի է գանահատել, երբ աշխատանքների ամբողջական ցիկլն ավարվտված կլինի:[9]

Բացակայում են դեպքերը, երբ ՄՈՒՀ-ը ֆինանսավորում է ուսանողների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների շարժունությունը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2019 թ. եղել է որոշակի շարժունություն ՄՈՒՀ-ի մասնակի աջակցությամբ:

Միջազգային համագործակցությունը զարգացնելու համար առկա չէ ժամանակակից գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումների բազան, ինչը նույնպես դժվարեցնում է միջազգային համագործակցության ընդլայնումը կամ նորերի ստեղծումը:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ումառկա է Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և ընթացակարգ: Ներկայացված երեք ՄԿԾ-ներում առկա է գնահատման բազմագործոն կամ բազմաբաղադրյալ համակարգը, սակայն այդ համակարգում առկա չեն հետազոտական գործունեության գնահատման մեխանիզմները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դեռևս հետազոտական բաղադրիչի գնահատման համակարգը, և մեխանիզմները ՄԿԾ-ներում քննարկման փուլում են և կարող են ներդրվել նոր ուսումնական տարում: Որոշ ուսանողներ կատարել էին հետազոտական

[8] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:
[9] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:

աշխատանքներ, որոնք նախապես պլանավորման մաս չէին կազմում, և այն գնահատում էին որպես ակտիվություն: ՄԿԾ-ների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական կարողությունների ձևավորմանը միտված հանձնարարականները քիչ են, իսկ շատ դեպքերում բացակայում են: Ավարտական աշխատանքները հիմնականում նկարագրական բնույթ ունեին, իսկ վերլուծական և հետազոտական մասը բացակայում էր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրումից հետո ՄՈՒՀ-ը ըստ ներկայացված խորհրդատվությունների մշակել է բարելավման պլան և համապատասխան ժամանակացույց շտկելու հետազոտության ոլորտում առկա թերությունները: Փորձագիտական խումբը գնահատում է բուհի ջանքերն ուղղված հետազոտական ոլորտի զարգացմանը, որն էլ իր արտացոլումն է գտել 2020-2024 ռազմավարական ծրագրում: Դրական է նաև այն, որ բուհը փորձ է կատարում ուսումնասիրել ֆերմերների խնդիրները, այդ խնդիրներից ելնելով մշակել ուսանողների ավարտական աշխատանքների թեմաներ, որոնք կնպաստեն կիրառական հետազոտությունների իրականացմանը:ՀԱԱՀ-ի Միջազգային գիտական ծրագրերի համակարգման բաժինը ջանքեր է գործադրում բուհի գիտության զարգացման և միջազգայնացման համար:[10]

Սակայն, միևնույն ժամանակ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այժմ հետազոտական ոլորտի զարգացումը դեռևս պլանավորման , իսկ որոշակի դեպքերում իրականացման փուլում է: Հստակ սահմանված չեն բուհի հետազոտական ուղղություններն ու հավակնությունները առաջիկա մի քանի տարիների համար, ինչպես նաև առկա չեն կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրեր, որոնք հնավարություն կտային ճգրտելու երկարաժամկետ ռազմավարական ուղղությունները: Բուհը պլանավորում է մշակել հետազոտական ոլորտի զարգացման հստակ քաղաքականություն և արդյունքների գնահատման գործիքակազմ, որը կնպաստի ռազմավարական նպատակների իրագործմանը և հետազոտական ոլորտի համապարփակ զարգացումը: Հարկ է նշել, որ առկա գիտական ներուժի ու ենթակառուցվածքների գնահատումը կնպաստի ոլորտի արագընթաց ու համաչափ զարգացմանը[11]:

Փորձագիտական խումը կարևորում է նաև նյութատեխնիկական բազայի թարմացման և համալրման խնդրի դիտարկումը, քանի որ ներկայում տվյալ բազան մեծամասամբ չի ապահովում ժամանակից հետազոտությունների պահաջները և չի ծառայում ժամանակակից գիտելիքներով, կարողություններով և ունակություններով կադրերի պատրաստմանը: Նմանատիպ գիտական ենթակառուցվածքը չի նպաստում միջազգային համագործակցության լիարժեք իրականացմանը և հետազոտությունների միջազգայնացմանը:

Հարկ է նաև դիտարկել դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներում ներգրավվածության խրախուսման մեխանիզմների զարգացումը, քանի որ շատ դասախոսներ մոտիվացված չեն իրականացնելու հետազոտություն, և այդ արդյունքները ներդնելու ուսումնական գործընթացում: Դասախոսների և ուսանողների համար խրախուսման հստակ պլանի և մեխանիզմների ներդրումը կնպաստեն հետազոտական ոլորտի զարգացմանը:

Չնայած նրան, որ ՀԱԱՀ-ում կան առանձին դեպքեր, երբ ուսանողները կատարել են կիրառական հետազոտություններ[12], սակայն բուհումուսանողն ավելի շատ սերտում է, քան

[10] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:
[11] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:
[12] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:

վերլուծում, համեմատում և համադրում: ՄԿԾ-ներում թույլէ հետազոտական բաղադրիչը, իսկ ուսանողներին տրվող հանձնարարականների մեծ մասը վերլուծական բնույթ չեն կրում: Այս ոլորտում ՀԱԱՀ-ն շատ անելիքներ ունի, իսկ հետազոտության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ մեխանիզմների և պլանի առկայությունը կնպաստեն ուսանողների և դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը, ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԱԱՀ-ի հետազոտական ոլորտի զարգացումը գտնվում է պլանավորման փուլում, ոլորտի զարգացման համար մշակված չեն զարգացման հստակ քաղաքականություն և ոլորտի արդյունավետության գնահատման ցուցանիշներ, հստակ չեն ՄՈՒՀ-ի գիտահետազոտական ոլորտի հետաքրքրություններն ու հավակնությունները, որը կիսում են բուհի բոլոր շահակիցները, առկա չեն երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, դասախոսների և ուսանողների քիչ են ներգրավված ինչպես գիտական, այնպես էլ կիրառական հետազոտական աշխատանքներում, թույլ է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապցման մեխանիզմները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԱԱՀ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Համալսարանի ենթակառուցվածքների բարելավումն ու զարգացումը հռչակված է որպես ռազմավարական նպատակ ՀԱԱՀ-ի զարգացման 2018-2022թթ. ռազմավարական ծրագրում: ՀԱԱՀ-ի զարգացման 2020-2024 թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը ևս ռազմավարական նպատակ է դիտարկում համալսարանի առաքելությանը, տեսլականին ու նպատակներին համապատասխան ռեսուրսների առկայության ապահովումը. ընդ որում՝ առաջնահերթ է համարվում լսարանային և լաբորատոր պայմանների բարելավումը, ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացումը, մասնաշենքերի վերանորոգումը, «խելացի կրթության» միջավայրի ապահովումը, համալսարանի կարիքներին համապատասխան մարդկային ռեսուրսների ապահովումը: Հարկ է նշել նաև, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհդատվությունների հիման վրա ՀԱԱՀ-ը հանձն էր առել շարունակապես բարելավել համալսարանի ուսումնանյութական բազայի և լաբորատորիաների հագեցվածությունը:

Համալսարանում որոշ մասնագիտությունների գծով առկա է օրինակելի ռեսուրսային բազա: Որպես օրինակ կարելի է դիտարկել ՀԱԱՀ գինեգործության ուսումնաարտադրական կենտրոնը: Ենթակառուցվածքի զարգացման և ռեսուրսային ապահովվածության տեսանկյունից պետք է մատնանշել Ագրոբիզնեսի դպրոցը:

Համալսարանն իր ենթակայության տակ ունի 6 ուսումնական մասնաշենք և մեկ «Արաբկիր» հանրակացարան Երևան քաղաքում, ուսանողների և աշխատողների հանգստյան տուն

Աղավնաձոր համայնքում, «Բալահովիտ», «Սպիտակ» և «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսություններ, «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղ, «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղ: Համալսարանի ենթակայությամբ գործում է նաև մեքենատրակտորային կայան, ջերմոցային տնտեսություն:

ՀԱԱՀ-ն ունի գրադարան, որտեղ առկա է մասնագիտական գրականություն, էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու համար նախատեսված համակարգիչներ, ընթերցասրահ: Գրադարանում իրականացվում են մասնագիտական գրականության թվայնացման ուղղությամբ աշխատանքները, ինչպես նաև գրականության պատվիրման և մատակարարման գործընթացի էլեկտրոնայնացում ու ավտոմատացում: Այդուհանդերձ փորձագիտական աշխատանքներից պարզ դարձավ, որ գրադարանի համալրումը ժամանակակից հայալեզու մասնագիտականգրականությունը դեռևս սակավաթիվ է[13]:

ՄԿԾ-ների դասընթացների ծրագրերում ներկայացված գրականության, ինչպես նաև բակալավրի և մագիստրոսի ավարտական աշխատանքների գրականության ցանկերի դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ ժամանակակից մասնագիտական գրականության հոդվածները սակավաթիվ են::

ՀԱԱՀ-ն ունի ուսումնական լաբորատորիաներ, ուսումնափորձնական ենթակառույցներ, որոնք անհրաժեշտ են ուսանողների ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, ուսանողներին պրակտիկ հմտություններ սովորեցնելու համար: Փորձագիտական խմբի ենթակառուցվածքների և ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ ենթակառուցվածքն ընդհանուր առմամբ, չհաշված առանձին բացառությունների, հին է, շատ դեպքերում սահմանափակեն լուսավորության, օդափոխության, ջեռուցման պայմանները, չեն պահպանվում սանիտարահիգիենիկ նորմերն ու անվտանգության կանոնները:

Փորձագետների մոտ մի քանի տեսական պարապմունքներին ներկա գտնվելուց պարզ դարձավ, որ, որ դասասենյակային ենթակառուցվածքը բարելավման կարիք ունի: Այս տեսանկյունից Ագրոբիզնեսի դպրոցի միջավայրը լավ օրինակ է դիտարկվում:

Իր առջև դրված խնդիրների տեսանկյունից բարելավվել են ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղի ենթակառուցվածքն ու ռեսուրսները: Մասնաճյուղն ունի թարմ գույքով կահավորված, ջեռուցվող դասասենյակներով, անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով հագեցած ուսումնական լաբորատորիաներով մասնաշենք:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ըստ ինքնավերլուծության և կից ներկայացված փաստաթղթերի ՀԱԱՀ-ի ֆինանսական մուտքերի մեծ մասը կազմում են ուսանողների վարձավճարները և պետպատվերով սովորող ուսանողների ծախսերի փոխհատուցումը պետության կողմից: Կարևորելով ֆինանսական մուտքերի բազմազանությունը և դիվերսիֆիկացումը՝ համալսարանի ղեկավարությունը քայլեր է ձեռնարկում այլընտրանքային ֆինանսական միջոցներ գտնելու ուղղությամբ:

2018-2022թթ ռազմավարական ծրագրով նպատակ է դրված ապահովել բուհի ֆինանսական համակարգի կայունությունը՝ բարձրացնելով ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետությունը և ներգրավելով ֆինանսական հոսքեր արտաքին աղբյուրներից:

[13] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:

Ինքնավերլուծության ուսումնասիրման և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ն ունի ռեսուրսներ, որոնցով կարելի է սկսել ներդրումային ծրագրեր, ներգրավել հանրային և մասնավոր միջոցներ, ստեղծել ավանդաշնորհային (endowment) ներդրումային ֆոնդեր և այլն: Համալսարանի ղեկավարությունը նպատակ ունի բուհի եկամուտները բազմազանեցնել, ինչպես առկա բազայի զարգացման այնպես էլ ավանդաշնորհային ֆոնդեր ստեղծելու միջոցով:

Ֆինանսական միջոցների սղության, ուսանողների թվի նվազման միտումների պայմաններում բուհում տեղի է ունեցել գիտամանկավարժական կազմի աշխատավարձի բարձրացում: ՀԱԱՀ-ի բյուջեի ծախսերի մեծ մասը կազմում է աշխատավարձերը, ուստի կրթական ծրագրերի նպատակներին հասնելու համար պահանջվող մյուս ծախսերի համար բուհի միջոցներն ավելի քիչ են: Վերջինս լրացնելու նպատակով ՀԱԱՀ-ն նախատեսում է իրականացնել պետական և մասնավոր կառույցների հետ համագործակցություն: Վերջին մեկ տարվա ընթացքում բուհի հետ համագործակցության ծրագրերում ընդգրկվել են. ՀՀ կառավարությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, Համաշխարհային բանկը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ), ICARE հիմնադրամը, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությունը, «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը, «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը, որոնց հետ համագործակցային ծրագրերով ՀԱԱՀ-ի ենթակառուցվածքի և ռեսուրսների զարգացմանը ներդրվել և ներդրվելու է 570 մլն ՀՀ դրամ:

Ինքնավերլուծությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ի բյուջետային պլանավորումը ներկայում կենտրոնացված կարգով է իրականացվում. բուհի գիտահետազոտական կենտրոններն առանձին բյուջե չունեն:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ՀԱԱՀ-ի ֆինանսական գործունեության իրավական հիմքն են կազմում «Հաշվապահական հաշվառման մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները, բուհի կանոնադրությունը, ֆինանսական ռեսուրսների կառավարումն ու բաշխումն արտացոլող փաստաթղթերը:

Փորձագիտական վերլուծություններից պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ում առկա չէ կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն: Կրթական ծրագրերի իրականացման ցուցիչը բուհը համարում է համապատասխան մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովումը: ՀԱԱՀ-ի ծախսերի մեծագույն մասն ուղղվում է աշխատավարձերի վճարմանը:

ՀԱԱՀ-ի ֆինանսական միջոցների բաշխումը ըստ ծախսային հոդվածների իրականացվում է համաձայն հաստատված ֆինանսական նախահաշվի, որը հաստատվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ագրարային համալսարանի զարգացման ռազմավարական նոր ծրագրի ուսումնասիրման և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը

ՀԱԱՀ-ում սկսել են իրականացնել՝ հիմքում ունենալով ռազմավարական ծրագրով սահմանված խնդիրները, գործողությունները և դրանց գնահատման ցուցիչները։

Ինքնավերլուծության ուսումնասիրման և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ը որդեգրել է ռեսուրսների անարդյունավետ բաշխումը նվազեցնելու, և դրանք կարևորագույն ռազմավարական նպատակներին ուղղորդելու քաղաքականություն։ ՀԱԱՀ-ի ենթակառուցվածքն ու ռեսուրսային բազան, ձևավորված լինելով հիմնականում խորհրդային տարիներին, ժամանակի ընթացքում չեն ենթարկվել «խելացի գյուղատնտեսության», ժամանակի պահանջներին համահունչ թարմացումների և բարելավումների։

Թեև ՀԱԱՀ-ը մեկուկես տարվա ընթացքում ֆինանսական մեծ միջոցներ է կարողացել հայթայթել և ներդնել ենթակառուցվածքի և ռեսուրսների զարգացման մեջ, այդուհանդերձ այս բարելավումների մասնագիտությունների կրթական ծրագրերի վրա դրական ազդեցությունը դեռևս տեսանելի չէ։ Համագործակցության և զարգացման ծրագրերով նախատեսված ռեսուրսները հիմնականում դեռևս առկա չեն, և դրանց ազեդցությունը հիմնականում հասանելի չէ ուսանողներին։ Ներկայումս զարգացման ծրագրերն իրականացման սկզբնական փուլում են. օրինակ՝ ջերմատունը, ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնը, որոնց համար մեծ գումարներ են ներդրվել, դեռևս հիմնանորոգման ընթացքում են, իսկ, օրինակ՝ Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում «Խելացի մասնաշենք» ծրագրով նախատեսված գործողություններից դեռևս միայն վթարային մասնաշենքի քանդման մրցույթն է հայտարարված։

ՀԱԱՀ-ի ֆինանսական փաստաթղթերի վերլուծության և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ բուհի առջև ծառացած ամենահրատապ խնդիրներից խոշորագույնը, աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումն է, ինչին ուղղված է բուհի ծախսերի ութսուն տոկոսը (2018 թ. դրությամբ աշխատավարձը կազմել է ծախսերի 75%-ը, իսկ գիտական ծախսերը, որոնց մեծ մասը գիտական համակազմում վճարվող աշխատավարձն է, կազմել է 5,4%, որը ֆինանսավորվել է բացառապես Գիտության պետական կոմիտեի կողմից)։ Ու թեև վերջին մեկ տարվա ընթացքում դասախոսների աշխատավարձերն աճել են մեկ քառորդի չափով, և 2020թ. հունվարից էլ նախատեսվում է ևս տասը տոկոս աճ, այնուամենայնիվ այդ աշխատավարձերը ցածր են։

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ։

ՀԱԱՀ-ում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների իրավական հիմքն է հանդիսանում Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգը, իսկ գործընթացները կազմակերպելու համար գործում է առանձին վարչական ստորաբաժանում. ՀԱԱՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը։ Վերջինս իրականացնում է տարբեր գործառույթներ բուհի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության ավտոմատացման, նոր համակարգերի տեղադրման գործում։ ՀԱԱՀ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը գործունեություն է ծավալում տեղեկատվության ու փաստաթղթավորման գործընթացները ավտոմատացնելու և էլեկտրոնայնացնելու գործում տեղական և միջազգային փորձն ուսումնասիրելու ուղղությամբ։

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացման նպատակով կիրառվում է Mulberry 2 էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգը, որն ապահովում է բուհի փաստաթղթաշարժի 80%-ի կատարումն էլեկտրոնային եղանակով։ Mulberry համակարգի

ներդրման համար կազմակերպվել է համալսարանի թվով 235 աշխատակցի ուսուցում/վերապատրաստում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ն կիրառում է ուսումնառության MOODLE էլեկտրոնային կառավարման գործիքը: Այդուհանդերձ այդ գործիքի կիրառումը նախատեսվում է թելադրվող դասախոսությունների պրակտիկան վերացնելու համար: Փորձաքննության ընթացքում MOODLE գործիքը ՀԱԱՀ-ում ծառայում էր որպես դասախոսության նյութերի պահեստ (storage): Իսկ դասախոսների հանձնարարությունների, հաղորդակցման և այլ ֆունկցիաները շատ քիչ դասերի դեպքում են կիրառվում (խոսքն, իհարկե, չի վերաբերում Ագրոբիզնեսի դպրոցին, որտեղ MOODLE գործիքը կիրառվում է իր ողջ ֆունկցիոնալ գործիքակազմով):

ՀԱԱՀ-ում գործում է նաև ընթերցողների էլեկտրոնային սպասարկման և գրադարանային գործի ավտոմատացման համակարգը (koha.anau.am):

ՀԱԱՀ-ում ներդրվել և արդյունավետ գործում է ebsh համակարգը, որն ավտոմատացնում և էլեկտրոնայնացնում է բուհի կրթության կազմակերպման մի քանի ուղղություններ (ուսումնական պլաններ, դասացուցակներ, քննաշրջանի ժամանակացույցներ և այլն): Միևնույն ժամանակ այս համակարգից չեն օգտվում և համակարգի մաս չեն կազմում ՀԱԱՀ ուսանողները:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համաձայն ինքնավերլուծության՝ ՀԱԱՀ-ում պարբերաբար իրականացվում են աշխատանքներ պատշաճ կերպով կազմակերպելու առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված գործընթացները: Համալսարանում առկա են քաղպաշտպանության կառուցվածքային և պլանային փաստաթղթերը, ստեղծված են առաջին բուժօգնության, տարհանման օղակներ, նկարագրված են նրանց ֆունկցիոնալ պարտականությունները: Համալսարանում աշխատանքներ են իրականացվում հակահրդեհային համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Բուհում առկա է բուժկետ՝ առաջին օգնության համար նախատեսված անհրաժեշտ դեղորայքով:

Ինքնավերլուծության ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ համալսարանի մասնաշենքերը ոչ ամբողջությամբ են համապատասխանում անվտանգության ժամանակակից պահանջներին և հատուկ կարիքներ ունեցող անձանց խնդիրներին: Համալսարանի մասնաշենքերում բացակայում են թեքահարթակներ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժվելը դյուրացնելու համար: Բուհի որոշ մասնաշենքերում փորձագիտական այցի ժամանակ բացակայում էին դրանց հատակագծերն ու տարհանման սխեմաները: Ցածր է անվտանգության ապահովման մակարդակը հատկապես լաբորատոր պարապմունքների ժամանակ. մասնավորապես անվտանգ չէ քիմիական նյութերի հետ ուսանողների աշխատանքը: ՀԱԱՀ-ի աշխատակիցները պարբերաբար չեն անցնում կանխարգելիչ բժշկական հետազոտություններ:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են շրջանավարտների, դասավանդողների և ուսանողների շրջանում անցկացվող

հարցումները, առանձին խմբերի ներկայացուցիչների հետ SWOT վերլուծությունները, ազատ քննարկումները, որակական անհատական հարցազրույցները:

Ռեսուրսային բավարավածությունը գնահատելու և կարիքները վերհանելու ուղղությամբ Որակի գնահատման և ապահովման /ՈԳԱ/ կենտրոնի կողմից իրականացվում են միջոցառումներ. գնահատման ավտոմատացված համակարգ ստեղծելու քայլեր, անմիջական շփումներ: Թեև ինքնավերլուծությանը կից հարցման հետազոտություններից /2018/ շրջանավարտների կեսը գերազանց է գնահատել գրադարանային ռեսուրսային ապահովվածությունը: Այդուհանդերձ բուհի ինքնավերլուծությունում գրադարանը չէր դիտարակվում որպես բուհի ուժեղ կողմ: Բացի դրանից, փորձագիտական այցի ընթացքում բոլոր շահակիցների կողմից որպես ամենաթույլ կողմ մատնանշվեց ՀԱԱՀ ենթակառուցվածքն ու ռեսուրսները. գրադարանը, լաբորատորիաները:

Փաստթաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ում ռեսուրսների տրամադրումը մինչ այժմ տեղի չի ունեցել կրթական և հետազոտական կարիքների խորքային ուսումնասիրության հիման վրա: Դատելով ՀԱԱՀ-ի կրթական ծրագրերի վերջնարդյունքներից կամ դասընթացների ծրագրերի մեթոդական հատվածից՝ պետք է ենթադրել, որ շատ դասընթացներ դասավանդվում են ակտիվ մոտեցումներով, քննարկումներով (կամ նշված է այդպես): Ակնհայտ է, որ ակտիվ դասավանդումը պահանջում է դասասենյակի ոչ ավանդական, ուսանողակենտրոն կահավորում (օրինակ՝ կլոր սեղան-քննարկումներ իրականացնելու համար). մինչդեռ փորձագետներն այցի ընթացքում առկա չէին համապատասխան դասասենյակներ: Պետք է փաստել, որ առկա գույքը ժամանակ առ ժամանակ թարմացվել է, սակայն, որ այդ թարմացումը փաստացի չի արտացոլում ակտիվ դասավանդման կարիքը /ինչը ներկայացվում էր ՄԿԾ-ների վերջնարդյունքներում/:[14]

Պետք է նշել նաև, որ առկա չեն ռեսուրսների բավարարվածությունից ՀԱԱՀ-ի շահակիցների հարցումների արդյունքների մասին շահակիցներին տեղեկացնելու հիմքեր: Ներքին շահակիցները չեն տեղեկանում հարցաթերթերում իրենց կողմից նշված խնդիրները լուծելու, վերհանված կարիքները բավարարելու ուղղությամբ բուհի պլանավորած քայլերի վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀԱԱՀ-ի կողմից ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավումն ու զարգացումը ռազմավարական առաջնահերթությունների հետ միասնական կապի մեջ դիտարկելու և «խելացի գյուղատնտեսության» ժամանակակից պահանջներին համահունչ պլանավորումը: Սա թույլ կտա առավել իրատեսական մոտեցմամբ ապահովել կրթական ծրագրերի և հետազոտական գործունեության նյութատեխնիկական հիմքերը: Դրական է Ագրոբիզնեսի դպրոցի փորձը՝ կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան զարգացած ենթակառուցվածք և ռեսուրսներ ունենալու տեսանկյունից, ինչը ՀԱԱՀ-ի գիտակրթական մյուս ստորաբաժանումների համար ենթակառուցվածքի և ռեսուրսների զարգացման ուղենիշ կարող է հանդիսանալ:

Սակայն, իրականացվող կրթական ծրագրերի մեծ թիվը, և այդ ծրագրերին համապատասխան ենթակառուցվածքի և տրամադրվող ռեսուրսների անհամապատասխանությունը վտանգում է ՄԿԾ-ների և բուհի ռազմավարական առաջնահերթությունների արդյունավետ իրականացումը:

[14] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկումների արդյունքում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև ենթակառուցվածքների ուղղությամբ կարիքների գնահատումն ու զարգացման հստակ պլանավորումը, որը կնպաստի ոլորտի համապարփակ զարգացմանը[15]:

Դրական է գնահատվում համալսարանի գրադարանի զարգացմանն ուղղված ջանքերը, ինչը կրթության զարգացման կարևոր նախապայման է: Միևնույն ժամանակ, հայալեզու մասնագիտական գրականության սակավաթիվությունը և դասախոսների ու ուսանողների անգլերեն լեզվի իմացության ցածր մակարդակը դանդաղեցնում և խոչընդոտում են կրթության որակի բարձրացումը[16]:

Փորձագիտական խումբը մեծապես կարևորում է վերջին շրջանում ենթակառուցվածքների և ռեսուրսների զարգացմանն ուղղված առանձին ծրագրերի իրականացումը: : Այդուհանդերձ, բուհում առկա ռեսուրսները մեծամասամբ հին են: Շատ դեպքերում բացակայում են լաբորատոր, դասասենյակային, պրակտիկ-արտադրական ոլորտի էական պայմաններ, ինչը ներկայում խոչընդոտում է ՀԱԱՀ-ի ռազմավարական նպատակների իրականացումը:

Փորձագիտական խումբը գնահատում է ենթակառուցվածքների զարգացման համար պահանջվող այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների որոնումն ու հայթայթումը: Սակայն առկա է այս պրակտիկան ՀԱԱՀ-ի ստորաբաժանումներում տարածելու և արմատավորելու էական բաց: ՀԱԱՀ-ը իր մարդկային ռեսուրսների համար համապատասխան մշակույթ, մոտեցումներ, հմտություններ զարգացնելու տեսանկյունից բավականին մեծ աշխատանքներ ունի կատարելու:

Դրական հանգամանք է ՀԱԱՀ-ի կողմից աշխատակիցների աշխատավարձերի հարցը ուշադրության կենտրոնում պահելը, դրանք շարունակաբար բարձրացնելուն ուղղված ջանքերն ու որոշ դրական արդյունքները, ինչը մոտիվացնում է դասախոսներին ու գիտաշխատողներին:

ՀԱԱՀ-ը գիտակրթական ստորաբաժանումների մակարդակով որդեգրել է կարճաժամկետ ու միջնաժամկետ պլանավորման գործընթացներ: Սրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է բյուջետային պլանավորման իրականացում՝ ըստ ստորաբաժանումների: Մինչդեռ ՀԱԱՀ-ի բյուջետային պլանավորումը ներկայում կենտրոնացված կարգով է իրականացվում, ինչը խորընդոտում է ստորաբաժանումների համաչափ զարգացումը:

Փորձագիտական խումբը նշանակալի է համարում ՀԱԱՀ-ի արձանագրած հաջողությունները տեղեկատվության շրջանառման և փաստաթղթավորման գործընթացները զարգացնելու, ավտոմատացնելու և թվայնացնելու հարցում, ինչն կարող է մեծացնել բուհի կարողությունները կառավարման և կրթական ծրագրերի կազմակերպման որակի բարձրացման առումով: Այնուամենայնիվ, դեռևս նկատելի անելիքներ կան այդ գործընթացները խորությամբ զարգացնելու և բուհում ամբողջական կերպով ներդնելու ուղղությամբ:

Ուսումնական միջավայրի առողջության, ապահովության և անվտանգության ուղղված քայլերը տեսանելի են, բայց դեռևս անելիքներ կան անվտանգության կանոնների պահպանմանը, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովմանն ուղղված ինչպես նյութատեխնիկական, այնպես էլ բացատրողական բնույթի աշխատանքների ուղղությամբ, ինչը կարող է նպաստել բուհի գործունեության ընդհանուր արդյունավետության բարձրացմանը: Հատուկ կարիքներ ունեցող, մասնավորապես, հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների, աշխատակիցների և

[15] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկման արդյունքում:
[16] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկման արդյունքում:

այցելուների համար պայմանների բարելավմանն ուղղված աշխատանքները կարող են մեծացնել ՀԱԱՀ-ի ճանաչումն ու վստահությունը հանրության շրջանում[17]:

Եզրահանգում: [18]Հաշվի առնելով, որ ներկայում բուհում ըստ կրթական ծրագրերի ռեսուրսների գնահատում և հետագա զարգացման հստակ պլանավորում մասամբ է իրականացվում, առկա ռեսուրսներն ու ենթակառուցվածքները մեծամասամբ չեն համապատասխանում ՄԿԾ-ով սահմանված նպատակներին, առկա է մասնագիտական հայալեզու գրականության պակաս, իսկ օտարալեզու գրականությունից չեն կարող օգտվել մեծաքանակ ուսանողներ և դասախոսներ, շահակիցները գլխավոր խնդիր են դիտարկում առկա ռեսուրսներով հագեցվածությունը, ֆինանսական կառավարումը դեռևս կենտրոնացված ձևով է իրականացվում, առկա է լաբորատորիաների վերազինման խիստ անհրաժեշտությունը, անվտանգության պահպանման, նյութերի հարստացման տեսանկյունից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունները չեն բավարարում չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին, գնահատում է **անբավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀԱԱՀ-ի զարգացման 2018-2022թթ. ռազմավարական ծրագրում խնդիր է դրված ապահովել համալսարանի գործունեության հաշվետվողականությունը և թափանցիկությունը՝ բարելավելով և զարգացնելով բուհի տեղեկատվության ապահովման գործընթացները կառավարման բոլոր մակարդակներում, ապահովելով տեղեկատվության թափանցիկությունը բոլոր շահակիցների համար: Խնդիր է դրվել նաև ներգրավել համալսարանի շահակիցներին որակի կառավարման գործընթացներում: Հաշվետվողականությունը և թափանցիկությունը հայտարարված են որպես բուհի հիմնարար արժեքներ ՀԱԱՀ-ի զարգացման նոր՝ 2020-2024 թթ. ռազմավարական ծրագրի նախագծումբուհի նպատակներից է ապահովել հաշվետվողականության և թափանցիկության գործուն մեխանիզմներ:

Հաշվետվողականության գործընթացները խրախուսելու և կարգավորելու համար ՀԱԱՀ-ը մշակել է փաստաթղթեր՝ «ՀԱԱՀ շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն»,«ՀԱԱՀ շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման ընթացակարգ», «ՀԱԱՀ ստորաբաժանումների ինքնավերլուծությունների իրականացման և գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»:

Ավանդաբար բուհի վարից վեր հաշվետվողականությունը գերազանցապես քանակական ցուցիչներ ու ցուցանիշներ է ներառել: Ամբիոնների, գիտահետազոտական լաբորատորիաների, ֆակուլտետների հաշվետվությունները, որոնցում մինչ այժմ բացակայել է որակական ցուցանիշների վերլուծությունը, ամեն տարի ներկայացվում են համալսարանի ղեկավարությանը, քննարկվում բուհի գիտական և հոգաբարձուների խորհուրդներում: Հաշվետվություններում նշվում է, օրինակ, թե քանի ծրագիր է իրականացնում ֆակուլտետը, քանի ուսանող է սովորում

[17] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկման արդյունքում:
[18] Փոփոխվել է համալսարանի կողմից ներկայացված դիտարկումների և քննարկման արդյունքում:

ծրագրերում, քանի դասախոս է դասավանդում, դասախոսները քանի աշխատանք են տպագրել, քանի գիտաժողովի են մասնակցել: Սակայն նշված և այլ տվյալների վերլուծություն ռազմավարական պլանի կամ որակական ցուցանիշների համատեքստում չի կատարվում:

2019-2020 ուստարվանից ՀԱԱՀ-ը սկսել է կյանքի կոչել ներքին հաշվետվողականության նոր համակարգ, որը նախատեսում է ստորաբաժանումների ամենամյա ինքնավերլուծություն, գործունեության պլանավորում, իրականացում, մշտադիտարկում և բարելավում: Նշված ամենամյա գործունեության հաշվետվողականությունը նախատեսված է իրականացնել եռամյակային և տարեկան հաշվետվությունների տեսքով՝ հիմքում ունենալով գործողությունների գնահատման առանցքային ցուցանիշները: Այդուհանդերձ համակարգը նոր է ներդրվել, ուստի դեռևս տեսանելի չէ սահմանված ձևով հաշվետվությունների իրականացումը:

Արտաքին շահակիցների հանդեպ հաշվետվողականության հիմնական մեխանիզմը հոգաբարձուների խորհրդի նիստերն են, որի անդամների կեսը բուհի արտաքին շահակիցներն են: Արտաքին հաշվետվողականության մեխանիզմներից է կրթության կառավարման լիազոր մարմնին (այդ թվում՝ գիտության պետական կոմիտեին) ներկայացվող հաշվետվությունները կրթական և հետազոտական գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ, ինչպես նաև այլ գործընկեր կառույցներին (ERASMUS+ ծրագրի հայաստանյան գրասենյակ, ՀԱԱՀ-ին դրամաշնորհներ ու աջակցություններ տրամադրած կառույցներ) տրվող հաշվետվությունները՝ համաձայն համագործակցային պայմանավորվածությունների: Բուհի գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ հանրությանը տեղեկատվության ապահովման գլխավոր միջոցը ՀԱԱՀ-ի կայքն է, որը վերջերս վերափոխվել, նոր բովանդակություն ու դիզայն է ստացել: Մյուս կարևոր միջոցներից մեկն արդեն ավանդույթ դարձած ամենամյա ցուցահանդեսներն են, որտեղ ցուցադրվում են ՀԱԱՀ-ի հաջողություններն իր գործունեության ոլորտներում:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

ՀԱԱՀ գործունեության հաշվետվողականությունը և թափանցիկությունը ՀԱԱՀ-ի հիմնարար արժեքներից է հռչակված բուհի՝ առաջիկայում կյանքի կոչվելիք ռազմավարական ծրագրում. ինչպես այստեղ, այնպես էլ ՀԱԱՀ-ի զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագրում թափանցիկության գործուն մեխանիզմ ունենալը ձևակերպված է որպես կառավարմանն առնչվող կարևոր նպատակադրում:ՀԱԱՀ-ի շահակիցներին տեղեկատվության ապահովման նպատակով մշակվել է հատուկ քաղաքականություն, որի նպատակն է համալսարանի բոլոր շահագրգիռ կողմերին տրամադրել համալսարանի գործունեության, ձեռքբերումների և գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվություն, հետադարձ կապի մեխանիզմների միջոցով ապահովել համալսարանի կապը նրա շահակիցների հետ:

Ըստ ինքնավերլուծության՝ համալսարանում տեղի ունեցող գործընթացների թափանցիկության և հասանելիության տեսանկյունից հատկապես կարևորվում է համալսարանի պաշտոնական կայքէջը՝ https://anau.am/: Կայքի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով 2018-2019 ուսումնական տարում մշակվել և ներդրվել է anau.am կայքի նոր տարբերակը Wordpress CMS բովանդակության կառավարման համակարգով: Կայքի գործարկումն իրականացնում է համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը, որ գործում է աշխատակազմի ղեկավարի համակարգման ներքո, և կոչված է հասարակությանը հասանելի և թափանցիկ դարձնելու բուհի ընթացակարգերն ու գործընթացները:

Բաժինը գործարկում է նաև բուհի ֆեյսբուքյան էջը, որը վերջին մեկ տարում դիտելիության ու հավանումների առումով առաջատար դիրք է զբաղեցնում: Փորձագիտական այցից պարզվեց, որ բաժինը թեև նորակազմ է, խիստ սահմանափակ մարդկային-մասնագիտական ու նյութական ռեսուրսներ ունի, այդուհանդերձ հստակ պատկերացնում է իր դերն ու գործառույթը ՀԱԱՀ-ի ընդհանուր խնդիրների ու գործունեության համատեքստում: Ռեսուրսների սղությունն ըստ էության թույլ չի տալիս, որ ՀԱԱՀ-ն իրականացնի մեդիա-վարկանիշի դիտարկում՝ պարզելու՝ ՀԱԱՀ-ի դիրքավորումը կայքերում հիշատակումների, մասնավորապես դրական հիշատակումների տեսանկյունից:

Կայքէջի զարգացման ուղղությամբ տարվել են նկատելի աշխատանքներ: Գիտական և հոգաբարձուների խորհուրդների, ռեկտորատի նիստերի արձանագրություններն ու որոշումները հրապարակվում են համալսարանի կայքում: Սակայն պետք է նշել, որ կայքում բացակայում են ֆակուլտետային գիտխորհուրդների նիստերի արձանագրությունները, իսկ հոգաբարձուների և գիտական խորհուրդների, ռեկտորատի նիստերի արձանագրություններն ու որոշումներն ամբողջապես չեն արտացոլված, գիտական խորհրդի նիստերի արձանագրությունները վերաբերում են զուտ 2019-2020 ուստարվան:

Կայքումառկա են ուսուցման էլեկտրոնային հարթակում դասավանդվող դասընթացների հղումները՝ հակիրճ տեղեկատվությամբ:

ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքէջը դեռևս չի արտացոլում բուհի առանցքային գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը: Ամենակարևոր հանգամանքներից մեկն, այս առումով, կայքէջում բուհի կրթական ծրագրերի բացակայությունն է. կրթական ծրագրեր՝ իրենց ձևակերպված նպատակներով, վերջնարդյունքներով, կառուցվածքով, բովանդակությամբ: Այս առումով բացառություն է Ագրոբիզնեսի ուսուցման դպրոցը, որի կողմից իրականացվող կրթական ծրագրերի կարևոր հատկանիշներ ամփոփված են ՀԱԱՀ-ի դպրոցի կայքէջում:

Կայքը պարունակում է ՀԱԱՀ-ի մասնագիտությունների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն անգլերենով ու ռուսերենով. այնուամենայնիվ, արտասահմանցի ուսանողների ներգրավման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը դեռևս բացակայում է:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Ինքնավերլուծությունում կարևորվում է ՀԱԱՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայունությանը և հղում անում այս խնդրի հետ կապված երեք կարգավորող փաստաթղթերի, որոնք, սակայն, սահմանելով դերեր ու պարտականություններ, մեծամասամաբ կրկնում են մեկը մյուսին, իսկ դրանցում պարունակվող դրույթները մեծամասամբ դեկլարատիվ բնույթ ունեն:

Փորձագիտական այցից պարզվեց, որ իր կրթական ծրագրերի, հետազոտության բարելավմանն ուղղված քայլեր ձեռնարկելիս ՀԱԱՀ-ը որոշ ազդակներ է ստանում գյուղատնտեսության ոլորտը համակարգող պետական ու միջազգային կառույցներից: Ագրարային հատվածը համակարգող պետական գերատեսչությունների հետ ՀԱԱՀ-ը մշտապես գտնվում է ակտիվ շփումների մեջ. ոլորտը կարգավորող իրավական ակտերը հաճախ փորձաքննություն են անցնում ՀԱԱՀ-ում, իսկ ՀԱԱՀ-ն իր հերթին տեղեկանում է ոլորտում սպասվող զարգացումներից:

Միավորված ազգերի կազմակերպության՝ Հայաստանում ներկայացված մասնագիտացված որոշ հաստատություններ ու ծրագրեր, որոնց գործունեությունը ևս առնչվում է ագրարային ոլորտին, ՀԱԱՀ-ի հետ ունեն կանոնավոր շփումներ։

Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովումը տեղի է ունենում ՀԱԱՀ-ի հոգաբարձուների խորհուրդի միջոցով, որի արտաքին անդամների զգալի մասը ակտիվ մասնագիտական, գործարար և հասարակական գործունեություն են ծավալում ագրարային ոլորտում և ապահովում համալսարանի կապը տնտեսության, պետական հատվածի և աշխատաշուկայի հետ։

ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքը հասարակության հետ հետադարձ կապի ևս մեկ մեխանիզմ է. դիմորդների ընդունելության, տարբեր մրցույթների և այլ գործընթացների մասին կայքում տեղադրվող հայտարարությունները, ՀԱԱՀ-ի կրթական ու հետազոտական ձեռքբերումների մասին պատմող նյութերը դիտվում և հանրության ուշադրությունն են հրավիրում բուհի վրա։ Կայքում առկա են ՀԱԱՀ-ի տարբեր ստորաբաժանումների, պաշտոնյաների հետ կապ ապահովելու կոնտակտային տվյալներ. այդուհանդերձ բացակայում են հրապարակվող նյութերի ներքո քննարկման ու մեկնաբանությունների բացատները, ինչպես նաև կրթական ծրագրերի մասնագրերը։ Մի քանի փորձերը ցույց տվեցին, որ ՀԱԱՀ-ը չի արձագանքում կայքի միջոցով արվող հարցումներին։

ՀԱԱՀ-ը տեսանելի է Facebook, LinkedIn, Youtube, Instagram սոցիալական ցանցերում, որտեղ հանրության հետադարձ կապն առավել հեշտ է ապահովվում (գրառումներ, տեսանյութեր, դրանց մեկնաբանություններ և այլն)։ ՀԱԱՀ-ը ԶԼՄ-ների միջոցով հրապարակումների իրականացմամբ ևս փորձում է հասարակության հետ հետադարձ կապ ապահովել։

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ։

Հասարակությանը գիտելիք փոխանցելու գործընթացը կարգավորելու նպատակով ՀԱԱՀ-ը մշակել է փաստաթուղթ՝ հասարակությանը լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների տրամադրման քաղաքականություն և ընթացակարգ, որի նպատակն է հասարակությանը մատուցել որակյալ լրացուցիչ ծառայություններ, խթանել մասնագիտական կարողությունների ստեղծման գործընթացը, օժանդակել հասարակությանը և ՀԱԱՀ-ի ուսանողությանը մասնագիտական ուսուցման համակարգում։

ՀԱԱՀ-ում գործում են ագրարային ոլորտի մասնագիտական աջակցության և խորհրդատվական ծառայությունների իրականացման և հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմներ։ Դրանցից կարելի է առանձնացնել ֆերմերային տնտեսությունների համար կազմակերպվող մեծ թվով սեմինար-խորհրդատվությունները, որոնք վերջին տարիներին կրել են պարբերական բնույթ։ ՀԱԱՀ-ի կողմից իրականացվում են պետական ֆինանսավորման շրջանակներում իրականացվող գյուղատնտեսական մասնագետների և ֆերմերների որակավորման բարձրացման ծրագրերը, ինչպես նաև անասնաբուժության, անասնաբուծության և այլ ուղղություններով կազմակերպվող վերապատրաստման դասընթացները համապատասխան շահակիցների համար։

ՀԱԱՀ-ի իր ներուժն օգտագործվում է գյուղոլորտի որոշ խնդիրների պրակտիկ լուծմանն ուղղված պետական ծրագրերում։ Օրինակ, ՀԱԱՀ-ն ղեկավարել է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում լոլիկի հարավամերիկյան ցեցի դեմ պայքարի միջոցառումների ծրագիրը. ծրագիրը թիրախային հողատարածքներում ցույց է տվել մինչև հարյուր տոկոսանոց արդյունք, ֆերմերների համար տպագրվել են վնասատուի դեմ պայքարի տեղեկատվական ձեռնարկներ։

Մյուս մեխանիզմը վերջին տարիներին Ագրարային համալսարանի դասախոսների կողմից հանրապետության դպրոցներում կարդացվող ակնարկային դասախոսություններն են, որոնց միջոցով աշակերտները տեղեկանում են երկրի ագրարային ոլորտի խնդիրներից, դրանց լուծումներից, նոր տեխնոլոգիաներից։

Ըստ ինքնավերլուծության՝ ՀԱԱՀ-ը լրացուցիչ անվճար դասեր է կազմակերպում դրանց կարիքն ունեցող ուսանողների համար։ Այդուհանդերձ այդ դասերի պարբերականության, արդյունավետության մասին հստակ ու ամբողջական տեղեկատվություն չտրամադրվեց փորձագիտական խմբին։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ՀԱԱՀ-ում առկա է հաշվետվողականության համակարգ, որը բնութագրվում է վարից վեր հաշվետվողականությամբ ու պարբերականությամբ, ամփոփվում ռեկտորի տարեկան հաշվետվությամբ, ինչը հաշվետվողականությունը դարձնում է համընդգրկուն, կանոնակարգված և համակարգված գործընթաց։ Միևնույն ժամանակ այս գործընթացը, հատկապես միջին և ստորին մակարդակներում (վարչություններ, ֆակուլտետներ, ամբիոններ, լաբորատորիաներ) հիմնականում սահմանափակվում է քանակական տվյալների ներկայացմամբ, բուհի ռազմավարական նպատակների, կրթական ծրագրերի կարիքների համատեքստում վերլուծությունների բացակայությամբ, ինչը կարող է խոչընդոտել խնդիրների դուրսբերմանը և հետագա բերելավումների պլանավորմանն ու իրականացմանը։

Դրական է բուհում ներքին հաշվետվողականության նոր համակարգի ներդնումը, որը նախատեսում է ստորաբաժանումների ամենամյա ինքնավերլուծություն, գործունեության պլանավորում, իրականացում, մշտադիտարկում և բարելավում՝ հիմքում ունենալով գործողությունների գնահատման առանցքային ցուցանիշները. սա կարող է հաշվետվողականության ու որակի ապահովման նոր մշակույթ բերել համալսարան՝ նպաստելով առանցքային գործընթացների բարելավմանը։

Դրական է այն որ, ի դեմս լրատվության ու հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման վերափոխման և բուհի կայքի՝ Wordpress CMS կառավարման համակարգով վերագործարկման, համակարգված ու նկատելի աշխատանքներ են տարվում համալսարանի ընթացակարգերն ու գործընթացները ներքին ու արտաքին շահակիցներին ու լայն հանրությանը թափանցիկ ու հասանելի դարձնելու ուղղությամբ, ինչը ՀԱԱՀ-ին առավել տեսանելի և գրավիչ է դարձնում և նպաստում շահակիցների հետ համագործակցությանը։ Ակնհայտ է, որ ՀԱԱՀ-ի կայքն առաջնահերթ արտացոլում է կարևոր նշանակություն ունեցող տվյալները, իրողություններն ու գործընթացները։ Այս առումով, սակայն, խնդրահարույց է այն, որ բուհի հիմնական այցեքարտը՝ կրթական ծրագրերը (մասնավորապես թարգմանված անգլերենով ու ռուսերենով), արտացոլված չեն կայքում, ինչը կարող է պայմանավորված լինել այդ ծրագրերի մեծ մասի անկատարությամբ. այս հանգամանքը կարող է խոչընդոտել միջազգային շարժունությանը և դիմորդների ներգրավմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում բուհի ջանքերը՝ զարգացնելու հասարակության հետ կայուն հետադարձ կապ ապահովելու մեխանիզմները. սոցիալական տարբեր ցանցերում ՀԱԱՀ-ի տեսանելիության բարձրացումը, մարզպետարաններում ՀԱԱՀ-ի մասնագետների մոբիլ խմբերի հանդիպումները, գործատուների ներկայացուցիչների հետ կոնտակտների աճն ու ինտենսիվացումը, ներքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության

միջոցառումների նորովի կազմակերպումը, որը նպաստում է բուհի վարկանիշի բարձրացմանը և հետադարձ կապի ապահովմանը:

Այդուհանդերձ ՀԱԱՀ-ին դեռևս չի հաջողվել արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրության արդյունավետ ու կանոնակարգված մեխանիզմներ գործարկել, ինչը կարող է խոչընտորել տարբեր գործընթացների որակի շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում և կարևորում ՀՀ ագրարային ոլորտի ձեռնարկությունների, ոլորտի հետ առնչություն ունեցող պետական ու միջազգային հատվածների հետ տարվող ինտենսիվ ու արդյունավետ համագործակցությունից, ինչը իմաստավորվում է ՀԱԱՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում առաջընթաց ապահովելու հնարավորության տեսանկյունից: Ողջունելի է այն հանգամանքը, որ բուհի ղեկավարությունն ունի հստակ տեսլական՝ հասարակությանը գիտելիք փոխանցելու ոլորտների, մեխանիզմների քանակական ու որակական աճի վերաբերյալ, ինչը կարող է առավել օրինաչափ ու պարբերաբար իրականացվող դարձնել նշված գործընթացները: Հանրապետության ֆերմերային տնտեսությունների համար կազմակերպվող սեմինար-խորհրդատվությունները, ֆերմերների ու ագրարային ոլորտի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացները, բուհի մասնագիտական ներուժը գյուղոլորտի գործնական խնդիրների լուծմանը ծառայեցնելու միտումները (լոլիկի հարավամերիկյան ցեց վնասատուի դեմ պայքարի ծրագրի օրինակով), դիմորդների հետ առարկաների անվճար պարապմունքները, դպրոցներում կարդացվող ակնարկային դասախոսությունները նկատելի հնարավորություն են հանդիսանում ՀԱԱՀ-ի հեղինակության բարձրացման, ագրարային մասնագիտությունների՝ հասարակության շրջանում արժևորման ու պահանջարկի ստեղծման տեսանկյունից՝ իր հերթին զարգացնելով բուհի հանրային հանձնառությունների մշակույթը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀԱԱՀ-ի հաշվետվողականության համակարգը հիմնավոր կերպով զարգանում և կատարելագործվում է, բուհի գործառույթներն ու գործընթացները գնալով ավելի հասանելի ու տեսանելի են դառնում հասարակության համար, բազմազանեցվում և հուսալի են դառնում հասարակության հետ կայուն կապերի մեխանիզմները, բուհը գիտակցում է իր հանձնառությունները պետության, հասարակության ու բնության հանդեպ և ունի հասարակությանը գիտելիք ու աջակցություն փոխանցելու կարողություն և մոդելներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԱԱՀ-ը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀԱԱՀ-ի երկու ռազմավարությունների (ՀԱԱՀ-ի զարգացման 2018-2022 թթ. ռազմավարական ծրագիր, 2020-2024թթ. ռազմավարական ծրագրի նախագիծ), հարակից փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտաքին կապերի զարգացումն ու

միջազգայնացումը բուհի առաջնահերթ նպատակներից են։ ՀԱԱՀ-ի զարգացման 2020-2024թթ. ռազմավարական ծրագրի նախագծում արտաքին կապերի զարգացման ու միջազգայնացման նպատակադրումները ձևակերպված են համալսարանի գործունեության գերակա մյուս ուղղությունների նպատակադրումների հետ ներհյուսված։ ՀԱԱՀ-ի կրթական գործունեության միջազգայնացման խնդիրներն ու գործողությունները ներառում են կրթական ծրագրերի միջազգայնացումը, դեպի ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներ կողմնորոշված մասնագետների պատրաստումը, օտարալեզու կրթական ծրագրերի ներդրմամբ օտարերկրյա դիմորդների համակազմի ընդլայնումը, դուալ կրթության ներդնումը, կրթական ծրագրերը նաև միջազգային ճանաչված գործակալությունների կողմից հավատարմագրումը, Joint և Double աստիճանի ծրագրերի ներդնումը։ Իսկ գիտական գործունեության միջազգայնացման խնդիրներն ու գործողությունները ներառում են գիտահետազոտական գործունեության տեսանելիության բարձրացումը և միջազգայնացումը, հետազոտական և ինովացիոն տեղական և միջազգային ծրագրերի իրականացումը, միջազգային գիտական ծրագրերի միտումների վերհանումը, ՀԱԱՀ-ի համար ռազմավարական նշանակության ծրագրերի ուղղությամբ դրամաշնորհների ներկայացումը և այլն։ Միջազգայնացման գերակայությունը ձևակերպված է նաև ռեսուրսների զարգացման նպատակադրումների համատեքստում, ինչպես օրինակ՝ հանրակացարանի և հանգստյան տան ծախսածածկման ու զարգացման, միջազգայնացմանն ուղղված միջոցառումների ժամանակ համալսարանի ներկայանալի տեսքի ապահովման առնչությամբ դրված խնդիրները։

Ինչպես այս նախագծում, այնպես էլ գործող ռազմավարական ծրագրում հռչակված միջազգայնացման հավակնոտ նպատակադրումները համապատասխան արտացոլումը չունեն ոլորտին վերաբերող փաստաթղթերում (Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարություն, Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը և ընթացակարգը), որոնք ըստ էության նորմատիվ ակտեր են հանդիսանում։

Ինքնավերլուծության մեջ վերլուծված և գնահատված չեն արտաքին կապերին ու միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը։ Որոշ փաստաթղթերի ուսումնասիրության ու հատկապես փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ի միջազգայնացումն առաջ մղող փաստաթղթային հենքը հիմնականում միջազգային կապերի դեպարտամենտի գործունեության տարեկան ծրագիր-ժամանակացույցերն են, ՀԱԱՀ-ի գիտական և հոգաբարձուների խորհուրդներում քննարկվող հաշվետվությունները։

Արտաքին կապերի և միջազգայնացման մեխանիզմներն են միջազգային ծրագրերին մասնակցելը (Էրազմուս+ ՀԳ1, Էրազմուս+ ՀԳ2, ԷրազմուսՄունդուս, Տեմպուս և այլն), միջազգային գիտաժողովների կազմակերպումն ու անցկացումը, արտերկրում կազմակերպված գիտաժողովներին մասնակցությունը, տեղական և արտերկրի բուհերի հետ համագործակցության հաստատումն ու դրանց իրականացումը և այլն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ը խրախուսում է միջազգային շարժունությունը ինչպես ERASMUS+ ծրագրի շրջանակներում, այնպես էլ միջազգային ծրագրերից դուրս, անհատական նախաձեռնությունների տեսքով։ Ակնհայտ է ՀԱԱՀ-ի ներգրավման աճը ERASMUS+ ծրագրի ինչպես ՀԳ1 այնպես էլ ՀԳ2 փաթեթներում։ Ողջունելի է նաև ՀԱԱՀ-ի մասնակցությունը ERASMUS+ International week (միջազգային շաբաթ)՝ ոչ դասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, ինչը նպաստում է գաղափարների գեներացմանը և բուհում դրանց ներդրմանը։ Ֆինանսների սղության պատճառով ՀԱԱՀ-ը դեռևս չի կարողանում ամբողջապես

ֆինանսավորել անհատական, միջազգային նախագծերից դուրս գտնվող շարժունության ծրագրերը, սակայն շատ դեպքերում մասնակիորեն փոխհատուցում է դրանց ծախսերը:

Ինքնավերլուծությունում բերված և կից փաստաթղթերում ներկայացված տվյալների, ինչպես նաև այցի արդյունքում պարզ դարձավ, որ ի տարբերություն արտագնա շարժունության, ներգնա շարժունությունը առկա չէ. բուհը դեռևս գրավիչ չէ օտարազգի ուսանողների, դասախոսների և հետազոտողների համար:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Ագրարային համալսարանի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ գործունեությունը կազմակերպում է Միջազգային կապերի դեպարտամենտը, որի գործառույթները (որ նշված են դեպարտամենտի կանոնադրությունում, գործունեության ծրագրերում ու հաշվետվություններում) ներառում են արտերկրի բուհերի հետ կապերի հաստատումը, համագործակցության պայմանագրերի պատրաստումը, շարժունության կազմակերպումն ու կարգավորումը, դրամաշնորհային ծրագրերի իրականացումը, նոր ծրագրերի մասնակցության հայտերի ներկայացումը, գործող ծրագրերի համակարգումը, դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների վերլուծումը, դրանց արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը և այլն:

Դեպարտամենտը գործում է ՀԱԱՀ-ի ռեկտորի համակարգման ներքո: Ըստ ինքնավերլուծության, ներկայացված փաստաթղթերի և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դեպարտամենտի գործունեությանը բնորոշ են ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը, ինչպես նաև որակի ապահովման այլ սկզբունքներ: ՄԿԴ-ի գործունեությունը կազմակերպվում է ամենամյա աշխատանքային պլան-ժամանակացույցով, որի կազմման համար հիմք են հանդիսանում բուհի ռազմավարական պլանը, առկա և նախատեսվող միջազգային ծրագրերը, միջազգայնացման տեսլականն առաջիկա տարվա համար, նախորդ տարում կատարողականի քննարկման արդյունքները: Կատարված աշխատանքներն ամփոփվում են դեպարտամենտի տարեկան տրվող երկու հաշվետվություններում, որոնք ներկայացվում են բուհի վերադաս մարմիններին և քննարկվում են բուհի գիտական խորհրդում ու հոգաբարձուների խորհրդում դրանց արդյունավետությունը, ՀԱԱՀ-ի ռազմավարական ծրագրին ու նպատակներին համապատասխանությունը գնահատելու համար, իսկ այնուհետև որոշումների և առաջարկությունների ձևով ներկայացվում են դրանց բարելավման ուղիները:

ՄԿԴ-ն սկսել է իրականացնել իր ամենամյա գործունեության ինքնավերլուծություն, որը հիմնված է հարցումների, աշխատակիցների և արտաքին շահակիցների հետ տարված քննարկումների վրա և նպատակ ունի վերհանել դեպարտամենտի ուժեղ և թույլ կողմերը և գնահատել գործունեության արդյունավետությունը:

Փորձագիտական խմբի հանդիպումներից պարզվեց, որ դեպարտամենտն ապահովում է միջազգային փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու դրա թափանցիկությունը. մասնավորապես, ERASMUS+ ծրագրով նախատեսված շարժունության հայտարարությունները արդյունավետորեն տարածվում են բուհում, անհրաժեշտության դեպքում տրվում խորհրդատվություն: ՄԿԴ-ի ակտիվ աշխատանքների շնորհիվ էապես մեծացել է հետաքրքրությունը միջազգային շարժունության ու փոխանակման ծրագրերի հանդեպ համալսարանի ուսանողների և դասախոսների շրջանում: Արդյունավետ են իրականացվում գործող ծրագրերը (Topas, Abionet և այլն):

ՀԱԱՀ-ի միջազգային գործունեության վերաբերյալ տեղեկանքների, ինքնավերլուծության ուսումնասիրության և բուհ այցելության արդյունքում փորձագիտական խումբը պարզեց, որ միջազգային կապերի դեպարտամենտի աշխատակիցները հստակ պատկերացնում են իրենց գործառույթները, աշխատում են համակարգված, տիրապետում են օտար լեզուների, սակայն դեպարտամենտը դեռևս շատ անելիքներ ունի փոխանակման, շարժունության ծրագրերից վերադարձող դասախոսների, վարչական աշխատակիցների և ուսանողների ստացած փորձի փոխանակումը կանոնակարգելու և հունի մեջ դնելու գործում:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Ինքնավերլուծությունը քանակական տվյալներ է ներկայացնում ՀԱԱՀ-ի միջազգային գործընկերության վերաբերյալ. ՀԱԱՀ-ն ունի 100-ից ավելի կնքված համաձայնագրեր և հուշագրեր տեղական և արտերկրյա տարբեր բուհերի և կազմակերպությունների հետ: Վերջին 3 տարիներին դրանց թիվն ավելացել է (կամ վերակնքվել են) 60-ով, որոնք ընդգրկում են 25 երկրներ, 42 համալսարան և 13 կազմակերպություններ՝ ներառելով համագործակցություն կրթական, գիտական, շարժունության և այլ ոլորտներում: Միևնույն ժամանակ ՀԱԱՀ-ը չունի համապատասխան վերլուծություն, որը կպարզեր և կամբողջացներ բուհի ձեռքբերումներն այդ պայմանագրերից, կվերհաներ այն պատճառները, թե ինչու այդ պայմանագրերի մի մասը չի գործում:

Թույլ են ՀԱԱՀ-ի կապերը ԱՊՀ և ասիական բուհերի հետ, ինչը ինքնավերլուծության մեջ բացատրվում է համատեղ ծրագրերի ֆինանսական բազայի բացակայությամբ: Այդուհանդերձ բուհը հարկ եղած չափով չի ուսումնասիրում հատկապես ԵԱՏՄ կառավարման կառույցների ծրագրերով նախատեսված դրամաշնորհների, ինչպես նաև ԱՊՀ ցանցային համալսարանի շրջանակներում համագործակցության հնարավորությունները:

Ըստ ինքնավերլուծության, կայքի, ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՀԱԱՀ-ը վերջին չորս տարիներին ակտիվ ներգրավվածություն է ունեցել Եվրամիության TEMPUS, ERASMUS MUNDUS և ERASMUS + ծրագրերում, որոնց շրջանակներում համագործակցության արդյունքում նկատելիորեն բարելավվել են բուհի էլեկտրոնային կառավարման, փաստաթղթաշրջանառության գործընթացները, գյուղատնտեսության մասնագիտության որակավորումների ոլորտային շրջանակի մշակմամբ ստեղծվել են վերջնարդյունքահեն կրթական ծրագրեր մշակելու որոշ կարևոր նախադրյալներ, ներդրվել մի քանի արդիական կրթական մոդուլներ և այլն: ERASMUS + ՀԳ1 ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ը վերջին տարիներին ցույց է տվել բարձր տեմպերով աճ՝ արտագնա շարժունության թիվը 2015 թ. 7-ից 2018թ. հասցնելով 37-ի: Ներգնա շարժունությունը, դեռևս ցածր մակարդակի վրա է:

Միջազգային համագործակցության տեսանկյունից ՀԱԱՀ-ը ձեռքբերումներ ունի հետևյալ ուղղություններում.

- Համատեղ կրթական ծրագրերի (այդ թվում՝ կրկնակի դիպլոմով) իրականացում ոլորտի եվրոպական առաջատար բուհերի հետ (Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարան, Ավստրիայի Բոկու համալսարան),
- ՀԱԱՀ-ի առանձին ուսանողների պրակտիկաների կազմակերպում Գերմանիայում (Logo, JD East, GeTech, Praxx կազմակերպություններ),

- ՀԱԱՀ-ի առանձին ուսանողների հետազոտական աշխատանքների իրականացում Նորվեգիայում (Նորվեգիայի Թրոմսոյի Արտկիկական համալսարան, Նորվեգիայի Կենսաէկոնոմիկայի ինստիտուտ), ուսումնառություն Իտալիայում (Ֆոջիայի համալսարան),
- Մասնակցություն ագրարային ոլորտի մասնագետների, դասախոսների և գիտաշխատողների վերապատրաստման ծրագրերին Գերմանիայում (Վախենինգենի համալսարան) և Չինաստանում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերոնշյալ գործընթացները վերջին տարիներին և ներկայում ցուցաբերում են կայուն աճի միտումներ: Հատկանշական է, որ ՀԱԱՀ-ի ղեկավարությունը, ուսանողների շարժունության ժամանակ ուսպլանների տարբերությունների հետ կապված խնդիրները լուծելու համար նախատեսում է ուսումնական պլաններում ներդնել «շարժունության պատուհանը»՝ հնարավորություն տալով ուսանողներին ունենալ պարապմունքներից զերծ կիսամյակ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թույլ է ՀԱԱՀ-ի համագործակցությունը ՀՀ բուհերի հետ. այս առումով համագործակցությունը հիմնականում իրականացվում է TEMPUS, ERASMUS+ ՀԳ2 ծրագրերի շրջանակներում: ՀՀ բուհերից ՀԱԱՀ-ն առավել սերտ համագործակցություն ունի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՀԱԱՀ-ը գիտակցում է իր հետապնդած ռազմավարական նպատակներին հասնելու գործում օտար լեզուների իմացության բարձր մակարդակ ունեցող վարչական աշխատակիցների, դասախոսների, գիտաշխատողների և ուսանողների կարևորությունը: ՀԱԱՀ-ը գիտակցում է նաև, որ իր աշխատակիցների և ուսանողների օտար լեզուների իմացության ընդհանուր պատկերը խիստ հեռու է բավարար լինելուց: Խնդիրը գիտակցվել է մշտապես և այդ իսկ պատճառով 2002 թ.-ից ՀԱԱՀ-ում գործում է Լեզվի ուսուցման կենտրոնը, որն իրականացնում է օտար լեզուների ուսուցում համալսարանի ուսանողների և աշխատակիցների համար: Այդուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ելնելով տարբեր հանգամանքներից, բուհի ներքին շահակիցների առջև հստակ խնդիրներ չեն դրվել՝ բարձրացնելու օտար լեզուների, առաջին հերթին՝ անգլերենի իմացության մակարդակը: Միայն 2018-2019 ուստարվանից սկսած, բուհի բարեփոխումների գործընթացի համատեքստում, ՀԱԱՀ-ը համակարգված ու նպատակաուղղված կերպով կազմակերպել է անգլերենի ինտենսիվ դասընթացներ ըստ իմացության մակարդակների:

Դասընթացներին մասնակցել է 200 դասախոս: Հարկ է նշել, սակայն, որ այս ինտենսիվ վերապատրաստումները անգլերենի ընդհանուր իմացությանն են վերաբերում, ՀԱԱՀ-ն այդ դասընթացները դեռևս չի կազմակերպում ըստ լեզվի մասնագիտական առանձնահատկությունների (foreign languages for special purposes), քանի որ այս փուլում ձգտում է լուծել լեզվի իմացության հետ կապված բազային խնդիրներ:

ՀԱԱՀ-ը չի վերլուծել, թե իր ուսանողական կազմի քանի տոկոսն է տիրապետում օտար լեզուների և ի՛նչ մակարդակով: Փորձագիտական այցի ընթացքում նաև չհաջողվեց պարզել, թե ուսանողների օտար լեզուների պատշաճ իմացության տեսանկյունից ինչ միջոցառումներ է պլանավորել բուհը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն իրողությունը, որ ՀԱԱՀ-ը պատշաճ ուշադրության է արժանացրել նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում այս չափանիշի վերաբերյալ կատարված խորհրդատվությանը և նկատելիորեն բարելավել է արտաքին կապերի ու միջազգայնացման գործընթացը, ինչը շոշափելի ազդեցություն կունենա բուհի հռչակած տեսլականին հասնելու ջանքերի վրա: ՀԱԱՀ-ն իր արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը համարում է ռազմավարական առաջնահերթություն և միջազգայնացման ռազմավարական ուղեգիծը ներհյուսում մյուս գերակայություններին, ինչը հնարավորություն կարող է տալ բուհին իր գործունեության գերակա ուղղություններում մշտապես ազդակներ ստանալ արտաքին աշխարհից և անել բենչմարքինգ:

Փորձագիտական խումբը ողջունում է, որ ՀԱԱՀ-ի միջազգայնացման գործընթացները համակարգող կառույցը՝ միջազգային կապերի դեպարտամենտը, կայացած, հստակ գործառույթներ ունեցող ստորաբաժանում է, որն իր գործունեության մեջ կիրառում է որակի ապահովման կարևոր գործիքներ, մասնավորապես, առաջնորդվում է իր գործունեությունը պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման շրջափուլով կազմակերպելու կանոնով, իրականացնում է ինքնավերլուծություն, պարբերաբար հանդես է գալիս հաշվետվություններով: Այս հանգամանքը նպաստում է ՀԱԱՀ-ի համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող ուղղության՝ արտաքին կապերի զարգացման ու միջազգայնացման մեջ որակի մշակույթ արմատավորելուն, իսկ կոնկրետ դեպարտամենտին դարձնում է կենսունակ, նոր խնդիրներ ստանձնելու ունակ կառույց: Կարևորելով դեպարտամենտի գործունեության ակներև արդյունքները՝ արտագնա շարժունության աճ, միջազգային կրթական, հետազոտական նախագծերում ՀԱԱՀ-ի մասնակցության աճի միտումներ, փորձագիտական խումբը միաժամանակ նկատում է, որ դեպարտամենտը բավականաչափ տեղյակ չէ բուհի հետազոտական առաջնահերթություններից, ինչը կարող է խոչընդոտել միջազգային հետազոտական նախագծերում ՀԱԱՀ-ի մասնակցության պոտենցիալ հնարավորությունների վերհանմանը:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ դեպարտամենտը դեռևս բավականաչափ անելիք ունի միջազգային շարժունության ծրագրերից վերադարձած աշխատակիցների և ուսանողների ստացած փորձն ու գիտելիքները բուհում տարածելու, շարժունության արդյունքները վերլուծելու և գնահատելու առումով, ինչը կարող է ավելի արագացնել արտաքին կապերի զարգացման ու միջազգայնացման տեմպերը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ինչպես ՀԱԱՀ-ի միջազգային կապերի մեծ քանակությունը, այնպես էլ, հատկապես վերջին տարիներին, այդ կապերի շատացման մեծ տեմպերը, ինչը ՀԱԱՀ-ը տեսանելի ու ճանաչելի է դարձնում միջազգային գիտակրթական տարածքում: Այդուհանդերձ այդ կապերի արդյունքում իրականացվող համագործակցության ծավալների և որակի վերաբերյալ վերլուծությունների բացակայությունը կարող է խանգարել բուհի արտաքին կապերի զարգացմանը ռեսուրսների առավել հասցեական տրամադրմանը: Դրական է նաև ԵՄ աջակցության ծրագրերում վերջին տարիներին ՀԱԱՀ-ի արձանագրած մասնակցության աճը, որը ներբուհական որոշ գործընթացների տեսանելի բարելավում է ապահովել (մասնավորապես էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության գործընթացները):

Մտահոգիչ հանգամանք համարելով ՀԱԱՀ-ի թույլ կապերը ասիական ու ԱՊՀ տարածքի բուհերի հետ, ինչը նշանակում է կապերի փաստացի բացակայություն զարգացող պոտենցիալ շատ գործընկեր գիտակրթական հաստատությունների հետ, փորձագիտական խումբը միևնույն ժամանակ կարևորում է բուհի կողմից այս հանգամանքի գիտակցումը և այս ուղղությամբ քայլեր

կատարելու վճռականությունը: Դրական է գնահատվում նաև ուսումնական պլաններում շարժունության պատուհաններ ստեղծելու և դասընթացների թիվը կրճատելու ՀԱԱՀ-ի ծրագրերը, ինչը էապես կազատի արտասահման մեկնող ուսանողներին շատ բարդություններից և կարող է էապես խթանել շարժունության տեմպերը:

Փորձագիտական խումբը կարևորում է ՀԱԱՀ-ի դասախոսների անգլերենի իմացության զարգացմանն ուղղված արդյունավետ ջանքերը և գոհացուցիչ համարում կարճ ժամանակում արձանագրած արդյունքները՝ այս ամենը համարելով որակյալ, հետազոտահեն կրթություն կազմակերպելու, մասնավորապես, օտար լեզուներով կրթական ծրագրեր իրականացնելու կարևոր նախապայման: Միևնույն ժամանակ շարունակում է մտահոգիչ մնալ ուսանողների շրջանում օտար լեզուների տիրապետման խիստ ցածր մակարդակի հարցը, որը կարող է դասախոս-ուսանող անհամամասնություն առաջացնել (օտար լեզուների տիրապետման առումով) որակյալ դասընթացներ կազմակերպելու ճանապարհին:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ՀԱԱՀ-ը գերակա համարելով արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը, նկատելիորեն կատարելագործել է այդ գործընթացների նորմատիվ-ընթացակարգային հիմքերը, առկա է արհեստավարժ, գործառույթները հստակ գիտակցող, պարտականությունները ճիշտ կատարող, հանձնառու մասնագետներով ֆունկցիոնալ ստորաբաժանում, որն իր գործունեության մեջ կիրառում է որակի ապահովման գործիքներ, տարածում է որակի մշակույթ և պատրաստ է ստանձնել բարդ խնդիրների լուծում, որ ՀԱԱՀ-ը ինչպես անհատական գործընկերային, այնպես էլ միջազգային զարգացման ծրագրերի մակարդակներում սերտորեն համագործակցում է միջազգային գործընկերների հետ, այդ համագործակցության արդյունքները հիմնականում կարողանալով ծառայեցնել ներբուհական գործընթացների բարելավմանը և այս առումով ցույց է տալիս հարաճուն շարժընթաց, որ ի դեմս օտար լեզուների ինտենսիվ վերապատրաստումների՝ ՀԱԱՀ-ը ջանում է իր գիտամանկավարժական կազմին պատրաստել միջազգայնացման մարտահրավերներին, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԱԱՀ-ը բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀԱԱՀ-ում Որակի ապահովման (ՈԱ) համակարգը հիմնվել է 2011 թ-ին: ՀԱԱՀ Որակի ապահովման համակարգն ունի ենթակառուցվածք, ըստ որի համալսարանի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակի վրա իրականացվում են որակի ապահովման գործընթացներ, որոնք փոխկապակցված են իրար հետ: Համաձայն ինքնավերլուծության ՀԱԱՀ-ում որակի ներքին ապահովման գործընթացները կարգավորվում և կազմակերպվում են ՀԱԱՀ որակի ապահովման հայեցակարգի և քաղաքականության և ՀԱԱՀ Որակի ապահովման ձեռնարկի հիման վրա:

Համալսարանի բարեփոխման և զարգացման ծրագրով արդեն մատնանշված են այն առաջնային և հիմնարար խնդիրները, (վերանայել որակի ապահովման ուղղություններով ամբողջ տեղեկատվության հավաքման քաղաքականությունն ու ընթացակարգերը, վերլուծել և ըստ արդյունքների ձևավորել՝ որակի ապահովման ներքին և արտաքին գնահատում իրականացնելու համար) որոնք պետք է փորձի լուծել ՈԳԱ կենտրոնը: Նոր ստեղծված ՈԳԱ կենտրոնը կարճ ժամանակաշրջանում կատարել է նշանակալի աշխատանքներ, SWOT վերլուծություններ, շահակիցների հետ լայն քննարկումներ և այլն:

ՈԳԱ կենտրոնի թիմը գտնում է, որ մեծ աշխատանք կա վերջին տարիներին ընդունած բազմաթիվ կանոնակարգերի ու ընթացակարգերի վերանայման և համակարգման գործընթացում: ՀԱԱՀ-ը առաջնայություն է տալիս կրթության մեջ որակի ապահովման համակարգի արմատացմանը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Ըստ ինքնավերլուծության ՀԱԱՀ-ի որակի ապահովման գործընթացները կազմակերպվում և իրականացվում են ըստ ՀԱԱՀ Որակի ապահովման կառուցվածքային սխեմայի և որակի ներքին ապահովմանն ուղղված նորմատիվային հենքի:

ՈԳԱ նոր կենտրոնը, անմիջապես ենթարկվելով ռեկտորին, ունի գործունեության ավելի մեծ ազատություն և շրջանակ: Կենտրոնի աշխատանքները ղեկավարում է տնօրենը, իսկ բնականոն գործընթացները ապահովելու նպատակով կենտրոնի կազմում գործում է երկու բաժին՝ Որակի ապահովման և Կրթական բարեփոխումների, յուրաքանչյուր բաժին ունի 4 հաստիք, իսկ ընդհանուր ՈԳԱ կենտրոնը՝ 9: Կենտրոնը ունի 3 աշխատասենյակ, որոնք գործընթացը բնականոն իրականացնելու համար ապահոված են անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով:

Սակայն պետք է նշել, որ ֆակուլտետային մակարդակում որակի ապահովման գործընթացներում պատասխանատուներ չկան, որոնք կոնկրետ մասնագիտական ոլորտում ավելի ուղղորդված աշխատանքներ կկատարեին:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

ՀԱԱՀ-ն ապահովել է ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածություն որակի ապահովման գործընթացներում՝ համաձայն «Որակի ապահովման և կառավարման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովման կարգի», որը մշակվել է բարելավման ծրագրի շրջանակներում:

Համաձայն ինքնավերլուծության ՀԱԱՀ-ի ներքին (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմ) և արտաքին (շրջանավարտներ, դիմորդներ, գործատուներ և այլն) շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, մասնավորապես՝

- ինքնագնահատման գործընթացներում,
- շահակիցների կարիքների գնահատման գործընթացում (անկետավորում),
- համալսարանի ներքին աուդիտների իրականացման գործընթացում,
- արտաքին գնահատման գործընթացում և այլն:

ՀԱԱՀ-ի ուսանողները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում նախ և առաջ կառավարման տարբեր մարմիններում իրենց մասնակցությամբ:

ՀԱԱՀ-ի դասախոսական կազմը ներգրավված է՝

- գիտական խորհրդին կից որակի վերահսկման հանձնախմբում,
- ՄԿԾ-երի վերանայման և մշակման գործընթացում,

Արտաքին շահակիցները (գործատուներ, աշխատաշուկայի ներկայացուցիչներ, պետական համակարգի ներկայացուցիչներ, շրջանավարտներ) ներգրավված են որպես պաշտոնական մասնակիցներ կառավարման խորհրդում (ձայնի իրավունքով):

Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացում կրում է անհատական նախաձեռնության մակարդակ, և այն համակարգված չէ: Ինչպես նաև համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացում արտաքին շահակիցների պաշտոնական կարծիքները բացակայում են:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՀԱԱՀ-ն վերլուծելով համալսարանի գործունեությունը՝ որդեգրած նոր առաքելության և նպատակների, համալսարանից պետության և հասարակության պահանջների, ագրարային ոլորտի աշխատաշուկայի արդի կարիքների շրջանակում, ապա դժվար է փաստել, որ համալսարանի որակի ներքին ապահովման բարելավման գործընթացները միտված են եղել ապահովելու համալսարանի գործունեությունը նշված պահանջներին: Հիմնական խնդիրը եղել է ոչ թե քաղաքականությունների կամ կանոնակարգերի բացակայությունը կամ թերի լինելը, այլ կառավարման համակարգում և ընդհանրապես բուհական համակարգում չի գերիշխել որակի մշակույթը: Որակի ապահովման գործընթացներ իրականացնելու խնդիրը մինչ այժմ ավելի շատ դիտվել է որպես արտաքին (ՈԱԱԿ, կրթության նախարարություն և այլն) պահանջ, քան՝ բուհում որակի ապահովման մշակույթի տարածման անհրաժեշտություն:

ՀԱԱՀ-ի Որակի ներքին ապահովման համակարգի վերանայմանն են ուղղված տարբեր միջազգային նախագծերի և դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերը՝ Գերմանիայի դաշնության Ֆուլդայի և Կասսելի համալսարաններ. «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում Որակի ապահովման և կառավարման ոլորտում փորձի ձեռք բերում: Շվեդիայի Լինկոպինգի համալսարանում «Արմենքա» ծրագրի շրջանակներում վերապատրաստում: «Գովերն» ծրագրի շրջանակներում վերապատրաստումներ:

Սակայն պետք է նշել, որ շահակիցների շրջանում անցկացվող հարցումների հարցաշարերի և հարցազրույցների մեթոդաբանության վերանայման կարիք կա, քանի որ նախկինները լիովին չէին վերհանում կարևորագույն խնդիրները: ՀԱԱՀ-ի ՈԳԱ-ն այս ուսումնական տարվանից սկսած փորձում է ամբողջովին թարմացնել հարցումների և հարցազրույցների բովանդակությունը, ինչպես նաև դրանց վերլուծությունների մեթոդաբանությունը:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Ըստ ինքնավերլուծության Համալսարանի նոր ղեկավարությունը նոր մոտեցումներ և պահանջներ ունի որակի ապահովման ներքին համակարգի նկատմամբ, որը արտահայտված է համալսարանի բարեփոխումների զարգացման ծրագրում:

Պետք է նշել, որ համալսարանի կողմից հնարավորինս օբյեկտիվ ինքնավերլուծություն էր ներկայացված, չնայած SWOT վերլուծությունները հստակ պատկեր չէին ապահովում:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Ըստ ինքնավերլուծության Համալսարանի գործունեության թափանցիկությունը ուղղակիորեն կապվում է համալսարանի հաշվետվողականության հետ: Կարևորելով գործընթացի

բարելավման շարունակականության ապահովումը, համալսարանի 2020-2024 թթ ռազմավարական ծրագրով որպես ԳԱՑ ներկայացված է թափանցիկ կառավարման համակարգի առկայությունը:

Սակայն փորձագիտական խմբի այցից պարզվեց, որ հարցումների վերաբերյալ վերլուծություններ չեն տրամադրվում շահակիցներին, դրանց արդյունքում շահակիցները հստակ չեն պատկերացնում, թե իրենց կարծիքների հիման վրա ինչ փոփոխություններ են կատարվել համալսարանում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՀԱԱՀ-ի ջանքերն ուղղված որակի ներքին ապահովման համակարգի ներդրմանը, շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը: ՈԳԱ նոր կենտրոնը իր գործունությունը ծավալելու համար ունի ազատության մեծ շրջանակ, որը հնարավորություն է տվել այդ կառույցին կարճ ժամանակահատվածում բազմաձավալ աշխատանքներ կատարել:

Դրական է այն հանգամանքը, որ ՀԱԱՀ-ը տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ որակի ապահովման գործընթացների կառավարման նպատակով, ՈԳԱ կենտրոնի ներսում առանձնացնելով երկու բաժիններ՝ Որակի ապահովման և Կրթական բարեփոխումների:

Չնայած ՀԱԱՀ-ում որակի մշակույթը դեռևս կայացման փուլում է, և ՊԻԳԲ շրջափուլը ամբողջովին փակված չէ, այնուամենայնիվ կատարված աշխատանքներից ելնելով, փորձագիտական խումը նկատեց, որ ՀԱԱՀ որակի ապահովման մի շարք գործընթացներ գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում, ինչն էլ կնպաստի գործընթացների որակի շարունակական լավացմանը, խնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը:

Որակի մշակույթի տարածման նպատակով՝ փորձագիտական խումբը կարևոր է համարում արտաքին և մասնավորապես ներքին շահակիցների ակտիվ և լայանածավալ ներգրավումը՝նպաստելով ոլորտի խնդիրների դուսրբերմանը և բուհի տարբեր ոլորտների շարունկական զարգացմանը:

Հարկ է նաև շեշտադրել առկա բազմաթիվ չգործող փաստաթղթերի վերնայման և համակարգման աշխատանքները, որը պլանավորման փուլում է:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքների կանոնակարգման համար մշակված են հայցեկարգ և ձեռնարկ, առկա են որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, ՈԳԱ բաժնի աշխատանքների իրականացման համար ՀԱԱՀ-ը տրամադրում է նյութական և մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև ՈԳԱ բաժնի աշխատակիցները մոտիվացված են, որակի ապահովման գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի տարբեր մակարդակներում, ՈԳԱ բաժնի աշխատանքների վերաբերյալ տրվում է թափանցիկ հաշվետվություն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀԱԱՀ-ը բավարարում է Չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում և վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Չի բավարարում**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Չի բավարարում**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Բավարարում է**

14.04.2020

_____

Հերմինե Գրիգորյան, փորձագիտական խմբի ղեկավար

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՀերմինեԳրիգորյան՝ 1992 թ. Ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: Ֆիզմաթգիտությունների թեկնածո ւէ (2008), դոցենտ (2011): 1992 թվականից դասավանդում է Վանաձորի Պետական Համալսարանում /ՎՊՀ/: 2014 թվականից ՎՊՀ Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկանն է: Վարում է «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմպլեքսանալիզ», «Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ» դասընթացները: Զբաղվում է փոփոխական հաստության անիզոտրոպսալերիեզրային խնդիրների հարցերով:

Մենուա Սողոմոնյան- 2004 թ.-ին ավարտել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: 2004-2007թթ. Սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 2015 թ-ին ստացել է դոցենտի գիտական կոչում: 2011-2019թթ. Աշխատել է որպես ԵՊՀ գիտականքարտուղար: 2008 թ-ից առ այսօր դասավանդում է ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնում:

Կարեն Թոչունյան- 2011թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանաի Կենսաբանության ֆակուլտետը: 2011-2014թթ. սովորել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 2013-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2017-ին կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2015թ.-ից եղել է ԵՊՀ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ է, 2019-ից՝ դոցենտ: 2015թ.-ից ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրենն է, կենսաբանության ԳՀ ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող: Հեղինակ է ավելի քան 70 գիտական աշխատությունների:

Ռոմեյն Հուլպիա-հոգեբանական և մանկավարժական գիտությունների մագիստրոս է: Ունի փիլիսոփայական և մանկավարժական գիտությունների դոկտորին համապատասխան որակավորում՝տրված Գենտի համալսարանի կողմից, հիմք ընդունելով գիտական հոդվածները: Աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրել է մի շարք պաշտոններ, որոնք են՝ ա)խորհրդատու «MedicalSocial» կենտրոնում, բ)բանկային ծառայություն հետևակի սպա, գ) կառավարման դասընթացավար, վերապատրաստող «General Motors» Անտվերպեն 1970 թ.: «Կրթական քաղաքականություն»և « Կրթական փորձ» դասընթացների պատասխանատուն է եղել Գենտի համալսարանի հոգեբանության և կրթական գիտությունների ֆակուլտետում շուրջ 21 տարի, ֆլեմանդական կրթության՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման ծրագրի ղեկավարը, Բոսնիա և Հերցեգովինայում գտնվող համալսարանների՝«Որակի ապահովման համակարգի» ներդրման խմբի անդամ, ինչպես նաև երկու փորձագիտական այցի ղեկավար նույն երկրում: Հոլանդա-Ֆլամանդական հավատարմագրման ասոցացիայի կողմից 20 նոր կրթական ծրագրերի հավատարմագրման ղեկավար, Որակի ապահովման բելգիական

VLHORA և VLHUR, ինչպես նաև NVAO կազմակերպության փորձագետ: Ինչպես նաև հանդիսանում է «Janusz Korczak» հասարակության նախագահ:

Գայանե Քոսակյան- Երեվանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդհանուր բժշկության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի է: Մասնակցել է ՈԱԱԿ ուսանողության ձայն նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
09–13.12.2019թ.

	09.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ՀԱԱՀ ռեկտորի հետ	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:25	11:25	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:35	12:20	45 րոպե
4	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ	12:35	13:20	45 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6	Հանդիպում ՀԱԱՀ գործատուների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	14:40	15:40	60 րոպե
7	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	15:50	16:50	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե

	10.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում Կառավարման խորհրդի ներկայացուցիչների հետ	09:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում Ուսումնական գործընթացի կառավարման վարչության, ուսումնական գործընթացի համակարգման, ուսումնամեթոդական բաժինների և լեզվի ուսուցման կենտրոնի ներկայացուցիչների հետ	10:25	11:35	60 րոպե
3	Հանդիպում ամբիոնների վարիչների ներկայացուցիչների հետ (12-15 հոգի)	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5	Հանդիպում դասախոսական կազմի	14:00	15:00	60 րոպե

	ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)			
6	Այց դեկանատներ, փաստաթղթերի ուսումնասիրություն	15:10	16:10	60 րոպե
7	Այց ամբիոններ, փաստաթղթերի ուսումնասիրություն	16:20	17:20	60 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	19:00	90 րոպե
	11.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	9:30	10:10	40 րոպե
2	Հանդիպում բակալավրիատի ուսանողների հետ /առկա և հեռակա/ (12-15 հոգի)	10:20	11:20	60 րոպե
3	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների հետ /առկա և հեռակա/ (12-15 հոգի)	11:30	12:30	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5	Այց ամբիոններ, փաստաթղթերի ուսումնասիրություն	13:50	15:30	100 րոպե
6	Հանդիպում ստորաբաժանումներում (Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, Ֆինանսական վարչություն, Մարկետինգի զարգացման բաժին, գիտական աշխատանքների համակարգման բաժին)	15:40	17:00	80 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	19:30	140 րոպե
	12.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, համակարգչային սրահներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ, բուֆետ, այց գիտական կենտրոններ)	09:30	10:50	80 րոպե
2	Հանդիպում Վանաձորի մասնաճյուղի տնօրենի հետ	11:00	11:40	40 րոպե
3	Հանդիպում մասնաճյուղի վարչական և	11:50	12:30	40 րոպե

	ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների հետ			
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (բակալավր, մագիստրատուրա, առկա, հեռակա) (10-12 հոգի)	13:40	14:20	40 րոպե
6	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	14:30	15:10	40 րոպե
7	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, լաբորատորիաներ, համակարգչային սրահներ, կաբինետներ, գրադարան, մարզասրահ, բուժկետ, բուֆետ, այլ գիտական կենտրոններ)	15:20	16:30	70 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	19:00	140 րոպե

	13.12.2019թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում Որակի գնահատման և ապահովման կենտրոնի, Կրթական բարեփոխումների, Որակի կառավարման բաժինների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ստորաբաժանումներում (Միջազգային կապերի դեպարտամենտի, միջազգային կապերի համակարգման, դրամաշնորհային ծրագրերի համակարգման, միջազգային գիտական ծրագրերի համակարգման բաժինների հետ)	10:40	11:40	60 րոպե
3	Բաց հանդիպում	11:50	12:30	40 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:40	13:40	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:40	17:40	180 րոպե
7	Հանդիպում բուհի ռեկտորի հետ	17:50	18:20	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ֆոկուս խմբերի հանդիպումների արձանագրություններ վերջին 2 տարիների համար, բենչմարկինգի արդյունքներ /ՄԿԾ փաթեթներ/	3
2.	Ուսանողների հարցումների քանակական և որակական վերլուծություններ	3
3.	Վերջին երեք տարիների ամփոփիչ ատեստավորման հանձանաժողովների հաշվետվությունները 3 ՄԿԾ-ների համար	3
4.	DUAL և խոշորացրած կրթական ծրագրերի ուսումնական պլանները	3
5.	Դասախոսների ծանրաբեռնվածության կազմանն նորմեր	5
6.	Ուսանողների խորհրդատվության գրաֆիկներ	4
7.	ՈԽ և ՈԻԳԸ նիստերի արձանագրությունները	4
8	Ուսանողների ինքնուրույն աշխատանքներ 3 ՄԿԾ-ների շրջանակներում	4
9.	Ուսանողների ավարտական աշխատանքներ /հետակա, առկա, բակալավրիատ, մագիստրատուրա/	4
10.	Դասախոսական կազմի գնահատման հանձնաժողովի և որակի բաժնի կողմից ստացված արդյունքների արձանագրություններ	5
11.	ERASMUS+ ծրագրի շրջանակներում Համալսարան ասպիրանտների (հետազոտողների) շարժունության թիվը և արդյունքները, որոնք գործընկեր համալսարաններում իրականացնում են իրենց հետազոտության մի մասը։ Հետազոտություններ	6
12.	Հոգաբարձուների խորհրդի և գիտ խորհրդի նիստերի արձանագրություններ վերջին 3 տարիների համար	2
13.	Ամբիոնների և ֆակուլտետների տարեկան հաշվետվություններ վերջին 3 տարիների համար	2
14.	Հաշվետվությունների արդյունքում ի՞նչ բարելավումներ են կատարվել վերջին 3 տարվա ընթացքում:/ Համապասխան փաստաթղթեր	9

15.	Կրկնակի դիպլոմի նմուշ	9
16.	2019 թ. Բյուջե	7
17.	Հաստիքացուցակ	5
18.	Հարցումների արդյունքներ վերջին 2 տարիների	10
19.	Հանդիպումների ֆոկուս խմբերի արձանագրություններ	10
20.	Հոդվածներ համակարգված ձևով	6
21.	Շուկայի ուսումնասիրություն(կաթ, ագրոբիզնես 2013-2016թթ.)	2
22.	Պրակտիկայի ծրագիր 2011թ.	3
23.	Գրադարանի տարեկան հաշվետվություն	7
24.	Կենսաբանության և կենսատեխնոլոգիաների ամբիոնի գիտական աշխատանքների հրապարակումներ	6
25.	Բարելավման պլանի հաշվետվություն	2
26.	Վերապատրաստման համար նպատակահարմար հաստատությունների ցանկը ըստ ֆակուլտետների	5
27.	Դասախոսների միջին տարիքը հաստատված	5
28.	« Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա » մասնագիտությունների դիպլոմային աշխատանքներ	3
29.	«Խմորման արտադրություն տեխնոլոգիա և գինեգործության» մասնագիտությունների դիպլոմային աշխատանքներ	3
30.	Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ուսանողական գիտաժողովի փաստաթուղթ	3
31.	Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ	2
32.	Անասնաբուժություն, ագրոնոմիա, պարենամթերքի տեխնոլոգիա ուսումնական պլան	3
33.	Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսական հաշվետվություն.Ամբիոնի արտադրական պրակտիկայի անցկացման ուղեցույց	7
34.	Միջազգային ծրագրերին առնչվող հաշվետվություն	9
35.	Անասնաբուժություն ՄԿԾ հրաման	3

36.	Բակալավրի կրթական ծրագրով գործունեության լիցենզիա	3
37.	Վեբ կայքի հաշվետվություն	7
38.	Գիտական կենտրոնների ներկայացուցիչները և հոդվածները	6
39.	Ագրոնոմիական ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերություն ծրագի ուսանողական xx գիտաժողովի ապրիլ 10,11,12	6
40.	Կայք էջի հայտարարություններ թափուր հաստիքներին առնչվող	7
41.	ՀաշվետվությունՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկմանարդյունքների վերաբերյալ2016 թ.	4
42.	Հաշվետվությունսոցիալական հարցման արդյունքների (առաջին կուրսի ուսանողների եվ շրջանավարտների կարիքների գնահատում -2017)	10
43.	Հաշվետվություն ՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ 2018 թ	10
44.	ԴասախոսականկազմիհամալրումՀայաստանիազգայինագրարայինհամալսարանում /հայտարարություն	5
45.	Ամբիոնիվարիչներիկողմիցիրականացրած SWOT վերլուծություն	10
46.	Ուսանողներիկարծիքըամբիոններիդասախոսներինդասավանդվողառարկաների վերաբերյալ	10
47.	Սղագրություններ ՌԾ-ին առնչվող	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Դեկանատներ (պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի, Ագրոնոմիական ֆակուլտետի)
3. Ամբիոններ
4. Ստորաբաժանումներ (Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, Ֆինանսական վարչություն, Մարկետինգի զարգացման բաժին, գիտական աշխատանքների համակարգման բաժին)
5. Լաբորատորիաներ
6. Կաբինետներ
7. Գրադարան
8. Ընթերցասրահ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ- Հայաստանի հանարապետություն
2. ՀԱԱՀ-Հայաստանի ազգային ագրարային համալսարան
3. ՄԿԾ-մասնագիտության կրթական ծրագիր
4. ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն
5. ՈԱ-Որակի ապահովում
6. ՈԱԱԿ-«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»հիմնադրամ
7. ՊԴԿ-պրոֆեսորադասախոսական կազմ
8. ՌԾ- Ռազմավարական ծրագիր
9. ՌՊ-Ռազմավարական պլան
10. ՈՒԽ-Ուսանողական խորհուրդ
11. ՈՒԳԸ-Ուսումնական գիտական ընկերություն